

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ





№5(1590) ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007

Հ.Յ.Դաշնակցութիւնը հայկական նոր ասպետութիւնն է:
Ելէք, ելէք, ժողովուրդ հայոց,արշանագրուեցէք հայկական նոր ասպետութեան, թեւ թիկունք տուեվ անոր, զի խաչին եւ մահին հետ՝ փրկարար է նաեւ ասպետին սուրը:

Խրիմեան Հայրիկ

ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ







Խմբագրական

4 *“Դրօշակ” -ի հարցերին պատասխանում են Վահան Հովհաննիսյանը եւ Արմեն Ռուստամյանը*

Միջազգային իրավունք

12 *Օսմանյան կայսրության անդամահատման ակտը եւ Հայաստանի ճակատագիրը*

Խորհրդարանական կյանք

18 *Նոր մոդել արժեթղթերի շուկայում*

Տարածաշրջան

24 *Արեւելյան անցյալ թե արեւմտյան ներկա.փոխված խաղադրույքներ քաղաքական պարագլուխների համար*

Տնտեսություն

27 *ԱՄՆ ՀՀԿ համակարգը .հեռանկարներ հարավկովկասյան ուղղությամբ*

Համաշխարհայնացում

34 *Գլոբալիզացումը կամ աղքատության համաշխարհայնացումը*

Դաշնակցական լեռ

42 *Հայերի ցեղասպանությունը Կ.Պոլսի « Ճակատամարտ » օրաթերթի նյութերում (1918թ.)*

Խմբագրի անկյուն

46 *Ով է, ումից վախենում*

Թերթերով “Դրօշակ” -ի էջերը

49 *Ինչ է գրել “Դրօշակը” 100 տարի առաջ*

Նոր գրքեր

51 *Նոր աշխարհակարգը եւ Հայաստանը Հիշատակի պատը*

“Դրօշակ” -ի պատկերասրահ

52 *Հրանտ Թադեւոսյան*

“Դրօշակ” ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցություն:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

“ Droshak” monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԱՐ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐ

2007 թ. սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյի եւ Հայաստանի ԳՄ-ի ներկայացուցիչ ընկերների եւ ՀՀԾ ղեկավարության հանդիպումը: Հանդիպումը կայացավ Լեւոն Տեր-Պետրոսյանի խնդրանքի հիման վրա, որով ՀՀ առաջին նախագահը ցանկություն էր հայտնել անձամբ հանդիպել ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանի հետ: Խորհրդակցություններից հետո ընթացք տրվեց դիմումին, որովհետեւ մերժելը ոխակալություն էր նշանակելու եւ քաղաքական ներկայի պայմանների ու չափանիշների դիտանկյունից չէր թարգմանվի որպես քաղաքական կեցվածք:

Այցը անակնկալ մատուցեց Հայաստանի քաղաքական դաշտին եւ բազում հակազդեցություններ դրսեւորվեցին մամուլում:

ՀՀԾ-ական շրջանակները, իհարկե, դրականորեն արձագանքեցին անակնկալին: Տարիներ շարունակ «դաշնակ-դաշնակիզմ» արհամարհական բառակապակցություններով եւ մաշված հին հանգերգներով ողողված ՀՀԾ-ամետ թերթերում հանկարծ ի հայտ եկան «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» ամբողջական անվամբ վերտառություններ, բարի խոսքեր, մաղթանքներ եւ այլն, ինչը, նաեւ, իր հերթին, անակնկալ մատուցեց մեզ: Հակադաշնակցական բուռն հոդվածներով հանդես եկող «Հայկական ժամանակը» իր 2007 թ. հոկտ. 1-ի համարի առաջին էջում գրեց, որ Դաշնակցությունը ապացուցեց իր քաղաքական ինքնուրույնությունը: Իսկ հանդիպման դրդապատճառները շատ իրապաշտական բանաձեւեց «Ժամանակ Երեւանը», իր 2007 թ. հոկտեմբեր 3-ի համարում. «...առավել խորաթափանց դիտորդները կարծում են, որ սա մեղքերի թողության նման մի բան էր հիշեցնում՝ նախկին նախագահը, փաստորեն, սրանով ասում էր, որ հասկացել է իր սխալը»:

Իշխանությունների ռեակցիան շատ հետաքրքրական էր այդ հարցում: Որպես անմիջական

քայլ հանդիպման լուրին, «Երկիր Մեդիայից» բացի, չարձագանքեցին մյուս հեռուստակայանները: Ավելի ուշ, երկրորդական կարգով, լուրը տրվեց, սակայն առանց մեկնաբանությունների, ինչը, մեր հեռուստատեսային լրատվության առկա մտակեցվածքով, կիրառվում է հազվադեպ պարագաներում, երբ հարցը չափազանց խորհրդավոր է կամ էլ դրա մասին գոյություն չունի կանխակալ վերաբերմունք:

Ահա թե մենք ինչպես ենք մոտենում քաղաքական այս փաստին.

ա. ՀՀ առաջին նախագահը մտադիր է ակտիվանալ եւ վերադառնալ քաղաքական դաշտ: Ենթադրում ենք, որ նա գերազանց գիտակցում է անցյալի սխալները խոստովանելու եւ դրանք մի կերպ սրբագրելու անհրաժեշտությունը՝ որպես վերադարձի բարոյական նախապայման: Այս անակնկալ քայլով, փաստորեն, նա նախնական փորձ կատարեց սրբագրելու իր իշխանության շրջանի ամենակոպիտ սխալներից մեկը:

բ. ՀՅ Դաշնակցությունը, անկախ անցյալի եւ առաջիկա պետական ընտրությունների արդյունքներից, ձգտում է Հայաստանի քաղաքական դաշտը զտել ապաքաղաքական երեւույթներից, այդ թվում ոչ քաղաքակիրթ բարքերից, զգացական հակազդեցություններից եւ ոխակալական նախապաշարումներից: Դաշնակցությունը իր այս ձգտումը իրականացնելու համար բավականին թանկ գին է վճարել: Մենք, իհարկե, չենք տառապում մոռացկոտությամբ, ինչպես տեղին հիշեցրեց դաշնակցական մեր ընկերը, սակայն, մեր գլխին եկած այդ բոլորից հետո, Դաշնակցությունը երբեք չդիմեց բռնարարքների (ինչի համար նրա դեմ մեղադրանքներ էին հորինում) եւ երբեք չգնաց զգացական քայլերի: Իսկ հիմա էլ կիրառելով անոխակալ կեցվածք, Դաշնակցությունը եւս մի հիմնարար գործ կատարեց մեր երկրին այնքան հարկավոր «քաղաքական մշակույթի» ձեւավորման ուղղությամբ:

գ. Պետական պատասխանատուները, այրերը, որոնք իրենք պիտի հանդես գան «քաղաքական մշակույթի» նախագծողի դերում ու նախանձախնդիր կերպով ողջունեն այս ուղղությամբ առնվող յուրաքանչյուր քայլ, այս դեպքում, չգիտես ինչու, չդրսեւորեցին համապատասխան կեցվածք եւ միայն հասցրին իրենց զարմանքը թաքցնել սառը անտարբերությամբ: Ցավոք, թվում է, որ նրանց համար ավելի առաջնային են առաջիկա քաղաքական հաշվարկներն ու անմիջական շահերը, քան պետական սկզբունքայնությունը եւ երկրի հեռահար շահերը:

դ. Ինչքան էլ անակնկալի գան ընդդիմության ուժերը, ինչքան էլ զարմանան, բայց անտարբեր ձեւանան իշխանություններն ու նրանց կապված քաղաքական ու ապաքաղաքական ուժերը, Դաշնակցության այս քայլը բխում է հենց նրա «այլընտրանքային» դիրքորոշումից, որի մասին բազմիցս հայտարարել է նա: Իրոք, մենք ոչ միայն չենք մոռանում պատմությունը, այլ, բնականաբար, նաեւ մոտ անցյալը: Հիմնականում խորհրդարանական նոր դասավորությունը մղեց Դաշնակցությանը որդեգրելու «այլընտրանքային» դիրքորոշումը: Իսկ ապագա նախագահական ընտրությունների կապակցությամբ վերջերս հնչած կանխակալ տեսակետները առավել հաստատակամ դարձրեցին Դաշնակցությանը իր այս դիրքորոշման մեջ: Թերեւս ավելորդ չենք համարում հիշեցնելու, որ Դաշնակցության քաղաքական ինքնուրույնության եւ անկախ կողմնորոշման վաղեմի վարքագծի հիմքում ընկած է մեր ազգային եւ պետական շահերի խոր իմացությունը, եւ այս իմացությամբ են կատարվելու Դաշնակցության բոլոր քայլերը:

"Դրօշակ" - ի հարցերին պատասխանում են նախագահության ՀՅԴ թեկնածուներ Վահան Հովհաննիսյանը և Արմեն Ռուստամյանը

Անձամբ ես միայն ուրախ կլինեմ, եթե կուսակցությունը որոշի, որ մեր թեկնածուն Արմեն Ռուստամյանն է: Եվ շատ հպարտ կլինեմ, եթե որոշի, որ ես եմ: Երկուսս էլ ունենք առանձնահատկություններ, որ կարող են օգտակար լինել, նաև ունենք առանձնահատկություններ, որ բացասական դեր կարող են խաղալ: Կուսակցության մեր ընկերների, համակիրների և նաև Հայաստանի քաղաքացիների գործն է՝ որոշել, թե ո՞ր դրական կողմերն են գերակշռող և ո՞ր բացասական գծերը էական: Եվ վերջապես, մարտավարական առումով ո՞ր թեկնածուն է առավել նպատակահարմար:

Վահան Հովհաննիսյան

Մեր տարբերությունները ավելի են հարստացնելու ու բազմազան դարձնելու մեր ընդհանուր գինանոցը: Իսկ մեր ընդհանուր գինանոցը Դաշնակցության գինանոցն է: Հանուն Դաշնակցության, վստահեմ, երկուսս էլ ամեն ինչ կանենք, որ կուսակցության գործը շահի այս ձևի մեջ: Մեր անցած ճանապարհին բազմաթիվ են եղել փորձությունները, գայթակղությունները, որոնք հաղթահարվել են: Եվ հաղթահարվել են ոչ միայն մեր անձնական հատկանիշների շնորհիվ, այլև այն ավանդույթների, որով հարուստ է մեր կուսակցությունը:

Արմեն Ռուստամյան

«Դրօշակ» - Նախագահական առաջին ընտրությունների ընթացքում ՀՅԴ-ն լայնորեն կիրառեց քարոզչական բոլոր այն միջոցները, որ վաղուց ի վեր օգտագործվում էին ժողովրդավարական երկրներում. մեծադիր պաստառներ, դիմանկարներ, կարգախոսներ, գրիչներ, շապիկներ և այլն: Այն օրերին քարոզչական այդ միջոցները, սակայն, իրենց արտասովորությամբ, նորությամբ, թերևս նաև երկրի սոցիալական վիճակի հետ անհամապատասխանությամբ, հակառակ ազդեցություն գործեցին: Այսօր, երբ բոլոր տեսակի ընտրություններում քարոզչական այդ միջոցներն իրենց շռայլությամբ ու ծախսալիությամբ, նույնիսկ, գռեհիկ ծայրահեղությունների են հասնում, ոչ ոք չի հիշում Դաշնակցության հասցեին ժամանակին հնչած հանիրավի մեղադրանքները:

Հիմա ՀՅԴ-ն մի այլ քայլ է անում՝ ներկուսակցական և հասարակական քննարկման է ներկայացնում երկու թեկնածություն, ինչը, նույնպես, վաղուց ի վեր սովորական գործընթաց է աշխարհի ամենատարբեր երկրներում: Անշուշտ, այս նորամուծությունն էլ հետագայում կդառնա սովորական, սակայն, չե՞ք կարծում, որ ՀՅԴ այսօրինակ քայլերից եթե ժամանակի ու տարածության մեջ շահում է հասարակությունը, ապա պատմական այս կամ այն պահին տուժում է ինքը՝ Դաշնակցությունը:

Վ. Հ. - Իմ կարծիքով՝ նախագահական առաջին ընտրությունների ժամանակ մենք առնչվում էինք այլ երևույթի և այլ Հայաստանի հետ: Երկու տարբեր Հայաստաններ են՝ երեկվանը և այսօրվանը: Այն օրերին շատ կարևոր էին և անհրաժեշտ ժողովրդավարության թեկուզև արտաքին դրսևորումները, այդ պաստառները, շապիկները և այլն: Ժողովրդավարությանը ընտելացնել էր պետք: Եվ այս խնդիրն իր վրա վերցրեց Դաշնակցությունը: Նորարարը ինքն էր: Եվ ինքն էլ պիտի ստանար սովորության ուժի հարվածը: Ի վերջո ինչպիսի՞ ընտրական համակարգի էին ծանոթ ոչ միայն հայերը, այլև Խորհրդային Միության բոլոր քաղաքացիները: Դա մի համակարգ էր, որտեղ իսպառ բացակայում էր ընտրություն ասածը:

Այսօր փոքր-ինչ այլ պատկեր է. այսօր ավելի շատ գործ ունենք ժողովրդավարության խորքային դրսևորման հետ, ինչը ճանապարհ է ցույց տալիս և ոչ թե միայն արտաքին պաճուճանք: Այն, ինչ անում և անելու ենք հիմա, ուսանելի է ոչ միայն մեր կուսակցության համար: Գաղտնիք չէ, որ դեռևս անհասկանալի են շատ կուսակցությունների, քաղաքական անհատների առաջադրման սկզբունքներն ու մեխանիզմները մեր հասարակության մեջ: Կան քաղաքական գործիչներ, որոնք երևակայում են, թե իրենց ինչ-ինչ կուսակցություններ են առաջադրում, այնինչ առաջադրումը, մեղմ ասած, կատարվում է ընդամենը առաջադրվողի հոգում: Եվ կամ՝ առաջադրվողն իր շուրջ հավաքագրում է հասարակական փոքրիկ խմբավորումներ, միջակ կուսակցություններ և այսքանով ստեղծում պայքարի ճակատ:

Մենք որոշեցինք այլ ուղիով ընթանալ՝ փորձել հենց կուսակցության ներսում, ամենաժողովրդավարական եղանակով գտնել այն թեկնածուին, որն առավելագույնս կհամապատասխանի կուսակցության «սեփական թեկնածու» որակմանը: Կարծում եմ՝ սա է ճիշտ ճանապարհը, եթե, նույնիսկ, ճանապարհն անցնելիս, սովորության ուժը կրկին որոշ մտահոգություն առաջացնի:

Ա. Ռ. - Քաղաքական գիտակցության զարգացմանը, քաղաքական արժեքների կայացմանը առաջին հերթին պիտի նպաստեն քաղաքական ուժերը: Այս առումով, կարծում եմ, Դաշնակցությունը ճիշտ է վարվել նախագահական առաջին ընտրությունների ժամանակ և այսօր էլ շարունակում է ճշգրիտ մարտավարություն իրականացնել: Նորամուծությունները որոշակի ռիսկ, անշուշտ, պարունակում են, բայց կարևորը կուսակցության ցանած սերմերն են, որ արագորեն ծիլ են տալիս: Հիմա եթե փորձենք հիշեցնել, թե ինչեր էին ասում Դաշնակցությանը 91-ին, շատերը, նույնիսկ, կարող են ամաչել: Ես չեմ բացառում, որ հաջորդ ընտրություններին ի հայտ կգան քաղաքական նոր ուժեր, որոնք իրենց առաջադրումը՝ նախագահի թեկնածու կլինի թե պատգամավոր, կատարեն հենց այս կարգով, ինչպես մենք ենք հիմա կատարում: Ամենատարբեր շրջանակների հետ զրուցելիս շատերն են արդեն ասում, որ ճիշտ քայլ ենք անում: Համընդհանուր ընկալումից է կախված մեր քայլի հաջողությունը՝ պատմական այս պահին: Իսկ ռիսկ, իհարկե, կա, բայց այդ ռիսկը գնալով նվազում է:

«Դրօշակ» - Ասեկոսեներին շատ էլ ականջալուր չլինենք, սակայն ձեր մրցակցության շուրջ համառորեն երկու իրար հակադիր ենթադրություններ են շրջանառվում. առաջին ենթադրության հեղինակները կարծում են, որ այս մրցակցությունը կպառակտի կուսակցությունը, ամեն

մեկդ, իբր, երկրպագուների իր բանակը դուրս կբերի մյուս բանակի դեմ և յուրաքանչյուրիդ հաղթանակը կամ պարտությունը կդառնա կուսակցության պարտություն: Եվ երկրորդը, ըստ որի՝ ձեզանից յուրաքանչյուրը ամեն ինչ կանի, որ հաղթի մյուսը, այսինքն՝ կխուսափի պատասխանատվությունից կամ հնարավոր պարտությունից:

Ասեկոսեներին շատ էլ ականջալուր չլինենք, սակայն, այդուհանդերձ, մարդկային առումով, չկա՞ մտահոգություն ձեր մրցակցության առիթով: Ձեզանից յուրաքանչյուրը զգո՞ւմ է իր առավելությունն ու թերությունը մրցակցի համեմատությամբ: Ձեզանից յուրաքանչյուրը պարտության դառնություն կամ հաղթանակի հպարտություն չի՞ ապրելու ներկուսակցական ընտրությունից հետո:

**Վ. Հ. - Ասեկոսեներին, այո, առանձնապես ուշադրություն չդարձնենք, սակայն նաև հաշվի առնենք, որ դրանք կան և որոշ բացատրություն են պահանջում: Արմեն Ռուստամյանի հետ մենք ոչ գաղափարական տարաձայնություններ ունենք և ոչ էլ մարտավարական գործելակերպի, այսինքն՝ Հայաստանի զարգացման մեր տեսլականը բխում է Դաշնակցության պատկերացումներից, պլատֆորմից, որ մշակվել էր խորհրդարանական ընտրությունների նախօրեին և իր զարգացումն է ստանում նախագահականի համար: Մենք չունենք տարակարծություններ, որոնց շուրջ կարող են միավորվել թվացյալ կողմնակիցները կամ հակառակորդները: Ի՞նչ տարբեր բանակների մասին կարող է լինել խոսքը, երբ հենց մեր ընկերներն են այս փուլի համար նման որոշում կայացրել: Եվ նրանց խնդիրն է պարզել, թե իրենց իսկ առաջադրած թեկնածուներից որի միջոցով է ավելի դյուրին ու հաջող հասնել կուսակցության նպատակներին: Որևէ այլ պրոբլեմ ես չեմ տեսնում: *Անձամբ ես միայն ուրախ կլինեմ, եթե կուսակցությունը որոշի, որ մեր թեկնածուն Արմեն Ռուստամյանն է: Եվ շատ հպարտ կլինեմ, եթե որոշի, որ ես եմ: Երկուսս էլ ունենք առանձնահատկություններ, որ կարող են օգտակար լինել, նաև ունենք առանձնահատկություններ, որ բացասական դեր կարող են խաղալ: Կուսակցության մեր ընկերների, համակիրների և նաև Հայաստանի քաղաքացիների գործն է՝ որոշել, թե ո՞ր դրական կողմերն են գերակշռող և ո՞ր բացասական գծերը՝ էական: Եվ վերջապես, մարտավարական առումով ո՞ր թեկնածուն է առավել նպատակահարմար: Մեր միջև մրցապայքար դեռևս չի սկսվել և չի էլ սկսվելու:*

**Ա. Ռ. - Պարզապես ավելացնեմ, որ այս նախադեպը երևի պետք է դառնա դասական այն օրինակը, երբ տարբերությունները չեն ուռճանում, սրվում և ձնագնդի նման աճելով վերածվում հակասության կամ հակադրության: Մեր տարբերություններն այդ բնույթի չեն և չեն կարող այդ բնույթի լինել, ինչպես շատ ճիշտ նշեց ընկ. Վահանը: Մենք այնպիսի լուրջ միասնություն ենք, մենք այնպիսի խոր արմատներ ունենք, որ բացառված են նման կարգի մտահոգությունները: *Մեր տարբերությունները ավելի են հարստացնելու ու բազմազան դարձնելու մեր ընդհանուր գինանոցը: Իսկ մեր ընդհանուր գինանոցը Դաշնակցության գինանոցն է: Հանուն Դաշնակցության, վստահ եմ, երկուսս էլ ամեն ինչ կանենք, որ կուսակցության գործը շահի այս ձևի մեջ: Մեր անցած ճանապարհին բազմաթիվ են եղել փորձությունները, գայթակղություններ, որոնք հաղթահարվել են: Եվ հաղթահարվել են ոչ միայն մեր անձնական հատկանիշների շնորհիվ, այլև այն ավանդույթների, որով հարուստ է մեր կուսակցությունը: Եթե մտքովդ հանկարծ նման բան էլ անցնի, հաջորդ պահին ինքդ ամոթ կզգաս: Եվ կուսակցությունն ինքը թույլ չի տա գայթակղվել:*

Վ. Հ. - Ես մի բան ավելացնեմ. ասեկոսեները շատ արագ կմարեն այն պահից սկսած, երբ կուսակցությունն իր վերջնական որոշումը կայացնի: Եվ երբ որոշումը կայանա, բոլորը կտեսնեն, թե ինչպես է մեզանից այն մեկը, որ չի լինի վերջնական թեկնածու, վերածվում համար մեկ վստահված անձի և որքան է նա ջանք գործադրելու իր ընկերոջ հաղթանակի համար:

«Դրոշակ» - Թեև բնույթով տարբերվում են Ազգային ժողովի և նախագահական ընտրությունները, թեև նախագահականում ժողովուրդն ընտրում է անհատին և ոչ թե կուսակցությանը, սակայն ինչպես մեր իրականության մեջ, այնպես էլ գրեթե բոլոր երկրներում, անհատն առանց իր թիմի, որ մեր դեպքում կուսակցություն է կոչվում, հաջողության չի կարող հասնել:

ՀՅԴ հավաքած ձայները Ազգային ժողովի ընտրություններում բավարա՞ր պաշար են նախագահական ընտրություններում մեր թեկնածուի համար: Կուսակցու-

թյան քվեն՝ գումարած թեկնածու անհատի քվեն, կտա՞ անհրաժեշտ այն գումարը, որը պարտադիր է հաղթելու համար:

Ա. Ռ. - Կարևոր այս հարցը կանգնած է առաջադրվող բոլոր թեկնածուների առաջ: Եթե որոշել ես առաջադրվել, մի քանի հանգամանք անպայման պիտի հաշվի առնես. կա՞, արդյոք, հասարակական պահանջ քո առաջադրման համար: Ինչ-ինչ չափով, ինչ-ինչ տոկոսով կա՞, արդյոք, հիմք մտածելու, որ քո գաղափարները համահունչ են քո համակիր որոշ շրջանակների համար: Եվ ամենակարևորը, կա՞, արդյոք, մի այնպիսի կառույց, կազմակերպություն, հենարան, որը քեզ հնարավորություն կտա մտնելու ընտրապայքարի մեջ: Եվ այդ հենարանը քեզ կարո՞ղ է հնարավորություն տալ ավելի մեծ խնդիրներ առաջադրելու ընտրապայքարի ընթացքում, որպեսզի նախնական քո պաշարն աճի և ոչ թե նվազի, և դու աստիճանաբար դուրս չմղվես պայքարից: Այսինքն՝ ամենակարևոր խնդիրը քո մրցունակ լինելու հանգամանքն է: Այս առումով, կարծում եմ, խորհրդարանական ընտրությունների մեր արդյունքը շատ կարևոր խոսք արձանագրեց. Դաշնակցության գիտակցված քվեն բավական զգալի էր և դինամիկ աճ էր ունեցել: Մենք, որպես կուսակցություն, խորհրդարանական ընտրություններին ներկայացանք նախագահական ընտրություններին մեր սեփական թեկնածուն ունենալու մոտեցմամբ և, ուրեմն, գոնե մեզ համար, ընդգծեցինք երկու տարբեր ընտրությունների փոխկապակցությունը:

Վ. Հ. - Շատ ու շատ ընկերներ, մեզ համակիր շրջանակի ներկայացուցիչներ մտահոգություններ ունեին խորհրդարանական ընտրություններից առաջ: Նրանք կարծում էին, որ մեր վարկանիշը բարձր չի կարող լինել այն պարզ պատճառով, որ մենք մաս ենք կազմել իշխանությանը: Սակայն կյանքը ցույց տվեց, որ ժողովուրդը շատ ավելի լավ է հասկանում կուսակցությունների վարվեցողության բուն դրդապատճառները և ճիշտ գնահատեց Դաշնակցությանը: Չնայած հայտնի դժվարություններին, մենք, այդուհանդերձ, բավականին լուրջ աճ արձանագրեցինք: Իսկ խորհրդարանական ընտրություններից հետո, երբ հաշվի առնելով ԱԺ-ում ստեղծված ձայների բաշխումը, նպատակահարմար չգտանք սերտ կապեր պահպանել կոալիցիայի հետ, որոշ կասկածամիտներ կարծում էին, որ այդ քայլը բացասաբար կազդի մեր վարկանիշի վրա: Բայց ես վստահ եմ, որ մեր այս պահվածքն էլ ճիշտ է գնահատվելու և նպաստելու է Դաշնակցության վարկանիշի աճին, որովհետև Հայաստանում ավելի ու ավելի շատ մարդիկ են սկսում հասկանալ, որ Դաշնակցության գործունեությունը բացարձակապես պայմանավորված չէ արևի տակ առավել հարմարավետ տեղ գտնելու մղումով: Մեր մտահոգությունը Հայաստանի անվտանգությունն է և զարգացումը: Այս նպատակներին հասնելու համար մենք կաշխատենք ցանկացած ճամբարում՝ իշխանության հետ, ընդդիմության հետ, կամուրջի դեր կարող ենք ստանձնել և այլն:

Ա. Ռ. - Մեր այս կեցվածքը անփոփոխ էր խորհրդարանական նախընտրական շրջանից սկսած մինչև խորհրդարանական ընտրություններ և անփոփոխ է նաև հետընտրական այս շրջանում, որ նախորդում է նախագահականին: Սա կուսակցության սկզբունքայնության և հետևողականության նշանն է: Իսկ երկու թեկնածուների առաջադրումը նախընտրական այս փուլում, նաև արդյունք է այն իրողության, որ Դաշնակցությունը երբեք չի նույնացվել այս կամ այն լիդերի հետ: Մենք կոլեգիալ ղեկավարվող կուսակցություն ենք, մենք երբեք չենք զբաղվել լիդերաշինությամբ: Եվ, ուրեմն, բնական է, որ այսօր մեր ցանկացած թեկնածու ավելի պակաս վարկանիշ ունի, քան ինքը՝ կուսակցությունը:

«Դրօշակ» - Դաշնակցությունը, այո, երբեք չի զբաղվել «լիդերաշինությամբ», սակայն նրա պատմությունը ուղղակի գերբնակեցված է անհատականություններով:

Ա. Ռ. . - Մեր պատմությունը գերբնակեցված է անհատականություններով, որովհետև մեր ներկուսակցական միջավայրը ինքնադրսևորվելու անսահման ազատություն է տալիս: Դաշնակցությունը ժողովրդավարական լուրջ ավանդույթներով կուսակցություն է: Մեր ժողովներում, որևէ հարց քննարկելիս, բոլորը հավասարվում են: Չկա նախապես որոշված լիդեր, որը պիտի ուղղորդի ամեն տեսակի քննարկում: Անկաշկանդ միջավայրում են ի հայտ գալիս ազատ, ունակ մարդիկ: Լիդեր ասածը մեզանում ավելի շատ

ներկայացուցչի իմաստ է ունեցել. նա է պարտավորված եղել ներկայացնելու Դաշնակցության ասելիքը: Դաշնակցության, այսպես ասած, խոհանոցում, Դաշնակցության դարբնոցում են կոփվել և այսօր էլ կոփվում են անհատականություններ, որոնք իրենց ուժերի ներածի չափով ժողովրդի մտավոր, ինտելեկտուալ մակարդակի աստիճանն են փորձում բարձրացնել:

Վ. Հ. - Դաշնակցությունն, իրոք, իր պատմության ընթացքում տվել է այնպիսի դեմքեր, այնպիսի լիդերներ, ովքեր այսօր պարծանքն են ոչ միայն Դաշնակցության, այլև ողջ հայ ժողովրդի: Բայց Դաշնակցությունը այդ ե՞րբ է հնարավորություն ունեցել իր լիդերներին ազգային, պետական լիդեր դարձնելու: Գրեթե երբեք, որովհետև պետականություն չի ունեցել: Հայ ֆիդայիները չեն ընկալվում որպես դաշնակցական, կուսակցական հերոսներ: Նրանց մասին երգեր ժողովուրդն է հորինել և շատ հաճախ այդ երգերը հնչում են առանց կուսակցական պատկանելությունը հիշելու՝ լինի Գևորգ Չավուշը, Անդրանիկը, Նժդեհը, այլք... Երբ ստեղծվեց Առաջին Հանրապետությունը, կուսակցական լիդերները դարձան ազգային և պետական լիդերներ, բայց փորձառության ժամանակահատվածն այնքան կարճ էր, որ արդյունքը չերևաց: Իսկ դրանից հետո և գրեթե մինչև վերջերս Դաշնակցությունը եղել է կամ Հայաստանից արտաքսված, կամ արտակարգ իրավիճակում՝ Ղարաբաղյան պատերազմ, Հայաստանում հիշական արգելափակումներ և այլն: Եվ միայն վերջին տարիներին է, որ Դաշնակցությունը հնարավորություն է ստացել կուսակցական իր լիդերներին որպես համազգային, պետական գործիչ, համազգային լիդեր ներկայացնելու:

Ա. Ռ. - Դաշնակցության էության հետ կապված մի հանգամանք ևս նշեմ: Դաշնակցությունը ի վերուստ տրված հեղինակություն չի ճանաչում: Հեղինակությունը պետք է անընդհատ վաստակել: Դաշնակցության մեջ եղել են բազմաթիվ դեպքեր, երբ շատ մեծ հեղինակություն ունեցող մարդիկ դուրս են դրվել կուսակցությունից, որովհետև շեղում են թույլ տվել: Հեղինակություն ձեռք բերելը վերջնական ու անփոփոխ վիճակ չէ: Հեղինակությունը նաև պարտավորություն է:

«Դրոշակ» - Խոստովանեն թե ոչ, բայց Դաշնակցության թեկնածուն լուրջ այլընտրանք է իշխանության թեկնածուի նկատմամբ, եթե, անշուշտ, ամրանա հավատը, որ Դաշնակցությունն, իրոք, այլընտրանք է և ոչ թե իշխանությանն օժանդակող ուժ: Գաղտնիք չէ, որ այդ կերպ մտածողներն են հիմնականում կազմում հասարակության այն խավը, որտեղ տիրում է հիասթափություն, անտարբերություն, հուսահատություն: Այդ խավն է, որ կամ չի մասնակցում որևէ ընտրության, որովհետև համոզված չէ, որ իր քվեով որևէ բան կփոխվի, և կամ մասնակցում է՝ վաճառելով իր ձայնը, որովհետև կրկին համոզված չէ, որ եթե չվաճառի, որևէ բան կփոխվի:

Դաշնակցության այլընտրանքային թեկնածուն՝ իր այլընտրանքային ծրագրով, հիմնավորված խոստումներով, ապագայի իր տեսլականով, կարողանալո՞ւ է ամրացնել այդ հավատը, կարողանալո՞ւ է իշխանական զորեղ լծակներին հակադրել կուսակցական իր գաղափարախոսությունից բխող այն գործելակերպը, որի միջոցով մեր երկիրը ձերբազատվելու է առաջընթացը խոչընդոտող թերություններից ու արատներից:

Ա. Ռ. - Մենք ունենք շատ զորեղ կռվաններ, որ ժամանակի ընթացքում պիտի ի ցույց դնենք և ավելի ու ավելի հստակեցնենք մեր այլընտրանք լինելու հանգամանքը, այսինքն՝ միս ու արյուն հաղորդենք այլընտրանք հասկացությանը: Այլընտրանքի բաղադրիչները երեքն են՝ գաղափարական, քաղաքական և կենսակերպային: Այս բաղադրիչների համախմբով է Դաշնակցության թեկնածուն տարբերվելու և այս տարբերությունը շինծու չի լինելու: Գաղափարական առումով մենք, բնականաբար, շատ լուրջ տարբերություններ ունենք մեր բոլոր մրցակիցների համեմատությամբ: Դաշնակցությունը ունի հստակ գաղափարախոսություն, և այս հարցում ոչ ոք կասկած չունի: Մեր ազգայինն էլ է շատ հստակ, ընկերվարական մեր պատկերացումներն էլ: Օրվա խնդիրներին համահունչ մենք պիտի փորձենք ցույց տալ, որ մեր գաղափարախոսությունը կենսունակ է ու այժմեական: Քաղաքական բաղադրիչը ցուցադրելու է, մարտավարական իմաստով, մեր այն տարբերությունները, որ ունենք մեր իսկ գործընկերների համեմատությամբ: Մենք կողմնակից ենք վճռական, կտրուկ փոփոխություններով առաջ գնալու մարտավարությանը: Մենք կարծում ենք, որ որոշ հիվանդություններ պետք է բուժվեն վիրահատական եղանակով: Միշտ չէ, որ օգնում են դեղամիջոցները, թերապևտիկ մեթոդները:

Այո, որոշ ցավ կպատճառի վիրահատությունը, բայց հետո օրգանիզմը կառողջանա և կենսունակ կդառնա: Եվ երրորդը՝ որպես անհատ մեր կենսակերպը, աշխարհայացքը: Ի վերջո, երբ հասունանում է պահը ընտրելու, պիտի տեսնես անհատին, անձին: Պիտի դիտարկես թեկնածուի կերպարը. ի՞նչ կյանքով է նա ապրում, ի՞նչ հետաքրքրությունների շրջանակ, աշխարհայացք ունի, արդյո՞ք օժտված է ղեկավարելու, կառավարելու ձիրքով: Դաշնակցական թեկնածուի համար ոչ ոք չի կարող ասել, որ նա պահին հարմար ճամբարից ճամբար է փոխվել, աշխարհայացք է փոխել: Նույնիսկ ծայրահեղացված պատկերացումներ կան դաշնակցականի մասին. երբ ասում են՝ դաշնակցական ծնվում են: Ես կարծում եմ, մենք ունենք մեր ուրույն նկարագիրը, մեր ուրույն, առանձնահատուկ տեղը, դերակատարությունը: Նախագահական ընտրությունները լավ առիթ են Դաշնակցության առանձնահատկությունները, տարբերությունները ցույց տալու և դրանով մեր այլընտրանքը ընդգծելու համար:

Վ. Հ. - Իրականում, որպես այլընտրանք, բացի մեզանից ոչ ոք էլ չի կարող հանդես գալ: Սա, թերևս, լավ վիճակ էլ չէ, այլընտրանքների բազմազանությունը, կարծում եմ, օգտակար կլիներ մեր առաջընթացի համար: Այնինչ մեր քաղաքական դաշտը, չնայած մանր-մունր սահմանազատումներին, կտրտվածությանը, միավորումներին, ի վերջո, ներկայացնում է նրանց, ովքեր իշխանության են եղել մինչև 98 թվականը, և նրանց, ովքեր իշխանության են եկել 98-ից հետո: Ընդ որում՝ շատ էլ էական չէ, թե հետո նրանք ինչ դիրք են բռնել: Մենք իշխանություն չենք եղել 98-ից առաջ: 98-ից հետո տարբեր ձևաչափերով համագործակցել ենք իշխանության հետ՝ չունենալով ամբողջական իշխանություն, իշխանության մեջ նույնիսկ այն չափի դերակատարություն, լծակներին տիրապետելու այն չափի ներուժ, որ կարողանայինք վճռական դերակատարություն ունենալ: Այսուհանդերձ մենք երբեք չենք խուսափել պատասխանատվության այն չափից, որը համապատասխանել է մեր դերակատարությանը: Որպես այլընտրանք հանդես գալու հնարավորություն ունեցող որևէ այլ ուժ, այսուհանդերձ, ես չեմ տեսնում այսօր:

Ընկ. Արմենը հիմնականում ասաց, թե որն է մեր այլընտրանք լինելը:

«Դրօշակ» - Նախագահական այս ընտրություններում Դաշնակցությունը ակնկալում է քաղաքական դաշտի աշխուժացում և գաղափարախոսությունների մրցակցություն: Այս առումով ՀՀՇ-ի և նրա թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի հնարավոր մասնակցությունը ընտրական մրցասպարեզում, առաջին հայացքից, թվում է դրական ազդեցություն է գործելու:

Սակայն Հանրապետության առաջին նախագահի թե առաջին ելույթները և թե ընդդիմական դաշտի ու իշխանական ուժերի արձագանքները հուշում են, որ հասունանում է ընտրապայքարի երիցս ծանոթ այն տեսակը, երբ գաղափարախոսությունները գրեթե տեղ չեն ունենալու և շեշտը հիմնականում դրվելու է ներկայի ու անցյալի մեղքերի բացահայտման, մեղավորներին դատափետելու վրա: Ակնկալած գաղափարական քարոզչությունը ամենայն հավանականությամբ վերածվելու է ցեխարձակող հակաքարոզչության: Այս միտումը առավել ևս նկատելի դարձավ ՀՅԴ Հայաստանի կազմակերպության Գերագույն մարմնի գրասենյակ Լևոն Տեր-Պետրոսյանի այցից հետո: Հակաքարոզչության պայքարի առաջին բնագիծ Դաշնակցությանը մղելու «հասարակական» պահանջ է ձևավորվում թե մամուլում և թե քաղաքական ուժերի լաբիրինթոսում:

Լևոն Տեր-Պետրոսյանի որդեգրած քաղաքական սկզբունքներին, բնականաբար, դեմ լինելով, Դաշնակցությունը, ակամա, չի՞ հայտնվելու իշխանական թեկնածուի «քարոզչական» դաշտում:

Վ. Հ. - Եթե Տեր-Պետրոսյանը նույնիսկ չվերադառնար քաղաքականություն կամ գուցե չմտներ ընտրապայքարի մեջ, մենք, միևնույն է, երբեք չենք թաքցրել և չենք թաքցընելու, որ այս իշխանությունը նախորդի համեմատ առաջընթաց է արձանագրել: Եվ սա հավաստում ենք ոչ միայն այն պատճառով, որ մենք նույնպես եղել ենք գործընթացի ներսում և եղել ենք բարեփոխումների մասնակից, անշուշտ, մեր հնարավորությունների չափով: Մենք սա ասել ենք միշտ և ես, անկեղծ ասած, չեմ կարծում, որ եթե այսօրվա և նախկին իշխանությունների որոշ շրջանակների միջև պայքար սկսվի, ապա այդ պայքարը լուրջ գաղափարական բնույթ է կրելու: Մի կարևոր խնդիր գոյություն ունի. դա Ղարաբաղի հարցն է: Եվ այս հարցում մենք թաքցնելու որևէ բան երբեք չենք ունեցել: Եվ կամա թե ակամա ասելու ենք այն, ինչ ասել ենք միշտ: Ով այս

պայքարի մեջ կհայտնվի մեր կողքին, կողջունենք, բայց մենք չենք կարող փոխել մեր տեսակը և նույնանալ սրա կամ նրա հետ:

Ա. Ռ. - Մեր մարտավարությունը մենք կառուցելու ենք այն տրամաբանությամբ, որ կարողանանք ճշտել բանավեճի առարկան: Այդ առարկան պետք է վերաբերի երկրի հեռանկարին, ապագային, զարգացման ռազմավարությանը: Նախագահի ընտրությունը նշանակում է հստակեցնել, թե առնվազն հինգ տարի անց ինչպիսի Հայաստան ենք ունենալու: Եթե այս տրամաբանությամբ ենք մոտենում խնդրին, խուսափում ենք նման ռիսկերից, որովհետև մեկին մյուսից պաշտպանելու հարց չենք լուծում: Հնարավոր երկու թեկնածուների արանքում մենք ոչ դատավորի դեր ենք ստանձնելու, ոչ մեղադրողի և ոչ էլ իրենց համեմատելու խնդիր ունենք: Համեմատելու խընդիրը ժողովրդինն է: Այս պայքարի ընթացքում ժողովուրդը թող ինքը համեմատի: Եթե մեր ծրագրերից, մեր գաղափարներից բխող հաստատումներ կլինեն, մենք, բնական է, կողջունենք՝ որ կողմից էլ դրանք լինեն: Բայց եթե մեր ծրագրերին, սկզբունքներին, մոտեցումներին դեմ ինչ-ինչ հայտարարություններ հնչեն, պարզ է, որ անպատասխան չեն մնա: Կպատասխանենք քաղաքակիրթ բանավեճի միջոցով, առանց տրվելու մանրմունր հարցերի պարզաբանմանը, չկիրառելով քաղաքական բանավեճում անձնավորումների անթույլատրելի մեթոդը: Իսկ եթե պիտի համեմատվեն այս ռեժիմի տարիները նախորդ ռեժիմի հետ և այդ համեմատությունը կատարվի անաչառ, մենք դեմ չենք լինի: Թող լինի այդ համեմատությունը, ամեն մեկն իրեն պաշտպանի և այդ առողջ քննադատության ժամանակ կերևան բոլոր այն սխալները, որ կատարվել են երկրում: Սխալներ եղել են թե մինչև 98 թվականը՝ շատ ավելի, բնականաբար, ուղեգծի հետ կապված, և 98-ից հետո, մինչև հիմա: Եվ թող պայքարը հանգի նրան, որ այդ սխալները մենք անաչառորեն վեր հանենք և այլևս չկրկնենք: Մենք հենց դրան պիտի նպաստենք: Եթե այդպիսի իրավիճակ առաջանա, դեռ հարց է, թե ով ում քարոզչական դաշտում է հայտնվելու:

«Դրոշակ» - Մինչ այժմ ձեր վերլուծությունները հիմնականում ընթացան հայաստանյան քաղաքականության դիտանկյունից: Իսկ համաշխարհային կամ տարածաշրջանային գործոնների առումով ինչպե՞ս կընկալվի Հայաստանը իր դաշնակցական նախագահով:

Վ. Հ. — Ինչպես միշտ, ցանկացած գործոն ունենում է բացասական և դրական ազդեցություն: Հայաստանյան ցանկացած քաղաքական ուժ, որը դրսից դիտվում է որպես Հայաստանի իրական անկախացման և ինքնուրույնության կողմնակից, Հայաստանը, հայությանը միջազգային բեմերում ինքնուրույն դերակատար դարձնելու կողմնակից և ջատագով, այդ ուժով մեծ համակրանք չի կարող առաջացնել աշխարհում, բացառությամբ անկեղծ դաշնակիցների, որոնք մշտապես չեն կարող լինել կողքիդ: Նման երևույթ չի նկատվել մեր պատմության մեջ: Որոշ զգուշավորություն Դաշնակցությունից, մեր ակտիվությունից այս հարցերում, բոլորի աչքին է զարնում, նկատվում է, բայց մյուս կողմից՝ մեր ժողովուրդն էլ է տեսնում այդ ակտիվությունը: Վերջապես, մեր ժողովուրդը որքան էլ պառակտված է, բաժանված, մասնատված, բայց մեկ օրգանիզմ է: Սփյուռքահայերը հետաքրքրում են հայաստանցիներին, Հայաստանում կատարվող իրադարձությունները ցանկացած սփյուռքյան օջախում հետաքրքրություն են ներկայացնում, այսինքն՝ պորտալարեր կան, և մենք մեկ օրգանիզմ ենք: Ավելի ենք ուզում միավորել, բայց առնվազն կապերը կան այսօր էլ: Եվ ողջ հայ ժողովուրդը տեսնում է, որ իր վերջնական հաղթանակի, իր գերագույն ընդհանրական շահերի համար պայքարող առաջամարտիկը Դաշնակցությունն է: Որքան Դաշնակցությունը ուժեղ է հայրենիքում, այնքան հայությունը ուժեղ է ամենուր: Սա ֆորմուլ է: Եվ այդ ֆորմուլն ավելի ու ավելի շատ մարդ է տեսնում, և ես կարծում եմ, որ մեր հայաստանյան գործոնը մեր հայաստանյան վերաբերմունքի վրա, մեր ակտիվության գործոնը դրական ազդեցություն կունենա:

Ա. Ռ. - Դաշնակցության այլընտրանքն ամենակարևոր իր արտահայտությունն ունենալու է հենց այս բնագավառում, որովհետև Դաշնակցության ազգային գաղափարախոսությունը, առաջին հերթին դրսևորվում է արտաքին աշխարհում, արտաքին հարաբերությունների մեջ: 2008 թվականին 20 տարվա շրջան ենք ամփոփելու. 88-ից սկսվեց Ղարաբաղյան շարժումը և 2008-ին ունենում ենք մեր մյուս նախագահին. տարբեր մոտեցումներ եղան այս տարիներին Հայաստանի

ռազմավարական խնդիրների վերաբերյալ: Ժամանակին, երբ խոսում էինք ազգային անվտանգության հայեցակարգի անհրաժեշտության մասին, արտաքին քաղաքական դոկտրինի առկայության անհրաժեշտության մասին, գերակշռող էր այն միտքը (մենք այդ ժամանակ իշխանություն չէինք), որ ընդհանրապես պետք չէ ունենալ անվտանգության հայեցակարգեր, դոկտրիններ, որովհետև դրանց առկայությամբ ավելի խոցելի ես դառնում հակառակորդների համար: Հակառակորդները, իբր, հասկանալով, թե ինչ ես ուզում, ավելի հեշտ են պայքարելու քո դեմ: Սա բերեց նրան, որ, իսկապես, մենք չունեցանք հեռանկարային զարգացման ծրագրեր: Սա բերեց նրան, որ մենք ի վերջո ինքներս էլ չիմացանք, թե ուր ենք գնում, ինչ ենք ուզում: Եվ հիմա կամաց-կամաց այս իրավիճակը սկսում է հարթվել: Նկատե՞լ եք՝ վերջին ժամանակներս շատ է ասվում ազգային անվտանգության հայեցակարգ, ռազմավարության փաստաթուղթն է սկսում քննարկվել և այլն: Այս փաստաթուղթն էլ ամբողջությամբ մեր հայեցակարգով չէ, թեև, իհարկե, փոփոխություններ, առաջարկություններ արել ենք, և դրանք ընդունվել են: Բայց հայեցակարգը և դոկտրինը պիտի հենվեն կոնկրետ գաղափարախոսության վրա: Ի՞նչ նպատակ է իր առաջ դրել այս երկիրը, պետությունը: Մենք խնդիր ունենք բանավիճելու և պատրաստ ենք այդ բանավեճին: Վստահ եմ, որ նախագահական ընտրությունների ընթացքում, մենք ավելի հստակ կներկայացնենք, թե ինչպիսի հայեցակարգով պետք է երկիրը իր հետագա զարգացումն ունենա, գոնե 5 տարվա համար հստակ ճշտի մեր առաջընթացի ռազմավարությունը: Երկրի պետական բոլոր կառույցները պետք է նպաստեն այդ ռազմավարության իրականացմանը: Սա պետք է լինի հիմնական խնդիրը: Եվ այս հարցում մենք շատ լուրջ անելիքներ ունենք, որոնք բխում են մեր ազգային գաղափարներից, Հայ դատի խնդիրներից, պատկերացումներից, և որոնք մեզ տարբերում են որպես Դաշնակցություն: Եթէ այդ գաղափարները զեղչենք, Դաշնակցությունն իր ինքնությունը կկորցնի: Բայց մենք հետամուտ ենք մեր ինքնության պահպանմանը, անկախ այն բանից, թէ ինչպես են մեզ դիտարկում դրսից:

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱՀԱՏՄԱՆ ԱԿՏԸ

ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

(Սևր, 10 օգոստոսի 1920 թ.)

Լևոն ՇԻՐԻՆՅԱՆ

ՍԵՎՐԸ ԵՎ ԱՅՆՈՒՀԵՏԵՎ

Դուք պետք է ... փշրեք մեծ կղպանքն աշխարհի...
ԿՈՄՍ

Ուինստոն Չերչիլն «ամփոփելով» համաշխարհային ճգնաժամի դրսևորումները, գրում է. «Լոզանի դաշնագրում, որ վերահաստատեց հաշտությունը Թուրքիայի և դաշնակիցների միջև, պատմությունն ապարդյուն պիտի փնտրե Հայաստան բառը» (*Churchill W. S. The World Crisis: The Aftermath, 1918-1928, N.Y. 1929, h. V, էջ 408*): Լոզանը Հայաստանի խնդիրը շրջանցեց պարզապես: «Գութ ու աղերս հայցեցինք դաժան պայքարներու մեջ,- արձանագրում է հայ հեղափոխության ընթացքը Կոմսը,- իսկ արյունով ներկեցինք մեր սրբազան երկիրը. սպառեցանք» (*Փափազյան Վ., Իմ հուշերը, h. 3, էջ 235*): Ավելին, «Երկա՜ր, շատ երկար տարիներ, արյունած սիրտերով, բայց անընկճելի համառությամբ ու մանավանդ անխորտակելի հույսերով, բախեցինք զորավորներու երկաթակուռ դուռները - ՊԱՀԱՆՋԵՑԻՆՔ մեր իրավունքը, մեր արյան գինը. չմուրացինք երբեք: Զորավորները զլացան մեզի արդար և տարրական մեր իրավունքը. խաբեպատիր, սնամեջ խոստումներով օրորեցին մեզ. գութ կեղծեցին, երբ բան մը շահելու ակնկալություն ունեին... Եվ Լոզանի մեջ խոշոր կղպանք մը դրին հայկական հարցին վրա» (*նույն տեղը, էջ 1*):

Նկատենք, որ ինչպես Սևրը, այնպես էլ Լոզանը եզական են իրենց տեսակի մեջ: Նախ, «Լոզանը» չեն «կնքել»-ստորագրել Ռուսաստանը (ԽՍՀՄ), ԱՄՆ-ը և Հայաստանը (Լոզանի գործընթացում հայկական երկու պատվիրակությունների իրավունքները պահպանված էին): Լոզանում յուրահատուկ վարքագիծ էին դրսևորում խորհուրդները: «Նրանք,- գրում է Կոմսը,- ինքզինքնին դրած էին բարյացակամ, բայց թյուրքերու վերաբերմամբ կրավորական դիրքին մեջ: Լռելյայն և վարագույրի ետևեն թուրքերու հետ էին, մյուս կողմե չէին ուզեր զորացնել թուրքերու միջազգային դիրքը» (*նույն տեղը, էջ 236*): Նշանակում է, այս երկրները չեն կարող իրենց վրա կրել «Լոզանից» բխող որևէ պարտավորություն: Այնուհետև, Հայ դատի տեսանկյունից, «Լոզանը» ի զորու է թողնում մինչև այդ ընդունված միջազգային-իրավական ակտերից բխող իրավասությունները: Չի սխալվում Կ. Իզմիրլյանը, երբ ցույց է տալիս, որ Լոզանում Հայաստան բառի չգոյությունով «իրապես կարելի է ըսել», թե (Արևմտյան) Հայաստանի խնդիրը «chose judee մը դարձած է», քանզի «Լոզանը» «բացահայտ կերպով չէ մերժած, այսինքն՝ չէ վճռահատած խնդրո առարկա հողերու վրա հայ ժողովուրդին ի նպաստ ճանչված իրավունքը, որպես անհիրավ Դատ, այլ բավականացած է խնդրին վրայեն լռությամբ անցնելով միայն, ինչ որ կնշանակե, իրավագիտական և դատավարական հասկացողությամբ, թե հարցը առայժմ մեկ կողմ թողված է, ցնոր տնօրինություն» (*Իզմիրլյան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը, էջ 300-301*): Նշանակում է, պարզաբանում է Կ. Իզմիրլյանը, Թուրքիայի կողմից օկուպացված Հայաստանի «մեկ մասը կազմող հողերու վրա» ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարարական որոշումով թուրքահայ գաղթականների «տեղավորման և բնակության իրավունքը,

որուն միջազգային հարցի հանգամանքը ճանչված է արդեն, Միջազգային ատյանի մը կամ խորհրդաժողովի մը կողմե անարդար նկատվելով ետ մղված չէ, այլ պարզապես քաղաքական և ժամանակավոր պատճառներով sine die հետաձգված խնդիր մըն է (նույնն էր ակնարկում և թուրքերի հայրը երկարաշունչ իր ճառում.- Լ. Շ.), որ «ԿՍՊԱՍԵ» իր արդար և արժանի լուծումին» (*նույն տեղը, էջ 301*):

Ի դեպ, «կսպասեի»-ի և «ինչ անել»-ի հարցը առաջինն արծարծեց հայ ժողովրդի մեծ բարեկամը, Էլեֆթերիոս Վենիզելոսը (Լոզան, 16 հունվարի 1923 թ.), հունավորելով Հայաստանի համար պայքարի ռազմավարությունը նոր իրականության մեջ և տևական ընթացքի համար, Ալ. Խատիսյանի հետ մի տեսակցության ժամանակ: «Ձեր հարցի դրությունը և Հունաստանի կատարյալ պարտությունը,- ցավով նշում է մեր մեծ բարեկամը,- ինչպես գիտեք, ես նախատեսում էի դեռ Փարիզում, այստեղ էլ, դեռ նոյեմբերին նույնն էի ասում Ձեզ: Մեզ լքեցին դաշնակիցները կատարելապես: Այժմ խոսենք,- ասում է տաղանդավոր քաղաքական մտածողը,- ապագայի մասին: Ձեր առաջ կա երեք ճանապարհ, և այս երեք ճանապարհով պետք է գնաք. ա) բոլոր միջոցներով ուժեղացնել Ռուսահայաստանը, որ եղել է և այժմ է Հայաստանի կորիզը, ամբողջ հույսը: բ) Աշխատել և միշտ աշխատել Ամերիկայում թե դրամական և թե քաղաքական օգնության համար. մանավանդ, որ թուրքերը այնտեղ պետք է դրամ փնտրեն փոխառության համար և, մյուս կողմից, դա ամենաուժեղ և ապագայի երկիրն է: գ) Աշխատեցեք Լոնդոնում և Փարիզում քաղաքականապես վառ պահել ձեր դատը: Մի փակեք ձեր աշխատանքը, ունեցեք ամեն տեղ քաղաքական ներկայացուցչության ցանց և միշտ պատրաստ եղեք օգտվել ամեն հավանականությունից, որով այնքան հարուստ է այժմյան անկայուն դրությունը: Բայց հենվեք ոչ թե թղթերի, այլ իրական փաստերի վրա, որոնք են. ռուսական Հայաստանը, երեք (3) միլիոն ժողովուրդ և ժողովրդական կամք ու ոգի: Եվ բոլոր դեպքերում պահեցեք սերտ կապ ձեր բոլոր բարեկամների հետ, որոնց մեջ մի մոռանաք առաջին տեղը դնել Հունաստանը և մասնավորապես ինձ»: (*Տե՛ս Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. 3, էջ 290-291*):


Էլեֆթերիոս Վենիզելոս

Եվ ահա, որպեսզի Հայաստանը չգնա «երեք ճանապարհներից» և ոչ մեկով և չփորձի վերատիրանալ իր ԱՆՕՏԱՐԵԼԻ իրավունքներին, «քաղաքակրթված» Թուրքիայի և նրա «քաղաքակիրթ» բարեկամների կողմից արվում է ամեն բան, որպեսզի հայ ժողովուրդն, ի վերջո, կամովին հրաժարվի Հայկական հարցից և, որ նույնն է, բավարարվի Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրով: Այդ նպատակով, պատեհ-անպատեհ, հետխորհրդային Հայաստանը ենթարկվում է խիստ ճնշումների, ընդհուպ շրջափակման (մասնավոր, ամբողջական), ինչը պատերազմական ակտի դրսևորում է: Նպատակն է Հայաստանին հաշտեցնել առկա իրողությունների հետ և նվիրագործել այն սահմանները[1], որոնք ստեղծվել են բռնությամբ ու ոճիրով: Սակայն հայ ժողովուրդը, որ ունի իր հայրենիքի հանդեպ անվիճարկելի իրավունքներ, «մերժում է իրեն հարկադրվող անվայել առևտուրը. ցեղասպանության ճանաչում՝ միջազգային իրավունքով սահմանված համապատասխան հետևանքներից հրաժարվելու դիմաց» (*Барсегов Ю. Арбитражное решение президента США по Армяно-Турецкой границе. "Тесакет", 1995, N 31, էջ 12*): Հասկանալի է, որ նա որևէ մեկին չի արտոնել տնօրինելու իր իրավունքները: Արևմտյան Հայաստանն այսօր համազգային մի գերեզմանոց է, համահայկական ՍՐԲԱՏԵՂԻ: Եվ սա գերազանց է հասկանում թուրքը. երեկ՝ երիտասարդը, այսօր՝ քեմալականը, վաղը՝ քաղաքակիրթը... սակայն խորքին մեջ իր էությունը չփոխող թուրքը, միշտ թուրք մնացող թուրքը: Իսկ հայր-թուրքն (Աթաթյուրք) իր պատգամ խոսքի մեջ, կրկնենք, ասում էր. Լոզանում հայկական հարցը հետաձգվեց...

«Թուրքիան,- իրավացիորեն նկատում է ճանաչված արևելագետ Հենրի Աստարճյանը,- միշտ եղած է ու կմնա անապահով երկիր մը» և «ո՛չ վերազարթնող իսլամության պատճառով, ինչպես կուզեն հավատացնել», այլ «քեմալականության ծախողության պատճառով», որ վարչակարգը «չէ հաջողած (թերևս չի էլ ուզած - Լ. Շ.) փոխել թուրք զինապաշտ, այլամերժ ուղղությունը և առաջնորդել զայն դեպի ժողովրդավարություն: Ժողովրդավարությունը խորթ է թուրքի նկարագրին», այն «հիմա ևս արմատ չէ նետած Թուրքիո առօրյա կենցաղեն ներս»: «Քեմալիզմը ոչ մեկ փոփոխություն բերած է թուրք ժողովուրդի մտայնության մեջ» և Քեմալի Թուրքիան «կպնդե քալել ատելության, օտարատյացության և ֆաշիզմի ճամբով»:

Ալ. Խատիսյան

«Թուրքիան Ամերիկայի բանդագուշանքն է»,- գտնում է Հ. Աս-

տարճյանը, ուստի և ԱՄՆ շահերը պահանջում են «միանգամընդմիշտ լուծում մը գտնել Միջին Արևելքի այն մեծ հարցին, որուն անունը Թուրքիա է»: Եվ եթե ԱՄՆ քաղաքականությունը մշակող պետական բաժանմունքը «կփափաքի այսօրվա Թուրքիան հասկնալ»,- կարծիք է հայտնում Աստարճյանը,- թող «պրպտե իր արխիվները և սերտե այն տրամաբանությունը, որուն վրա հիմնված է Վուդրո Վիլսոնի ծրագիրն այդ շրջանին համար» (*Աստարճյան Հ., Սևրի դաշնագիրը այսօր ևս կենդանի է: Ճառ՝ արտասանված Քուրդիստանի աքսորական խորհրդարանի հիմնադրության Ա. տարեդարձին առիթով, ապրիլ 12, Բրյուսել.- «Հայրենիք» (Կանադա), 2 մայիսի 1996 թ.*):

Եվ մինչ ԱՄՆ-ը կփորձի «լուծում մը գտնել Միջին Արևելքի այդ մեծ հարցին», հայոց ռազմագիտական միտքը պարտավոր է, առաջին հերթին, նկատի ունենալ իր՝ թուրքի հետ դարավոր գոյակցության հոգեբանական կողմը ևս, և թուրքի ազնիվ խոսքի արժեքը: Տվյալ դեպքում նկատի ունենք հանդեպ հայը (հայ ժողովուրդը) թուրքական կողմի դրսևորած էթնո-հոգեբանական հարաբերության ետնախորքը: Առանց այդ ետնախորքը հասկանալու, հնարավոր չէ Թուրքիայի հետ ոչ կարճաժամկետ, առավել ևս՝ ոչ էլ երկարաժամկետ համակեցության արդյունավետ ուղենիշներ որոշել (ընտրել): Հայ շնորհալի մտավորական Ստեփան Շահպազը այս առնչությամբ սկզբունքային նշանակության ընդհանրացում է անում, որը ինքնին դուրս է նույնիսկ ցեղասպանության շրջանակներից: Մեծ եղեռնի տարիներին «հազվագյուտ թուրքեր,- գրում է նա,- երբեմն փորձեցին դատապարտել եռապետության վայրագությունները (գեթ կես Օսկար Շինդլեր անգամ չգտնվեց.- Լ. Շ.), բայց երբեք բավական չէին և արդարության սերը չէ, որ կմղեր զիրենք խոսելու: Ընդհակառակը, ամբողջ թուրք ժողովուրդը մոտեն մասնակից ըլլալով հայկական հարստահարությանց և թալանին, բոլորն ալ հայտնորեն ու լայնորեն օգտված, պիտի չուզեին քննադատել կառավարության այն հրահանգները, որոնք իրենց նյութական շահ և արյունի ծարավը հագեցուցած էին»: «Ավելին ըլլալով,- բացատրում է Ստ. Շահպազը,- իրենց մոլեռանդ ատելությունը հայոց դեմ առհավական (ժառանգական - Լ. Շ.) հիմ ունի, իրենց աղիքներուն, ոսկորներուն, արյունին մեջ տարածված, անոնց հետ շաղախված հինեն ի վեր: Կարելի չէ գտնել թուրք արարած մը, որ չսնուցանե մինչև այսօր հայը հալածելու կիրքը, ցեղային, ազգային իդեալի մը հավասար իմաստով: Ոչ թե միայն օտարը, բայց անգամ այն հայը, որ Թուրքիա չէ ապրած, չի կրնար հասկնալ, ըմբռնել այս ճշմարտությունը»: Նման քսենոֆոբիան, նման հայատյացությունը ընդունված է անվանել կենդանական, քանզի պայմանավորված չլինելով մարդկային տրամաբանությամբ և հեռու լինելով ողջախոհությունից, նույնական է անասնական կրքին, ավելացնենք մենք մեզնից: Սակայն, թուրքի նկարագրի երկատվածությունը, ինչպիսին իր երկրինն է (torn-country.- Ս. Հանթինգթոն), թույլ է տալիս նրան հաջողությամբ թաքնվել իր արտաքին դրսևորումներում: «Մանավանդ,- զգուշացնում է Ստ. Շահպազը,- բոլոր թուրքերն ալ, անխտիր, մեծեն պզտիկը, տգետն իսկ, գիտեն լավ խոսիլ, լեզվանի են, ի հարկին անույշ լեզու գործածել կրնան, քծնիլ իսկ, վարպետ են ստելու, շողոքորթելու, համոզելու մեջ. այս մարզերուն իրենց ունեցած կարողությունները, տաղանդը, ինձի ծանոթ որևէ ժողովուրդին մոտը չեմ տեսած: Անկասկած, մեծ մասով ասոր կպարտին օտարներու մոտ իրենց շահած համակրական հաջողություններին շատ շատերը» (*Տե՛ս Հուշամատյան Մեծ եղեռնի..., էջ 104-105*): Եւս մի ընդհանրական բնութագրում. «Հստակ է, որ թրքությունը սերունդե սերունդ կենսաձևով փոխանցված վիճակ մըն է, որ այդ ժողովուրդին անդամները ի վերջո կհասցնե ուրիշը չարչարելու և արյան հեղումը վայելելու հիվանդագին հաճույքին: Ասոր գիտակցության ամբողջական չգոյությունը կշեշտե ահավորությունը կացության» (*Տե՛ս Երեմյան Մարուշ, Ջարդի թեման անգլիագիր հայ հեղինակներու գրիչով ամերիկյան գրականության մեջ.- «Յառաջ», 4 սեպտեմբերի 2005 թ.*): Հերթական՝ Սումգայիթի եղեռնագործությունը ցույց տվեց թուրքական վարքագծի «անժամանցելիությունը»[2]: Խնդրի էթնո-հոգեբանական տեսանկյան իմացությունը անհրաժեշտ է նաև նրա համար, որ գալիքում որևէ հայ քաղաքական պատասխանատու չկրկնի ողբացյալ է. Ակնունիին (անդա՜ռ ուշացած). «Ազատություն ստացանք, որ մո՜ւշ-մո՜ւշ քնանա՞նք... Իսկ ո՞ւր են... խմբերը, զենքերը ո՞ւր են...»: Մանավանդ, խնդիրն ավելի է սրվում, եթե նկատի ունենանք, ինչպես ասվել է, որ թղթի վրա թուրքի ստորագրությունը այդ թղթի գնի արժեքն իսկ չունի: «Թուրքիա,- նկատում է Հ. Աստարճյանը,- իր ստորագրությունը միայն իր հասկցած ձևով կհարգե: Մտքերու մեջ են Սան-Ստեֆանոյի թիվ 16 և Բեռլինի թիվ 61 հոդվածները»: Եվ ոչ միայն:

Մեր կողմից պաշտպանվող պնդման որպես լուսաբանություն ծառայում է էնվերի մի «պայծառատեսությունը»՝ արտահայտված Հայաստանի պատվիրակության անդամների առաջ, Պոլսում, սակայն Սարդարապատում ջախջախվելուց հետո: Համաձայն այս հերթական «մեծահոգի» թուրքի, «թուրքական նախարարները երկու շաբաթ մտածում էին ստեղծե՞լ, թե՞ չստեղծել Հայաստան և, վերջապես, որոշեցին ստեղծել, որովհետև այդպես ավելի ձեռնտու էր ինչպես հայերին, այնպես էլ թուրքերին» (*«Զանգ», 1918, N 58 (74).- Տե՛ս Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 455*):

Իսկ այսօր մտածում են, ինչպես թուրքերի հայրը, Թուրքիան ինչպե՞ս ազատել Մեծ ոճիրի պատասխանատվությունից: Չէ՞ որ Լոզանում «հարցը հետաձգվեց», ուրեմն, ինչպես պարզվում է, խնդիրը չի լուծվել... Նշանակում է, հայ ժողովրդին և մերօրյա

Հայաստանը պետք է պահել նոկդաունի (գետնատապալ) վիճակում, պատժամիջոցների աքցաններում, ոտնահարել հայոց ազգային շահերն ու ներկայացնել ազգի մարդկային արժանապատվությունը նսեմացնող պահանջներ: Մինչև... մինչև, թուրքական հասկացողությամբ, կգան լավ օրեր... Չէ որ Լոզանում հարցը սոսկ հետաձգվել է... Ուստի և շրջափակման կիրառմամբ Հայաստանին ներկայացվում են շեմից մերժելի պահանջներ. Թուրքիան չդիտել արմենոցիդի պատասխանատու (հակառակն է տեղի ունեցել՝ հայերը կոտորել են թուրքերին պատմական Հայաստանում և անմիջապես անհետ գետնի տակն անցել, կոտորված թուրքերին թողնելով իրենց հայրենիքը), Թուրքիայից չունենալ տարածքային պահանջներ (հակառակը, նրա կրտսեր եղբորը փոխանցել այսպես կոչված «Մեղրու միջանցքը»), չլինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության երաշխիք[3] և այլն: Հասկանալի է, որ ներկայացվող պահանջների բավարարման դեպքում, ինչպես ցույց է տալիս 1917-1921 թվականների պատմությունը, նրանք հայկական կողմին պարտադրելու են պերմանենտ (չընդհատվող) զիջումների վարքագիծ: Նշանակում է, «Մեծ ռազմավարության» շրջանակներում թուրքական խնդիրը հանգում է հայկական հարցի լիկվիդացիային (լուծարք, ոչնչացում, վերացում): Այս է իրողությունը և միջազգային իրադրությամբ պայմանավորված թուրքական նեյնիմները չեն խաթարում ընդհանուր կանոնը:

Հասկանալի է, որ այս ճանապարհին անթույլատրելի է կրավորական կեցվածքի որդեգրումը, իրերի օբյեկտիվ ընթացքին անձնատուր լինելը, «բան մը կըլլա»-ի ռազմավարությունը, ինչը ժամանակին՝ 1915-1917 թվականներին հանգեցրել է թուրքերի անպատիժ եղեռնագործությանն ու Ազգի և Հայրենիքի բուն արմատների կացնահարմանը... Ինքնին հասկանալի է նաև, որ Հայաստանի վերստեղծման խնդիրը ուղղակիորեն կապված է թուրքական թնջուկի հետ: Այստեղ անառարկելի են հայ ժողովրդի օրինական իրավունքները, «Վիլսոնյան Հայաստանի» իդեալ-մոդելի մեջ համադրված է ազգային այն պատկերացումը, որն արտահայտում է նրա ձգտումների ու գործունեության վերջնական նպատակը: Ընդսմին, «Վիլսոնյան Հայաստանի» իդեալ-մոդելը տրանսցենդենտալ է և ժամանակից դուրս: Ազգային գաղափարի այս ըմբռնումն է, համազգային idea-fix-ն է, «ուղեղի մորմոք»-ի վերածված այս իդեալն է, որ կարող է հանգեցնել Հայկական հարցի հանգուցալուծմանը: Նա է, որ համախմբելու և վերածնելու է հայությանը՝ հիրավի տիեզերական խոյանքի ձգտող մշակութային իր արժեքների վրա: «Վիլսոնյան Հայաստանի» համար պայքարն է, որ Մայր Հայրենիք է վերադարձնելու Թուրքիայի «մերիններին», տասնյակ, գուցեև հարյուր հազարների հասնող, Մերձավոր և Միջին Արևելքում տարածված, հոգու խորքում ծագումի ուժով իրեն հայ զգացող զանգվածներին, ուծացման ճանապարհը բռնած աշխարհասփյուռ «լուսանցքում հայտնվածներին» (մարգինալներ): Այստեղ ամեն ինչ հստակ է: Ավելի՛ն: Հայաստանի համար պայքարը համահունչ է նոր ու արդարացի աշխարհակարգի համար պայքարին և այս ճակատում են Հայաստանի իսկական բարեկամներն ու դաշնակիցները:

Պետք է նկատի ունենալ, որ հայ-թուրքական հարաբերություններում վտանգավորը պատրանքներն են: Այդ հարաբերությունների էվոլյուցիան Բեռլինի կոնգրեսից (1876 թ.) սկսած, մեծ մասով դուրս է երկկողմ հարաբերությունների շրջանակներից: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, Թուրքիայի շուրջ ուժային տարբեր զուգորդումների առաջացման ընթացքում, տարբեր զիջումների ճարպիկ խաղարկումով, Թուրքիան հետևողականորեն առաջ է տանում հայկական հարցի «վերջնական լիկվիդացիայի» գործը: 1876-ից հետո պատմությունը որևէ այլ օրինակ չի տվել:

Կա նաև որոշակի խնդիրներով (պատմությամբ) պայմանավորված որոշակի իրականություն: Անտեսելու չէ, որ Հայկական լեռնաշխարհը բռնազավթած երկրները, առաջին հերթին Թուրքիան, շրջապատված են՝ հիմնականում պատմականորեն, թշնա-

մաբար տրամադրված երկրներով: Պարզ է, որ երկրաքաղաքական հարաբերությունների նոր համակարգում, կապված միջազգային իրադրության արագ և կտրուկ փոփոխության հետ, նրանք կարող են Հայաստանը «ցանկացած պահի ներքաշել ռազմական հակամարտության մեջ» (Ռ. Զվարջո): Այսպիսի դեպքերում,- գրում է դիվանագետ Ռ. Զվարջոն,- «հենվելով ռազմավարական գործընկերների իրական օժանդակության վրա, և դաշնակիցների օգնության մեջ համոզվածության պարագայում, սեփական կարողությունների իրատեսական գնահատումով», պետք է պատրաստ լինել հայ ժողովրդի օրինական և անժամանցելի իրավունքների, միջազգային օրենսդրության խստագույն հաշվառումով, գործադրմանը:

Մոռանալու չէ, որ կրակն անթեղված է Արցախում: Ադրբեջանի հետ հաստատված զինադադարից հետո (1994 թ., մայիս), Ադրբեջանի ոչ իրատեսական դիրքորոշման պատճառով, չի ստորագրվել պատերազմի արդյունքներն արձանագրող խաղաղության դաշնագիր: Ուստի և ռազմական գործողությունների վերսկսման դեպքում, ինչպես ենթադրում է Ռ. Զվարջոն, կծնվի հայկական հարցի ռազմական լուծման խնդիրը, ինչպես Արցախի, այնպես էլ Նախիջևանի, Գանձակի, Արծվաշենի, Գետաշենի և հայկական այլ տարածքների նկատմամբ, որոնք դեռևս մնում են բռնազավթված (*Зварджо Р., Пути решения Армянского вопроса.– "Ноев Ковчег", январь, 2004*): Եվ քանի որ, բացի Արցախից, հիշյալ տարածքներից մնացածներում իր բնիկ ժողովուրդը չի մնացել, այստեղ, Զվարջոյի իրատեսական գնահատումով, պետք է կիրառել Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման սկզբունքը, որն իր կազմում ուներ Սուրմալուի, Շարուրի և Նախիջևանի գավառները, Լեռնային Ղարաբաղը Գյուլիստանով և Գանձակի գավառի հայկական մասը (*նույն տեղը*):

Ռ. Զվարջո

Թերևս, մոռանալու չէ real-politik-ի երկաթյա իրողությունը, որ «Հայաստանի ոչ մի տարածքային խնդիր չի լուծվել առանց ռազմական ուժի»: Եվ դա այն գլխավոր հետևությունն է, որից պետք է դաս առնի դիվանագիտական ֆետիշը և ուրիշի «տալուն» չափազանցված հակվածություն դրսևորած հայությունը[4]:

Այնուհետև, Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմավարական նոր իրավիճակ է գոյանում Իրաքի դաշնության ծնունդով, որտեղ, ի մասնավորի, քրդական գործոնի ազդեցության մեծացմանը զուգընթաց և նրա ենթատեքստում պատմական ասպարեզ է մտնում Քրդական ինքնավարությունը: Թերևս սա հեռավոր չափով հիշեցնում է Սևրի դաշնագրի գործադրման փորձը:

Անկասկած է, որ Իրաքում քրդական ինքնավարության ստեղծումը ռազմավարական իր անխուսափելի հետևանքները կունենա, մասնավորապես, Թուրքիայի համար: Ռուսաստանցի վերլուծաբան Ալ. Գոլդբերգը դեռևս 2001 թվականին կարծիք էր հայտնում, որ քրդական պետության ստեղծումով ԱՄՆ-ը նպատակ ունի ուժեղացնել Թուրքիայի վրա տարածաշրջանային ճնշումը, որպեսզի կանխի Թուրքիայի քաղաքականության ինքնավարացման (ավտոնոմիզացիա) ամեն մի փորձ: Եվ այդ իմաստով ինքնավար Քրդստանը, ըստ Գոլդբերգի, պետք է տարածաշրջանում ստանա ռազմաքաղաքական ինքնուրույն նշանակություն ԼՂՀ համարժեքով (*Гольдберг Ал., Зачем Вашингтону Карабах и Курдистан.– GazetaSNG.ru, 07.03.2001*): Այս պարագայում, թերևս, քրդական ինքնավարությունը նախատեսված է որպես «կայունացնող գործոն», ինչպես ենթադրում է Ա. Գոլդբերգը, չեզոքացնելու համար «քրդական անհնազանդությունը», սակայն ամենահավանականն է, որ Թուրքիայի դեպքում կգործի «ջինի» էֆեկտը (արդյունք): Այս հարցում արդեն որոշակի անհանգստություն են դրսևորում թուրք պաշտոնյաները: Օրինակ, ԱԳ նախկին նախարար Ա. Գյուլը խստությամբ հանդես էր գալիս Իրաքի տարածքային ամբողջականության օգտին, ասելով, որ Իրաքի քայքայումը կկազմալուծի տարածաշրջանը (կարդա՝ Թուրքիան.- Լ. Շ.) և այլն:

Հասկանալի է, որ հայկական կողմը, ցեղասպանության աղետը ճաշակած լինելով, առավել քան շահագրգիռ է Հայկական հարցի խաղաղ լուծումով: Առավել ևս, որ հարցը իրավաքաղաքական առումով անխոցելի է: Ավելին՝ Եվրախորհրդի 1987 թվականի հունիսի 18-ի որոշումը՝ «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին», սահմանում է տեսանելի հեռանկարում (վերցնենք 2015 թվականը, Մեծ եղեռնի 100-ամյակը) հայկական հարցի հետապնդման ուղեգիծը և թելադրում նրա համար պայքարի տրամաբանությունը: Եվրախորհրդարանը համոզմունք հայտնելով (որոշման 2-րդ կետի առաջին մաս), որ «1915-17-ին Օսմանյան կայսրության մեջ հայերու դեմ տեղի ունեցած ողբերգական դեպքերը ցեղասպանություն էին՝ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին կողմե 9 դեկտեմբեր 1948-ին որդեգրված ոճիրի կանխարգելման և զսպումի բանաձևումով» [այս կերպ վերահաստատվում է Ֆրանսիայի, Անգլիայի ու Ռուսաստանի 1915 թվականի մայիսի 24-ին Փարիզում, Լոնդոնում ու Պետրոգրադում միաժամանակ հրապարակված Ազդարարության որակումը որպես «ոճիր մարդկության և քաղաքակրթության դեմ»[5]], խորհրդից (3րդ կետ) պա-

հանջում է «ներկա թուրք կառավարությունեն ստանալ 1915-17-ի հայերու դեմ ցեղասպանության ճանաչումը և նպաստել Թուրքիո և հայերու իրավասու ներկայացուցիչներուն միջև քաղաքական երկխոսության մը հաստատման» (*Տե՛ս «Դրօշակ», թիվ 6, 8 հուլիս 1987 թ., էջ 8*):

Ինչպես մեզ է թվում, Ռ. Զվարջոն հայկական հարցի լուծման ուղղությամբ ընդհանուր ուշադրության արժանի այնպիսի առաջարկներ է անում, որոնց շուրջ կարելի է վիճել, առաջարկել բարեփոխումներ, սակայն անտեսել, առավել ևս մերժել հնարավոր չէ: Հայկական կողմը, ուրեմն, մինչև 2015 թ. ապրիլի 24-ը (Ցեղասպանության 100-ամյակը) պետք է դիմի ՄԱԿ, Անվտանգության խորհուրդ, Հաագայի միջազգային դատարան՝

- պահանջելով պարտավորեցնել Թուրքիային ընդունելու Ցեղասպանության իրողությունը և իր պատասխանատվությունը,
- ընդունել տալու Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքների անեքսիայի փաստը 1920 թ. աշնանը և 1921 թվականին՝ պարզելով ՀՀ-ից օտարված տարածքների իրավաբանական պատկանելության հարցը,
- պահանջելով Թուրքիայից, որպես Մեծ եղեռնը իրականացրած երկրի, անվտանգության երաշխիքների տրամադրում Հայաստանի Հանրապետությանը:

Միջազգային իրավունքի խստագույն կիրառման դեպքում, պարզ է, որ ԽՍՀՄ լուծարումից հետո մերօրյա Հայաստանի սահմանների ու տարածքների վերաբերյալ բոլոր պայմանագրերը կորցնում են իրենց օրինականությունը (լեգիտիմությունը): Այդ դեպքում իր ուժն է պահպանում Սևրի խաղաղության դաշնագիրը, որը կնքվել է հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների գոյության պայմաններում, միջազգային իրավունքի շրջանակներում: Թուրքական անօրինական (ոչ լեգիտիմ) իշխանության՝ քեմալական ազգայնականության ընդվզումը Սևրի դեմ ռազմավարական խնդիր ուներ ավարտին հասցնել ցեղասպանության գործը, ոչնչացնելով Հայաստանն ու հայկական հարցը: Սևրի խաղաղության դաշնագիրը, սակայն, հեռանկարում, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միակ և համապարփակ հիմքն է:

Եվ վերջապես, անհրաժեշտ է համաշխարհային հանրության օգնությամբ «պարտավորեցնել Թուրքիային որպես 1915-1923 թթ. Կիլիկիայից, Արևմտյան և Արևելյան Հայաստանից հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը կազմակերպած երկրի,- ասում է Ռ. Զվարջոն,- նրանց ժառանգներին փոխհատուցել տարածքային ու բարոյական վնասը, պահպանել նրանց իրենց պատմական հայրենիք ազատ և անվտանգ (միջազգային երաշխիքներով) վերադառնալու իրավունքը»:

...Հիշել է պետք գլխավոր թուրքի խոսքը. «Լոզանում այս հարցը հետաձգվեց»: Եվ վերջ:

---

[1] Լոզանի դաշնագրով Թուրքիայի սահմանները որոշված են մեկ առ մեկ (հոդվ. 2-22): Սակայն այնտեղ ոչինչ չի ասված Թուրքիայի եւ Խորհրդային Միության (կարդա՝ այժմյան անդրկովկասյան պետությունների) սահմանների վերաբերյալ: Վերջինս կարգավորվում է Մոսկվայի երկկողմ (1921 թ. մարտի 16) և Կարսի (1921 թ. հոկտեմբերի 13) պայմանագրերով, որոնք, սակայն, միջազգային օրենքի հանգամանք չունեն:

[2] Ութսուն տարի հետո տեղի ունեցած եղեռնագործությունը պատճենահանում է Ադանայի ջարդերի (1909, ապրիլ) թուրքական մտահղացումն ու դաժանությունը: Ինչպես առաջինը, այնպես էլ երկրորդը տեղի են ունենում Հայաստանից հեռու, խաղաղ ծովափին (Միջերկրական և Կասպից ծովեր), առաջինը՝ երիտթուրքական հեղափոխության, երկրորդը՝ խորհրդային պերեստրոյկայի թեժ շրջանում, երկու դեպքում էլ ուժային կառույցների կամ մասնակցությամբ, կամ խուլ համաձայնությամբ և այլն:

[3] Այս պահանջները փորձում են պարտադրել Հայաստանին: Սակայն, ինքը «Թուրքիան ինչպես երբեք պիտի չընդունի ալևիներն ու քուրդերը որպես փոքրամասնություն,- ասում է նախկին թուրք դեսպան Գյունդուզ Աքքան,- նույնպես հայկական ցեղասպանությունը»: Ճնշումներն ու համառությունը վերջ չունեն, ասում է նա: Բայց դիմացի կողմը՝ ալևիները, քուրդերը և հայերը, պիտի գիտնա, թե թուրքը «ինչ բան կրնա ընդունիլ, ինչ բան՝ ոչ» («Յառաջ», 6 դեկտեմբերի 2005 թ.): Ըստ էության, Թուրքիային վերագրվում է քմահաճ սիրուհու դեր:

[4] Ռազմական պոտենցիալի անփոխարինելի նշանակության օգտին է խոսում մեր բարեկամների փորձը ևս: Հիշենք է. Վենիզելոսի դառը խոստովանությունը Լոզանում, Ալ. Խատիսյանին և Գ. Նորատունկյանին. «...իմ խոսքը, իմ ձայնը այժմ կարող է այսօր միայն վնասել ձեզ: Ես այլևս ազդեցություն չունեմ: Անցել են այն օրերը, երբ ես ունեի 200000 զորք, հաղթող, Դաշնակիցների մանդատը, այսօր ես ջարդված Հունաստանի ներկայացուցիչն եմ, որին թուրքերը ատում են և չեն վախենում» (Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. 3, էջ 279):

[5] Նույն Ազգարարության մեջ Գլխավոր դաշնակից երկրները ոճրագործությունների համար հրապարակավ անձնապես պատասխանատու էին հռչակում Օսմանյան կառավարության բոլոր անդամներին և տեղական այն պաշտոնյաներին, որոնք մասնակցել էին կոտորածներին: Հետագայում այս երկրները հրաժարվեցին իրենց դիրքորոշումից և «Վերսայլի ժողովին հայերը մեծապես անհրավվեցան (իրավազրկվեցին.- Լ. Շ.), որովհետև իրենց ոճրագործները ցեղասպանության հեղինակներ էին և անպատիժ մնացին» (Ռ. Լեմկին): Օգտվելով ընձեռված հնարավորությունից, Քեմալը ձեռնամուխ եղավ թուրքական պետությունը դուրս բերելու ցեղասպանության համար մեղադրանքի պատասխանատվությունից: Այս քաղաքական ռազմավարությունը, ըստ էության, շարունակում է Եվրախորհրդարանը, հայտարարելով. «Ներկա Թուրքիան չի կրնար պատասխանատու նկատվիլ Օսմանյան կայսրության մեջ հայերու ապրած ողբերգության համար և շեշտելով կընդգծե, որ այս պատմական դեպքերու իբրև ցեղասպանություն ճանաչումը չի կրնար այսօրվան Թուրքիայեն քաղաքական, իրավական կամ նյութական պահանջներու տեղ տալ» («Դրօշակ», էջ 81):

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ՆՈՐ ՄՈԴԵԼ
արժեթղթերի շուկայում

ԱՐՇՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Ծնվել է 1972թ. ՀՀ Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղում: 1989թ. գերազանցության մեդալով ավարտել է միջնակարգ դպրոցը:

1990-1995 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում՝ տնտեսագիտական կիբեռնետիկա մասնագիտությամբ:

1997-2001 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով իրավաբանի որակավորում՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

1995-1998 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան:

1997-1998 թթ. կարճաժամկետ ծրագրերով ուսումնառությունը շարունակել է Մոսկվայում, Վաշինգթոնում և Նյու Յորքում՝ մասնակցելով անցումային շրջանի տնտեսական վերափոխումների հիմնախնդիրներին նվիրված դասընթացներին:

2000թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 11 գիտական հոդվածների հեղինակ է: Պատրաստվում է պաշտպանել ՀՀ կորպորատիվ իրավունքի հիմնախնդիրների վերաբերյալ դոկտորական ատենախոսությունը՝ իրավագիտության ոլորտում:

2000-2005 թթ. աշխատել է ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի անդամի պաշտոնում:

2005-2007 թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալի պաշտոնում:

2007թ. մայիսի 12-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ՀՅԴ համամասնական ընտրացուցակով ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն է:

ՀՀ կառավարությունը, օրենսդրական նախաձեռնության շրջանակներում, ՀՀ ԱԺ էր ներկայացրել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը և թվով 13 օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագծերը, որոնց ընդունման պարագայում ուժը կորցնելու էր 2000 թ. ընդունված «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը:

Այս նախագիծը բավական ակտիվ քննարկումների առարկա դարձավ Ազգային ժողովի լիագումար նիստում և ընդունվեց առաջին ընթերցմամբ:

ՀՅԴ պատգամավորական խմբակցությունը անընդունելի համարեց օրինագծի ներկայացված տարբերակը և ներկայացրեց թվով 252 առաջարկություն:

Օրինագծի ներկայացված տարբերակն անընդունելի համարելու համար առկա են մի շարք սկզբունքային հարցեր, որոնցից այս հրապարակման մեջ կփորձենք

անդրադառնալ երկուսին:

1. Օրինագծով ներկայացվող մոտեցումները չեն համապատասխանում կամ հակասում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մի շարք սկզբունքների:

ա) Օրինագիծը ներառում է բազմաթիվ դրույթներ, որոնք հակասում են կամ չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածով նախատեսված պահանջներին, որոնց համաձայն բացառապես օրենքներով պետք է սահմանվեն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող պարտադիր այլ վճարների տեսակները, չափը, վճարման կարգը, իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու դեպքերը, պայմանները, կարգը և այլն...: Սահմանադրության այս նորմի գոյության պարագայում օրինագծով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվել ընդունելու բազմաբնույթ և բազմաթիվ իրավական ակտեր, որոնք էականորեն սահմանափակելու են անձանց իրավունքները, նրանց համար սահմանելով վարքագծի պարտադիր կանոններ: Այդ կանոնները հանգեցնում կամ կարող են հանգեցնել անձի կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքի արգելափակմանը (ընդհանուր առմամբ այդպիսի պահանջները ներառված են օրինագծում շուրջ 150 անգամ):

բ) Օրինագծի մի շարք դրույթներ համահունչ չեն ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասով և 31-րդ հոդվածով սահմանված սեփականատիրոջ իրավունքի պաշտպանության նորմերին: Մասնավորապես, այս նորմերի համաձայն ՀՀ-ում սեփականության իրավունքը երաշխավորվում և պաշտպանվում է: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կուտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքի: Սա այն դեպքում, երբ օրինագծով ՀՀ կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում ներդրումային ընկերության, կենտրոնական դեպոզիտարիայի, ինչպես նաև կարգավորված շուկայի օպերատորում նշանակալից մասնակցություն ունեցող անձին ***պարտադրել*** օտարելու իր սեփականությունը:

գ) ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ-ում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Սահմանադրության 33.1 հոդվածի համաձայն, «շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար»: Մինչդեռ օրինագիծը հաշվի չի առել այս պահանջը և կենտրոնական դեպոզիտարիային ու ըստ էության նաև ֆոնդային բորսային շնորհել է փաստացի մենաշնորհային դիրք՝ առանց հակամենաշնորհային կարգավորման քաղաքականության իրագործման:

դ) ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Օրինագիծը, ներդրողների պաշտպանության մասով, չի նախատեսել վարչական կարգով պաշտպանության հնարավորություն:

ե) ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածը երաշխավորում է անմեղության կանխավարկածը, որի համաձայն հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղավորը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Օրինագծով անտեսված է նաև այս նորմը:

2. Օրինագծում հաշվի չեն առնված ինչպես մեր հանրապետության տնտեսական, այնպես էլ արժեթղթերի շուկաների միջազգային զարգացման առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների արդյունավետումը գերազանցապես պայմանավորված է նաև ֆինանսական շուկայի գործարկման արդյունավետությամբ: Մի շուկա, որն ի վիճակի կլինի միաժամանակ ձևավորել բարենպաստ ներդրումային դաշտ և բարեփոխվող տնտեսության զարգացման համար ապահովել ներդրումային այլընտրանքային բավարար ռեսուրսներ: Ֆինանսական շուկայի առանձին հատվածներից (բանկային, ապահովագրական և արժեթղթերի) ներկայումս համեմատաբար զարգացած է համարվում բանկայինը: Ֆինանսական շուկայի մնացած երկու հատվածները գտնվում են կայացման փուլում և զարգացածության մակարդակով զգալիորեն ետ են մնացել:

Համաձայն օրինագծի հիմնավորման, եվրոպական ինտեգրման գործընթաց որդեգրած Հայաստանի համար անհրաժեշտ է կապիտալի շուկայի «ամերիկյան» մոդելից անցնել «եվրոպական» մոդելի:

Պետք է արձանագրել, որ Հայաստանի արժեթղթերի շուկայի զարգացման համար իսկապես կարևոր նշանակություն ունի պետության քաղաքականությունը շուկայի մոդելի ձևավորման և իրականացման ուղղությամբ, որը մի կողմից պետք է օգտագործի շուկայի կարգավորման բնագավառում առկա միջազգային լավագույն փորձի արդյունքները, մյուս կողմից՝ հաշվի առնի ազգային առանձնահատկություններն ու համարժեք լինի երկրում տնտեսական բարեփոխումների ընթացքին:

Ընդհանրապես, տնտեսության ազատականացման ուղիով ընթացող երկրները, ներառյալ Հայաստանը, տնտեսական բարեփոխումների իրականացման գործընթացում անխուսափելիորեն բախվում են զարգացած տնտեսություն ունեցող երկրներում գործող մոդելների այս կամ այն բաղադրիչի կամ ամբողջական մոդելի ընտրության և ներդրման խնդրին: Միաժամանակ, պետք է նշել, որ զարգացած տնտեսություն ունեցող երկրների որդեգրած համակարգերը ինքնին համասեռ չեն. դրանց հիմքում դրված են շուկայական տնտեսության տարբեր մոդելներ, որոնք, որպես կանոն, պատկանում են մոդելների այս կամ այն հիմնական խմբին: Տեսականորեն շուկայական տնտեսության մոդելների նշված խմբերից հիմնականներն են համարվում անգլո-ամերիկյան (անգլո-սաքսոնական), գերմանական (գերմանա-ֆրանսիական, ռեյնի կամ մայրցամաքային), ճապոնական և շվեդական մոդելները: Վերջիններս իրարից էապես տարբերվում են՝ տնտեսության մեջ պետության դերով և մասնակցության աստիճանով, սեփականության կառուցվածքով, հասարակության ավանդական արժեքներով, թափանցիկության (հրապարակայնության) աստիճանով և այլն: Նշված գործոնները, որպես կանոն, պայմանավորում են տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման հիմնական մեխանիզմները, այսինքն՝ կարևոր է, թե ինչպիսի ֆինանսական գործիքների և ֆինանսական ինստիտուտների միջոցով են դեպի տնտեսություն ուղղորդում անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները:

Այսպիսով, ***անգլո-սաքսոնական*** մոդելի պարագայում բաժնետիրական կապիտալում էականորեն բարձր է փոքր կամ մանրածախ ներդրողների, ինչպես նաև նրանց ներկայացնող կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների մասնակցության աստիճանը, իսկ պետության, ինչպես նաև խոշոր կորպորատիվ կառուցվածքների և բանկերի մասնակցության աստիճանը ցածր է: Բաժնետիրական կապիտալում հսկիչ փաթեթների առկայությունը էական նշանակություն չունի, իսկ բաժնետերերի և կառավարիչների կարևոր ազդակը և եկամտի աղբյուրը ընկերությունների շուկայական արժեքի բարձրացումն է, ինչը բացահայտվում է բաժնետոմսերի հրապարակային շուկայում: Այս մոդելին ավանդաբար բնորոշ է եղել արժեթղթերի շուկայի առավելագույնս թափանցիկությունը: Միևնույն ժամանակ այս մոդելի պայմաններում առաջանում է շուկայի պետական խիստ կարգավորման և վերահսկողության անհրաժեշտություն: Անգլո-սաքսոնական մոդելի դեպքում տնտեսական շրջանառությունը դառնում է առավել հագեցած դրամական միջոցներով: Առաջանում են ֆինանսական գործիքների դիվերսիֆի-

կացման, ֆինանսական շուկայի ծավալների, իրացվելիության և ֆոնդային ինդեքսների աճի, ռիսկերի նվազման, ինչպես նաև շուկայի նոր սեգմենտների և ինովացիոն ֆինանսական գործիքների ձևավորման կայուն միտումներ: Արժեթղթերի շուկան դառնում է տնտեսության իրական հատվածում զանգվածային ներդրումների հիմնական և իրացվելի աղբյուր: Արժեթղթերի շուկայի ամենախոշոր հատվածը բաժնետոմսերի շուկան է. արագորեն ավելանում են ներդրումները կոլեկտիվ ներդրումային ինստիտուտներում. բանկերն ու այլ ֆինանսական կառույցներն առավել խոշորանում են, ընդ որում առևտրային բանկերը բավականին հեռացված են կորպորատիվ արժեթղթերից և ապահովագրական ծառայություններից, իսկ ֆինանսական ինստիտուտներն անհամեմատ մասնագիտացված են, ի տարբերություն մայրցամաքային մոդելի (մասնավորապես, ունիվերսալ բանկերը Գերմանիայում):

Մայրցամաքային մոդելի պարագայում բաժնետիրական սեփականության կառուցվածքում մեծ է պետության և խոշոր կորպորատիվ կառուցվածքների և, համապատասխանաբար, փոքր է մանր բաժնետերերի և կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների մասնակցության աստիճանը: Բաժնետիրական կապիտալում, որտեղ էականորեն մեծ նշանակություն ունեն հսկիչ փաթեթներն ու ուղղահայաց մասնակցությունները, կարևորագույն դերակատարում ունեն բանկերն ու խոշոր ներդրողները: Կառավարիչների և խոշոր բաժնետերերի հիմնական նպատակը ընկերության շուկայական արժեքի մեծացումը չէ, շատ ավելի կարևորվում է արտադրության ծավալների և արտադրողականության ավելացումը, ապրանքների որակի բարելավումը և այլն: Ֆինանսական շուկայի մայրցամաքային մոդելի առանցքը կազմում են ունիվերսալ բանկերը: Շուկան առավելապես հիմնված է պարտքային գործիքների վրա (բանկային վարկեր, պարտատոմսեր), իսկ բանկերը գործում են ինչպես ավանդական բանկային ծառայությունների (վարկեր, դեպոզիտներ, վճարա-հաշվարկային գործառույթներ) շուկայում, այնպես էլ իրականացնում են արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց գործառույթներ (հիմնականում մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների միջոցով): Ի տարբերություն անգլո-սաքսոնական մոդելի՝ մայրցամաքային մոդելում ֆինանսական շուկաները նվազ դիվերսիֆիկացված են, ֆինանսական գործիքների կառուցվածքն ավելի պարզ է, կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների դերակատարությունը ֆինանսական շուկաներում համեմատաբար փոքր է:

Ճապոնական մոդելը բավականաչափ մոտ է գերմանական մոդելին այն առումով, որ բաժնետիրական կապիտալում նույնպես առկա են բավականաչափ խոշոր փաթեթների սեփականատերեր: Միևնույն ժամանակ, ի տարբերություն գերմանական մոդելի, հսկիչ փաթեթները շատ ավելի հազվադեպ են և ընկերությունները վերահսկվում են բաժնետերերի խմբերի կողմից, որոնք տիրապետում են ընկերությունների բաժնետիրական կապիտալի 10-ից 40 տոկոսին: Այսպես կոչված «հիմնական բանկերի» համակարգն իրականացնում է ֆինանսաար-դյունաբերական կոնգլոմերատների ֆինանսավորումը (հիմնականում վարկավորման միջոցով), սակայն չի հանդիսանում հսկիչ բաժնետեր, չնայած բանկերի մասնակցության չափը կոնգլոմերատի բաժնետիրական կապիտալում կարող է լինել ամենախոշորը: Միևնույն ժամանակ, չնայած բնակչության շրջանակներում առկա է ընկերությունների բաժնետոմսերի բավականաչափ մեծ բաժին, այնուամենայնիվ ընկերության աշխատողների շահերն ավելի գերակա են բաժնետերերի շահերի նկատմամբ և, որպես հետևանք, համեմատաբար ցածր է նպատակամղվածությունը շահութաբերության և բաժնետոմսերի շուկայական գնի ավելացման ուղղությամբ: Ճապոնական մոդելում շուկան հիմնականում ունի պարտքային կառուցվածք: Միաժամանակ, բնակչության բավականաչափ լայն շրջանակների մասնակցության արդյունքում բաժնետիրական կապիտալի համեմատաբար մեծ մասնատվածությունը պայմանավորում է ավելի դիվերսիֆիկացված և ակտիվ արժեթղթերի շուկայի առկայություն՝ համեմատած գերմանական մոդելի հետ: Բնականաբար, վերը նշված պարամետրերով ճապոնական մոդելը զգալիորեն զիջում է անգլո-սաքսոնական մոդելին: Ըստ էության, կարելի է արձանագրել, որ ճապոնական մոդելն իր

հիմնական դրսևորումներով որոշակի միջանկյալ դիրք է գրավում անգլո-սաքսոնական և մայրցամաքային մոդելների միջև:

Ընդհանուր առմամբ սեփականության կորպորատիվ կառուցվածքի փոփոխությանը զուգընթաց, անգլո-սաքսոնական տիպի տնտեսական մոդելով բնութագրվող երկրներից (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) դեպի ճապոնական (Ճապոնիա) և այնուհետև մայրցամաքային տիպի տնտեսական մոդելով բնութագրվող երկրներ (Ֆրանսիա, Գերմանիա), աստիճանաբար պակասում է ֆոնդային շուկաների հագեցվածությունը բաժնետոմսերով և միաժամանակ ավելանում է ֆինանսական շուկաների պարտքային բնույթն ու համապատասխանաբար նաև շուկայի հագեցվածությունը պարտքային գործիքներով (մասնավորապես, պարտատոմսերով): Ըստ այդմ, ակնհայտ է, որ տնտեսության անգլո-սաքսոնական մոդելը, որը հիմնված է բավականին մասնատված բաժնետիրական կապիտալում, մանր ներդրողների մեծաքանակության և տնտեսության ֆինանսավորման կառուցվածքում, պարտքային արժեթղթերի համեմատությամբ, բաժնային արժեթղթերի գերազանցության վրա (այսպես կոչված՝ shareholder capitalism), ականորեն տարբերվում է ճապոնական կամ եվրոպական մոդելներից, որոնց բնորոշ է բաժնետոմսերի խոշոր փաթեթների առկայությունը և շուկաների պարտքային ուղղվածությունը (stakeholder capita-lism):

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ գնալով ավելի են ուժեղանում առանձին մոդելների մերձեցման միտումները: Այսպես, Գերմանիայում 1990-ական թվականներից սկսած, զգալի նշանակություն է տրվում արժեթղթերի շուկայի (առանձնապես միջազգային ուղղվածությամբ բաղադրիչի) զարգացմանը, մասնավորապես՝ արժեթղթերի շուկայի մեխանիզմների կիրառմամբ վենչուրային ընկերությունների ֆինանսավորմանը, արժեթղթերի շուկայում բանկերի կողմից իրականացվող գործառույթների նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը, ռիսկերի նվազեցմանը, շահերի բախումների վերացմանը և ներդրողների շահերի պաշտպանությանը: Իրականացվել է արժեթղթերի շուկան կարգավորող գերմանական օրենսդրության համապատասխանեցումը Եվրոմիության իրավական ակտերի պահանջներին, որոնք, իրենց հերթին, առավելագույնս են հաշվի առնում ԱՄՆ-ի փորձը տեղեկատվության բացահայտման, գործարքների արդար իրականացման, գնային չարաշահումների և ինսայդերական առևտրի սահմանափակման բնագավառներում:

Գերմանական խոշորագույն կորպորացիաները, 1990-ական թվականներից սկսած, ամերիկյան կապիտալի շուկաներում միջոցների ներգրավման նպատակով ներկայացնողի բաժնետոմսերը փոխարինեցին անվանական բաժնետոմսերով, որպեսզի ապահովեն համապատասխանությունը բաժնետոմսերի նկատմամբ ամերիկյան ներդրողների ընդունված պահանջներին:

Բացի այդ, նախորդ դարի 80-ական թվականներից սկսած, սկսեց ակտիվանալ ամերիկյան առևտրային բանկերի մասնակցությունը կորպորատիվ արժեթղթերի շուկայում: Մասնավորապես, զգալի էին ակտիվացման միտումները ֆինանսական հոլդինգների ձևավորման ուղղությամբ, երբ արժեթղթերի շուկայի օպերատորները դառնում էին բանկերի դուստր ընկերություններ, կամ էլ ստեղծվում էին բանկեր, որոնց սեփականատերերը բրոքերային/դիլերային ընկերություններն են: Ֆինանսական հոլդինգների ստեղծումն ու գործունեությունը թույլատրելու և կանոնակարգելու նպատակով ԱՄՆ-ում 1999 թ. ընդունվեց համապատասխան իրավական ակտ, որով վերացվեց բանկերի մասին դեռևս 1933 թ. ընդունված օրենքում (Banking Act) սահմանված պահանջը, որը առևտրային բանկերին արգելում էր իրականացնել ներդրումային բանկերին բնորոշ գործառույթներ:

Այսպիսով, չնայած տարբեր մոդելների միջև հիմնարար տարբերությունների առկայությանը, վերջին 15-20 տարիների ընթացքում դրանք էական տրանսֆորմացիայի են ենթարկվում՝ նպատակ ունենալով հնարավորինս բարձրացնել ֆինանսական շուկաների արդյունավետությունը: Ընդ որում, զարգացած երկրներում մոդելների տրանսֆորմացիայի գործընթացներն առավելապես թելադրված են շուկայական զարգացումներով և տասնամյակների ընթացքում անընդհատ հղկվելով ներկայումս հնարավորինս համապատասխանում են տվյալ երկրի տնտեսական մոդելի առանձնահատկություններին՝ ի հակադրություն զարգացող երկրների գերակշիռ

մասի, որոնցում արժեթղթերի շուկաները հիմնականում ձևավորվում են վերևից՝ պետական ակտիվ միջամտության պայմաններում: Դա մի կողմից բնական է, քանի որ անիմաստ է, երբ զարգացած երկրների փորձը կիրառելու փոխարեն, անցնում են նույն ճանապարհը: Սակայն, մյուս կողմից, զարգացող երկրների պարագայում, անչափ կարևոր է, որ տնտեսության ազատականացման հիմնական սխեմաները, այդ թվում նաև արժեթղթերի շուկաների ձևավորման սկզբունքները, բխեն կոնկրետ երկրի իրողություններից և միաժամանակ առավելագույնս տեղավորվեն այնպիսի բազային մոդելի շրջանակների մեջ, որն առավելագույնս է հաշվի առնում տվյալ երկրի առանձնահատկությունները՝ ըստ այդմ նախապայմանավորելով տնտեսության և դրա առանձին հատվածների զարգացման հիմնարար սկզբունքներն ու մոտեցումները: Տնտեսության կամ դրա առանձին հատվածների մոդելները պետք է լինեն հնարավորինս ներդաշնակ և բխեն մեկ ընդհանուր տրամաբանությունից: Մինչդեռ, քիչ չեն դեպքերը, երբ նոր զարգացող երկրներում ներդրվում է որևէ զարգացած երկրի մոդել՝ շատ դեպքերում հաշվի չառնելով կամ բավարար չափով չվերլուծելով, թե ինչքանով է տվյալ երկրի համար կիրառելի այս կամ այն զարգացած երկրի մոդելը:

Այս տեսակետից կարևոր է Հայաստանում արժեթղթերի շուկայի զարգացումը դիտարկել կորպորատիվ սեփականության կառուցվածքի տեսանկյունից: Ըստ փորձագիտական գնահատման, Հայաստանում բաժնետիրական ընկերությունների գերակշիռ մասում առկա են հսկիչ փաթեթների սեփականատերեր, և սեփականությունը բավարար չափով մասնատված չէ: Ըստ էության, եթե նույնիսկ նման ընկերություններում կան բազմաթիվ փոքր բաժնետերեր, ապա նրանք, որպես այդպիսին, գերազանցապես առաջացել են պետական ձեռնարկությունների մասնավորեցման ընթացքում (մասնակի անհատույց սեփականաշնորհման մեխանիզմի կիրառման արդյունքում), բնականաբար, համապատասխան ընկերություններում գիտակցաբար ներդրումներ չեն կատարում և հիմնականում չեն իրացնում իրենց իրավունքները: Հետևաբար այս երկու կարևոր խնդիրները լուծելու համար մեր հույսը պետք է չլինի միայն բանկային համակարգը, որն առանց այդ էլ արդյունավետորեն չի իրականացնում տնտեսության ֆինանսավորման իր գործառույթը: Լուծման բանալին նաև բանկային համակարգին այլընտրանք հանդիսացող ոչ բանկային հաստատությունների և արժեթղթերի շուկայի զարգացման մեջ է, որն իր արտացոլումը պետք է ստանա նաև ընտրվող մոդելում:

Կարծում ենք, որ Հայաստանում արժեթղթերի շուկայի մոդելը պետք է լինի ոչ մաքուր ամերիկյան և ոչ էլ մաքուր գերմանական: Պետք է լինի խառը մոդել, որում հնարավորինս կկիրառվեն երկու մոդելների այնպիսի տարրեր, որոնք կապահովեն ֆինանսական շուկայի բոլոր հատվածների ներդաշնակ զարգացումը՝ միևնույն ժամանակ հաշվի կառնվեն երկրում տնտեսության զարգացման օրինաչափություններն ու տեղական իրողությունները, ինչպես նաև Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության՝ IOSCO (որի անդամ է նաև ՀՀ կենտրոնական բանկը), 30 հիմնարար սկզբունքները (այս սկզբունքների գործադրումը նպատակ է հետապնդում ձևավորել արդար, արդյունավետ և թափանցիկ շուկաներ, ներդրողների պաշտպանության և համակարգային ռիսկերի նվազեցման կայուն ու գործող ենթակառույցներ):

Մեր տեսակետով, Հայաստանում արժեթղթերի շուկայի նոր մոդելի մշակման աշխատանքներին պետք է մասնակից դարձնել պետության, ֆինանսական շուկայի, տեղական և օտարերկրյա մասնագետներին, հասարակության շահագրգիռ այլ անդամներին և այդ մոդելը պետք է ընդունվի հնարավորինս լայն քննարկումների արդյունքում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Օրենքի նախագծի երկրորդ ընթերցման ընթացքում կառավարությունը ընդունեց ՀՅԴ խմբակցության առաջարկներից 114-ը, 45 առաջարկ կընդունվեն հետագայում օրենքի փոփոխության ռեժիմով:

Մասնագիտական որոշ թերություններով հանդերձ օրենքի նախագիծը ընդունվեց ամբողջությամբ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆՑՅԱԼ, ԹԵ՞ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՆԵՐԿԱ. *փոխկապակցությունները Թուրքիայի քաղաքական պարտավորությունների համար*

Վոմինե Ամիրյան

2002 թվականին, Թուրքիայի խորհրդարանական ընտրություններում, ներկայիս իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունն իր մրցակիցների նկատմամբ տարավ բացարձակ հաղթանակ եւ խորհրդարանի 550 տեղերից զբաղեցրեց 354-ը, այդպիսով զգալիորեն մեծացնելով վարչապետի դերը: Չնայած Թուրքիան կիսանախագահական երկիր է, սակայն վարչապետն իր ազդեցիկությամբ իշխանության առաջատար տեղում է, ասել է թե՝ հիմնական խաղացողն ու որոշողը: Եվ այսպես քաղաքական ղեկը ստանձնած կուսակցության վերաբերյալ անցած տարիների ընթացքում մոտեցումները միանշանակ չեղան, ինչի հիմնական պատճառը իսլամական արժեքների վերաբերյալ մոտեցումներն էին: Թեեւ կուսակցության առաջին դեմքերն ի դեմս Աբդուլահ Գյուլի ոչ մի առիթ բաց չէին թողնում Արեւմուտքին վստահութիւն ներշնչել, որ հարգանքով կվերաբերվեն աշխարհիկ կարգերին:

Դեպի Արեւմո՞ւտք թե՞ Արեւելք՝ արեւմտյան չափանիշնե՞ր, թե՞ վերադարձ նախնյաց պատգամին: Այս հարցերի վերաբերյալ միանշանակ պատասխաններ այսօր չի ստանում ոչ Արեւմուտքը եւ ոչ էլ Արեւելքը, սակայն այս համատեքստում մեկ բան հստակ է՝ Արեւելյան գերտերություն դառնալու թուրքական նկրտումները գնալով առավել առարկայական են նշմարվում: Ինչպես միշտ, հարցերը գերազանցում են պատասխաններին, իսկ Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի են ունենում նոր զարգացումներ:

Թուրքիայի նախագահության միակ թեկնածու Աբդուլահ Գյուլին անցած ամիսների ընթացքում չհաջողվեց երկու փուլերի ընթացքում ստանալ պատգամավորների ձայների անհրաժեշտ քվեները: Այդպիսով քաղաքական իրավիճակը լարվեց, իսկ բանակի գլխավոր շտաբն էլ նախազգուշացրեց՝ աշխարհիկ կարգերը հարկավոր է պահպանել: Սա, ըստ էության, ներքաղաքական պայքարի թիվ մեկ խնդիրն է: Պետք չէ մոռանալ, որ թուրքական զինված ուժերն աշխարհիկ կարգի վճռական պաշտպաններ են: Հիշեցնենք, որ թուրքական բանակը

երեք անգամ ռազմական հեղաշրջում է կատարել Թուրքիայում: Քաղաքագետների բնորոշմամբ՝ հենց նախագահական ընտրությունների ելքից է կախված լինելու, թե ինչպիսի պետություն կդառնա Թուրքիան ապագայում՝ կմնա աշխարհիկ հանրապետությո՞ւն, թե՞ գերիշխող կլինեն կրոնական ծայրահեղականությունները: Քանի որ Թուրքիայի առջեւ այսօր կանգնած մարտահրավերները պահանջում են նոր եւ հստակ մոտեցումներ հին հարցադրումների վերաբերյալ, առավել քան երբեք Եվրամիություն ձգտող Թուրքիան այսօր պետք է սթափ նայի իր առջեւ դրված հարցերին, որոնցից խուսափելն անհնար է, հակառակ դեպքում արեւմտյան դեգերումներին փոխարինելու կգա արեւելյան անցյալը, որտեղ, ինչպես հայտնի է, ոչ բոլոր հարցերն են, որ միանշանակ են ընդունվում առաջին հերթին հենց Թուրքիայի կողմից: Վարչապետի ու զինված ուժերի միջեւ առկա լարվածությունը, քաղաքական երկխոսության առումով միանգամայն նոր տրամաբանություն առաջ բերեց: Նրանցից յուրաքանչյուրն իրեն է համարում երկրի աշխարհիկ կարգերի պահապան:

Այսօր աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում Թուրքիայի տեսակարար կշիռը էական փոփոխությունների է ենթարկվել, երկիրն այսօր լուրջ տարաձայնություններ ունի ոչ միայն իր արեւելյան հարեւանների, այլեւ ԱՄՆ-ի հետ: Բայց եւ այնպես, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միջնորդի դերը այսօր էլ Թուրքիայի համար օրակարգային է, սակայն այս հարցում Արեւմուտքն իր հավանության ազդակը դեռ չի տվել:

Այսուհանդերձ վերադառնանք նախագահական ընտրությանը, որի ելքը կկանխորոշի այս բոլոր հարցերի, ըստ էության, քաղաքական լուծումը: 57-ամյա արտգործնախարարին Թուրքիայում չէին պաշտպանում՝ պատճառաբանելով, թե նա հավատացյալ մահմեդական է, իսկ կինը մինչ օրս գլխաշոր է կրում: Ասել է թե՝ աշխարհիկ կարգերի հիմնական խախտողները հենց Թուրքիայի առաջին դեմքերն են: Գյուլի թեկնածության պատճառով իշխող կուսակցությունը քաղաքական ճգնաժամի առջեւ կանգնեց եւ ստիպված եղավ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնել: Մինչեւ վերջին պահը քաղաքական վերլուծաբանները դժվարանում էին կանխատեսել, թե ում թեկնածությունը կառաջադրի վարչապետ Էրդողանը՝ խորհրդարանական ընտրություններում իր կուսակցության համոզիչ հաղթանակից հետո: Որոշ փորձագետներ պնդում էին, թե նա կընտրի փոխզիջումային տարբերակ, ինչպես Ազգային մեծ ժողովի նոր խոսնակ Քոքսալ Թոփթանի դեպքում, որի թեկնածությանը կողմ էին նաեւ ընդդիմադիր ուժերը: Էրդողանը մինչեւ վերջին պահը չէր բացառում, որ կուսակցությունը կարող է առաջադրել միանգամից մի քանի թեկնածու: Սակայն երկարատեւ քննարկումներից հետո «Արդարություն եւ զարգացում»-ը առաջադրեց միայն Գյուլի թեկնածությունը: Ընդդիմադիր կուսակցության առաջնորդներից մեկը նշում է. «*Վայել չէ ունենալ մի նախագահ, որը խնդիրներ ունի թուրքական հանրապետության հիմքում ընկած փիլիսոփայության հետ*», իսկ Գյուլի ընտրությունը, նրա բնորոշմամբ, կխախտի Թուրքիայի քաղաքական հավասարակշռությունը: Առաջին փուլում Գյուլը 550 տեղից բաղկացած խորհրդարանում ստացել էր ձայների մեծամասնությունը՝ 341 քվե, սակայն դա բավարար չէր առաջին փուլով ընտրվելու համար: Օգոստոսի 24-ին կայացած երկրորդ փուլում եւս Գյուլը չընտրվեց, իսկ երրորդ փուլում գործեց ձայների պարզ մեծամասնության սկզբ-

բունքը: Այսպիսով Թուրքիայի նախագահ է դառնում Աբդուլահ Գյուլը: Թուրքիայի բանակը, որ անցած 50 տարիների ընթացքում չորս կառավարություն է գահընկեց արել, տարբեր առիթներով ակնարկում է, որ չի ողջունում իսլամիստ Գյուլի ընտրությունը նախագահի պաշտոնում: «Ասոշիեյթեդ փրեսը» գրում է. «*Թուրքիայի նախագահի պաշտոնում միշտ ընտրվել է աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչ, Գյուլի ընտրությունը նշանակում է, որ «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը զբաղեցրել է Թուրքիայի քաղաքական հիերարխիայի բոլոր գլխավոր պաշտոնները*»:

Հայաստանի նախագահն ու արտաքին գործերի նախարարը շնորհավորեցին Գյուլին նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Նշենք, որ 2003 թվականին Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերը եւս շնորհավորել էր Ռոբերտ Քոչարյանին: Ինչ խոսք, Թուրքիայում կայացած ընտրությունները մի շարք առումներով կարեւոր են նաեւ Հայաստանի համար: Թուրքիայի կանխատեսելի ապագան հայ-թուրքական հարաբերություններում կարող է որոշակի հստակություն մտցնել: Թեեւ չպետք է մոռանանք, որ թուրքական քաղաքական եւ ոչ մի կուսակցություն խորհրդարանական ընտրություններում Հայաստանի հետ հարաբերությունները նորմալացնելու առաջարկով հանդես չեկավ:

Նախագահը Թուրքիայում ընտրվում է 7 տարով եւ չի կարող վերընտրվել: Գյուլն արդեն հաստատել է նոր կառավարության կազմը, որ ներկայացրել էր վարչապետ Ռեջեփ Էրդողանը: Արտաքին գործերի նախարար նշանակվեց նախկին էկոնոմիկայի նախարար՝ 40-ամյա Ալի Բաբաջանը: Ի դեպ, նա համարվում է Գյուլի դաշնակիցը: Իսկ Էրդողանը համոզված է, որ կառավարության նոր թիմը ի զորու է իրականացնել պետության համար առաջնային նպատակները եւ Թուրքիան դարձնել ազատ ու բարգավաճ: Տեղեկացնենք, որ կառավարության նոր կազմը բաղկացած է 25 անդամներից՝ «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունից, այդ թվում՝ երեք փոխվարչապետ, վեց պետնախարար: Կառավարության կազմում ընդամենը մեկ կին նախարար կա: Գյուլի երդմնակալության արարողությանը ներկա չէին բարձրաստիճան զինվորականները, եւ սա դիտվեց որպես դժգոհության նշան: Նրանց հիմնական մտավախությունն այն էր, որ Գյուլի ղեկավարման օրոք կիշխեն կրոնական ծայրահեղականները: Սակայն ինքը Գյուլը խոստացավ հավատարիմ մնալ կառավարման աշխարհիկ կարգին, մարդու իրավունքների պաշտպանությանն ու ժողովրդավարության սկզբունքներին: Իսկ թուրք հայտնի մեկնաբան Ալի Բիրանդը ասել է. «*Ամեն ինչից զատ, Գյուլը նաեւ փոխզիջումների գնացող է*»: Քաղաքական որոշ շրջանակներում համոզված են, որ պաշտոնական Անկարան այսօր զանազանակերպված (դիվերսիֆիկացված) արտաքին քաղաքականություն է վարում, որում մեծ տեղ է հատկացվում հարեւանների հետ հարաբերությունների նորմալացմանը եւ նոր դաշնակիցների ձեռք բերմանը:

Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը Թուրքիայի հետ հարաբերություններում անփոփոխ է՝ հաստատել հարաբերություններ առանց որեւէ նախապայմանի, եւ «*սա միանգամայն տրամաբանական է*»,- ասում է արեւելագիտության ինստիտուտի տնօրենը: Նշենք, որ շուտով Թուրքիայի ռազմականացված սահմանադրության մեջ սպասվում են փոփոխություններ:

Թուրքիայում հեղաշրջման նախադրյալներ պատմաբանները տեսնում են, սակայն «*այսօր միջավայրը դրա համար այնքան էլ բարենպաստ չէ*»,- ասում են նրանք: Այնուհանդերձ, արվում են կանխատեսումներ առ այն, որ Թուրքիայի ներկայիս կառավարությունը հիմնական ուղղություններով կշարունակի նախորդի որդեգրած քաղաքականությունը: Հարավային Կովկասը պառակտելու խնդիրը այսօր էլ Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգում է, որի նպատակն է կրտսեր դաշնակիցների միջոցով ստեղծել մի դաշինք, որը սկզբնական շրջանում կլինի տնտեսական բնույթի, իսկ հետագայում կվերածվի ռազմաքաղաքական դաշինքի: Սակայն, իմանալով Հարավային Կովկասում Ռուսաստանի հստակ շահերը, խիստ կասկածելի է, որ Ռուսաստանը աշխարհաքաղաքական նոր դաշինքին դրականորեն կվերաբերվի:

ԱՄՆ ՀՀՊ համակարգը. հեռանկարներ հարավկովկասյան ուղղությամբ

Կարեն Վերանյան

ԱՄՆ ՀՀՊ համակարգի ստեղծման ծրագիրը մինչև 2013 թ.

Վերջին կես տասնամյակում ռուս-ամերիկյան հարաբերություններում է՛լ ավելի են ընդգծվում ռազմական, ռազմաքաղաքական ասպեկտները: 2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո, նույն թվականի դեկտեմբերի 13-ին, ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը հայտարարեց ԽՄ-ի և ԱՄՆ-ի միջև 1972 թ. մայիսի 26-ին ստորագրված «Հակահրթիռային պաշտպանության համակարգերի սահմանափակման մասին» պայմանագրից ամերիկյան կողմի միակողմանի դուրս գալու մասին, ինչը միանշանակ խորհրդանշում էր Սպիտակ տան նոր ռազմավարության ձևակերպման մասին: Իսկ ս.թ. հուլիսին ԱՄՆ Սենատում հաստատված 2008 թ. ԱՄՆ ռազմական ծախսերի մասին օրենքի փոփոխություններով ամերիկյան ՀՀՊ համակարգի ստեղծումը հռչակվում էր ԱՄՆ պետական քաղաքականության կարևորագույն բաղադրիչ:

Մինչև 2013 թ. Վաշինգտոնը նախատեսում է հիմնել հակահրթիռային պաշտպանության համակարգ՝ 2015 թ. հավանական սպառնալիքների կանխման նպատակով: Մասնավորապես ԱՄՆ Օդուժի Հրթիռային պաշտպանության գործակալության (US Air Forces-Missile Defense Agency) Հրթիռային պաշտպանության ծրագրի համաձայն, մինչև 2013 թ. Վաշինգտոնի ՀՀՊ համակարգի ստեղծումը ենթադրում է հակառակորդի հրթիռային երեք հիմնական սպառնալիքների խոցում՝ համապատասխան հակահրթիռային արսենալով (առավել մանրամասն տե՛ս Հավելված 1-ում): Առաջինը. հեռահար սպառնալիքների խոցում, որի համար ՀՀՊ համակարգի տրամադրության տակ են լինելու ցամաքային հենակետային 54 հակահրթիռներ (44-ը տեղակայվելու է ԱՄՆ-ում, 10-ը՝ Լեհաստանում), արագ արձագանքման ռադիոտեղորոշիչ կայաններ (Ալյասկա, Կալիֆորնիա, Գրենլանդիա, Մեծ Բրիտանիա, ինչպես նաև Չեխիա):

Երկրորդը. տարածաշրջանային և ասիմետրիկ

սպառնալիքների ոչնչացում, որտեղ ենթադրվող արսենալների համախումբը թույլ կտա խոցել հակառակորդի մինչև 3 հազ. կմ հեռահարության բալիստիկ հրթիռը հետագծի միջնամասում (SM-3 տեսակի 132, SM-2 ավելի քան 100 հրթիռ), հրթիռների անկման փուլում (THAAD-Terminal Haigh Altitude Area Defense տեսակի 4 համալիր՝ 96 հակահրթիռով): Եվ երրորդը. հնարավոր և հանկարծահաս սպառնալիքների խոցում, որի համար զինանոցում նախատեսվում է ծովային հետնակետային ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայում Խաղաղ օվկիանոսում, առաջնային մարտական 2 ռադիոտեղորոշիչ կայան՝ տեղակայելով Ճապոնիայում և Կասպյան (Կովկասյան) տարածաշրջանում:

Միջազգային ռազմաքաղաքական զարգացումներից այսօր ամենաակտուալ թեման, իհարկե, շարունակում է մնալ Արևելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) համակարգերի հնարավոր տեղակայման հարցը, ինչը և հանդիսանում է առաջիկա տարիներին ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության ազգային ծրագրի մի մասը: Մասնավորապես խոսքը վերաբերում է Իրանի և Հյուսիսային Կորեայի կողմից հնարավոր սպառնալիքներից պաշտպանվելու նպատակով Չեխիայում ռադարային համակարգի և Լեհաստանում 10 հրթիռների տեղակայմանը: Նախապես՝ ս.թ. փետրվարի կեսերին վերոնշյալ երկրների (նաև Հունգարիայի) իշխանությունները պատրաստակամություն էին հայտնել իրենց երկրներում տեղակայել հակահրթիռային աշխատանքային համալիրներ և ամերիկյան կողմի հետ բանակցություններ էին վարում տեղանքի ընտրության հարցում[1]:

Հարավկովկասյան վեկտոր

Արևելյան Եվրոպայում ամերիկյան ՀՀՊ տեղակայման շուրջ բանակցություններին զուգահեռ, վերջերս էապես ակտիվացել են ՆԱՏՕ-Հարավային Կովկաս և առանձնապես ՆԱՏՕ-Վրաստան շփումները (տե՛ս Հավելված 2): Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Վրաստանի համագործակցության խորացումը պետք է վերագրել 2003 թ. «վարդերի հեղափոխությանը», ինչը անցումային նշանակություն ունեցավ տարածաշրջանի ռազմաքաղաքական ընթացիկ զարգացումների ու անվտանգության հիմնախնդիրների ընդհանուր տրամաբանության վերափոխման, վերաիմաստավորման առումով: Ի տարբերություն հարևան երկու հանրապետությունների, 2003 թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո, Վրաստանի գործող ղեկավարությունը անթաքույց հայտարարեց երկրի արտաքին քաղաքականության միավեկտորացման և եվրաատլանտյան կառույցներին ինտեգրման մտադրության մասին: Հյուսիսատլանտյան դաշինքն, իր հերթին, ՆԱՏՕ-Հարավային Կովկաս համագործակցության խորացման ու կազմակերպության ռազմաքաղաքական հորիզոնների ընդլայնման հիմնական խաղաթղթերը դրեց Վրաստանյան հարթակում՝ շարունակելով համագործակցությունը Հայաստանի և Ադրբեջանի հետ[2]:

Վրացական կողմը, ՆԱՏՕ-ի հետ համագործակցության միջոցով, նախ փորձում է լուծել երկրի ներքին հիմնախնդիրներն առանց ռուսական կողմի միջամտության՝ վերջինիս ուղղությամբ եվրաատլանտյան ուղղակի կամ անուղղակի շահագրգիռ ինստիտուտների ճնշումների բանեցման ճանապարհով: Եվ երկրորդ՝ պաշտոնական Թբիլիսին լուրջ հայտ է ներկայացնում ինչպես երկրի, այնպես էլ ողջ տարածաշրջանի համար եվրաատլանտյան և եվրոպական կառույցներին ինտեգրման հարցում, ինչը և ուղղակիորեն առնչվում է տարածաշրջանում ՌԴ անվտանգության խնդիրներին: Մյուս կողմից, Հարավային Կովկասում եվրաատլանտյան ինստիտուտների, տվյալ պարագայում՝ ՆԱՏՕ-ի դիրքերի ընդլայնումն իր հերթին, կնպաստի ՆԱՏՕ-Ադրբեջան, ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության ընդլայնմանը[3]:

Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության խորացման և Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի առաջխաղացման գործում առաջին հերթին շահագրգռվածություն են ցուցաբերում Վաշինգտոնում[4]: Ամերիկյան կողմը Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության հարցը դիտարկում է հիմնականում երկու՝ հակառուսական (ռազմավարական)

և տարածաշրջանային (համալիր) վեկտորներով, որոնք շատ հաճախ չունեն բաժանարար գծեր և փոխլրացնում են մեկը մյուսին: Արևելյան Եվրոպայում ընթացող ռազմաքաղաքական զարգացումներին զուգահեռ, Վաշինգտոնը ՆԱՏՕ-Հարավային Կովկաս ձևաչափի միջոցով ակտիվացրել է Հարավային Կովկասում և մասնավորապես Վրաստանում ամերիկյան ռադարային կամ ՀՀՊ համակարգերի հնարավոր տեղակայմանն ուղղված PR-արշավը[5]: Դեռևս 2007 թ. մարտի 1-ին, ԱՄՆ ՀՀՊ հարցերով գործակալության ղեկավար գեներալ-լեյտենանտ Հենրի Օբերինգը հայտարարեց, որ Միացյալ Նահանգները մտադիր է մինչև 2011 թ. Հարավային Կովկասում տեղակայել ՀՀՊ համակարգի մոբիլային ռադար, որը թույլ կտա հայտնաբերել Իրանի տարածքից հրթիռների արձակումը և փոխանցել այդ տվյալները Չեխիայի համապատասխան ռադիոտեղորոշիչ կայան: Մոբիլային ռադարն իրենից ներկայացնում է շարժական մի համակարգ, որը կարող է տեղակայվել ընդամենը մի քանի օրվա ընթացքում:

Ավելին, Ադրբեջանում տեղակայված Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի (իսկ հետո նաև՝ ՌԴ Արմավիրի մերձակայքում կառուցվող հրթիռարձակման նախազգուշացման կայանի) համատեղ շահագործման հարցի շուրջ ռուս-ամերիկյան բանակցություններից հետո, որոնք, ինչպես և սպասվում էր, դժվար թե լուրջ արդյունքներ տան, Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի շահագործման հարցերով զբաղվող ամերիկյան փորձագիտական խումբը Ադրբեջանից անմիջապես մեկնեց Վրաստան[6]: Ոչ պաշտոնական տվյալներով, փորձագիտական խումբը սեպտեմբերի վերջերից հետազոտություններ էր անցկացնում նմանատիպ ռադիոտեղորոշիչ կայան Աջարիայում հիմնելու ուղղությամբ:

ՁԼՄ-ներում, այդ օրերին, շրջանառվում էին Վրաստան ժամանած մասնագետների կողմից Վրաստանի ավիանավիգացիոն հնարավորությունների ուսումնասիրման և երկրում ամերիկյան ՀՀՊ համակարգի տեխնոլոգիական տարրերի տեղակայման հավանականության մասին լուրերը: Իր հերթին, դեռևս ս.թ.մայիսի 2-ին, Վրաստանի ԱԳՆ ղեկավար Գելա Բեժուաշվիլու՝ բրիտանական «Financial Times» թերթին տված հարցազրույցում, պաշտոնյան հաստատել էր անհրաժեշտության դեպքում Վրաստանում ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման՝ վրացական կողմի պատրաստակամությունը: Ի դեպ, սևծովյան ափամերձ շրջանում՝ Բաթումիի և Փոթիի միջև ընկած հատվածում, ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման մտադրության մասին պաշտոնական Թբիլիսին որոշում էր կայացրել դեռևս 2007 թ. օգոստոս ամսին[7]: Նշենք, որ կայանը (ձեռք է բերվել Ֆրանսիայում) տեղակայվելու է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ՔԱՄԿ) խորհրդատվության հիման վրա: Նախատեսվում է կայանը միացնել Վրաստանի օդային տարածքի վերահսկողության միասնական համակարգին՝ վերահսկելով երկրի օդային և ջրային տարածքների վրայով ինքնաթիռների թռիչքները[8]:

Թեև պաշտոնական Վաշինգտոնը շարունակում է հերքել Վրաստանի տարածքում ամերիկյան ՀՀՊ համակարգի կամ ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման հնարավորության հարցը, այնուհանդերձ, վերջին կես տարվա կտրվածքով, վրաց-ամերիկյան ռազմական շփումները, Վրաստանում ՆԱՏՕ-ի ակտիվացման տեմպերը թույլ են տալիս վերապահումներով մոտենալ ԱՄՆ-ի պաշտոնական հայտարարություններին: Նախ՝ վերջին մի քանի ամիսներին, ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, ՆԱՏՕ-ի թբիլիսյան տեղեկատվական կենտրոնը, Աջարիայում տեղակայված ՆԱՏՕ-ի մասնաճյուղի հետ համագործակցությամբ, ուսումնասիրողական լուրջ աշխատանքներ ու տարբեր հասարակական-քաղաքական միջոցառումներ էր իրականացնում երկրի սևծովյան շրջաններում[9]:

Դժվար չէ նկատել, որ Արևելյան Եվրոպայում ամերիկյան ՀՀՊ համակարգերի տեղակայման հարցն անուղղակիորեն առնչություն ունի Վրաստանում նմանատիպ հակահրթիռային համակարգի ստեղծման շուրջ վերջին շրջանառվող լուրերի հետ: Պատահական չէր նաև

ս.թ. օգոստոսի 6-ին Վրաստանի Ցիթելուբանի գյուղի շրջանում հրթիռի հայտնաբերման հանգամանքը, ինչը պաշտոնական Թբիլիսիի պնդմամբ, ռուսական արտադրության Raduga Kh-58 տեսակի տակտիկական հակառադարային ղեկավարվող հրթիռ էր: Դեպքի առնչությամբ Բրյուսելում Վրաստանի արտգործնախարար Գ. Բեժուաշվիլին հայտարարեց, որ վրացական կողմը ստացել է օդային տարածքի վերաբերյալ տվյալների փոխանակման համակարգում Վրաստանի ներգրավման հարցում եվրաատլանտյան կազմակերպության աջակցությունը: Հրթիռի դեպքին հաջորդեց Թբիլիսիի պաշտոնական հաղորդագրությունը՝ օգոստոսի 22-ին Աբխազիայի լեռներում, իբր, Վրաստանի սահմանը հատած ռուսական ինքնաթիռի՝ վրացական կողմից ռմբահարման ու պայթեցման միջադեպի վերաբերյալ, ինչը սակայն հերքվեց պաշտոնական Մոսկվայի կողմից: Նույն օրը ՆԱՏՕ-ի անդամ-պետությունները, ընդառաջելով վրացական կողմի հայտարարությանը, հանդես եկան Վրաստանին ռադարային տվյալների տրամադրման հնարավորության մասին հայտարարությամբ[10]:

Ինչևէ, բերված փաստարկները, առավել ևս ԱՄՆ Պենտագոնի Հրթիռային պաշտպանության գործակալության կողմից պատրաստված ՀՀՊ համակարգի ծրագիրը, որը նախատեսվում է իրագործել առաջիկա կես տասնամյակի ընթացքում, իրապես հաստատում են, որ Հարավային Կովկասում (ավելի հավանական է՝ Վրաստանում) ամերիկյան ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման հարցը պարզապես ժամանակի խնդիր է և վաղ թե ուշ ստանալու է իր լուծումը: Իսկ ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպայում, Կովկասում ամերիկյան ՀՀՊ համակարգի ստեղծման շուրջ հակասական հայտարարություններին, կարծիքներին, կամ շրջանառվող լուրերին, ապա դրանք մասամբ ունեն քաղաքական, մասամբ նաև՝ PR-արշավի ու «պլացդարմային» ուղղվածություն:

Հետևություններ

ԽՍՀՄ փլուզումից հետո, համաշխարհային ռազմականացման մրցավազքի իրական մեկնարկը դրվեց 2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո՝ նույն թվականի դեկտեմբերի 13-ին, երբ ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը հայտարարեց ԽՄ-ի և ԱՄՆ-ի միջև 1972 թ. մայիսի 26-ին ստորագրված «Հակահրթիռային պաշտպանության համակարգերի սահմանափակման մասին» պայմանագրից ամերիկյան կողմի միակողմանի դուրս գալու մասին: Ընդամենը 5 տարի անց չհապաղեց նաև Ռուսաստանի Դաշնության համարժեք արձագանքը. 2007 թ. հուլիսի 13-ին ՌԴ նախագահ Վ. Պուտինը ստորագրեց «Եվրոպայում ընդհանուր զինված ուժերի մասին պայմանագրի և դրա հետ առնչվող միջազգային համաձայնագրերի՝ Ռուսաստանի Դաշնության կողմից դադարեցման մասին» հրամանագիրը: Իսկ երբ ս.թ. հունիսի 15-ին Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի համատեղ շահագործման և Եվրոպայում ամերիկյան ՀՀՊ համակարգի տեղակայման հարցում ՆԱՏՕ-ն հայտարարեց Վաշինգտոնի դիրքորոշմանն իր աջակցության անփոփոխության մասին, օգոստոսի կեսերին հետևեց նախագահ Պուտինի կողմից ստորագրված հաջորդ հրամանագիրը, որի համաձայն ս.թ. օգոստոսի 17-ից, 15-ամյա դադարից հետո, վերսկսվելու են ռուսաստանյան ռազմավարական ավիացիայի մշտական թռիչքները: Իսկ նույն ամսվա 27-ին Բելառուսում ՌԴ դեսպան Ա. Սուրիկովը հայտարարեց, որ «Ռուսաստանն ու Բելառուսը կարող են համատեղ ռազմական, այդ թվում և միջուկային նոր օբյեկտների ստեղծման մասին որոշում կայացնել»[11]:

Ամեն դեպքում մի բան ակնհայտ է. ամերիկյան նախաձեռնություններով արդեն տրվել է գլոբալ ռազմական նոր մրցարշավի մեկնարկը՝ չբացառելով տարածաշրջանային և միջազգային մակարդակով ռիսկային գործոններն ու հավանական ոչ բնական կատակլիզմները: Արդյունքում, թե այս նոր զարգացումները ինչպիսի համակարգային երաշխիքներ կբերեն միջազգային անվտանգության ապահովման ասպարեզում, ցույց կտա միայն ժամանակը:

Հավելված 1

ԱՄՆ ՀՀՊ գործող համակարգի կազմը (տեղակայված Հյուսիսային Ատլանտյան Եվրոպայում, Արևմտյան Եվրոպայում և Հեռավոր Արևելքում (2007թ. մարտի 1)

- Արագ արձագանքման 4 ռադիոտեղորոշիչ կայան «Cobra Dane» տեսակի՝ Շեմիա կղզում, Ալեուտյան կղզիներում, «Beale» տեսակի՝ Կալիֆորնիայում, «Fylingdales»՝ Մեծ Բրիտանիայում և «Thule»՝ Գրենլանդիայում, Դանիայում.
- Ծովային հենակետային SBX (Sea-Based X-Band Radar) ռադիոտեղորոշիչ կայան՝ Ալյասկայի շրջանում (Խաղաղ օվկիանոս).
- Առաջնային հենակետային FBX-T (Forward-Based X-Band Radar-Transportable) ռադիոտեղորոշիչ կայան՝ Հոնսյու կղզում (Ճապոնիա).
- Ցամաքային հենակետային 16 հակահրթիռ, որից 13-ը Ֆորտ-Գրիլիում (Ալյասկա), 2-ը՝ Վանդենբերգի ավիաբազայում (Կալիֆորնիա).
- «Aegis» համակարգի 16 հածանավ և էսկադրոնային ականակիր, ընդհանուր առմամբ 18 SM-3 (Standard Missile) տեսակի հակահրթիռներով՝ Խաղաղ օվկիանոս և Միջերկրական ծով.
- «Patriot» (PAC-3) տեսակի հակահրթիռային համալիրներ:

Մինչև 2013 թ. ԱՄՆ ՀՀՊ համակարգի արսենալը

Հեռահար սպառնալիքների խոցման՝

- Ցամաքային հենակետային 54 հակահրթիռ, 44-ը ԱՄՆ-ում, 10-ը՝ Լեհաստանում.
- Արագ արձագանքման 5 ռադիոտեղորոշիչ կայան, տեղակայումը՝ Ալյասկա, Կալիֆորնիա, Գրենլանդիա, Մեծ Բրիտանիա և Չեխիա.

Տարածաշրջանային և ասիմետրիկ սպառնալիքների խոցման՝

- «Aegis» տեսակի 18 ռազմանավ.
- SM-3 տեսակի 132 հակահրթիռ (մինչև 3 հազ. կմ հեռահարության բալիստիկ հրթիռների ոչնչացում հետագծի միջնամասում).
- «THAAD» (Terminal High Altitude Area Defense) տեսակի 4 համալիր, ընդհանուր առմամբ 96 հակահրթիռներով (բալիստիկ հրթիռների ոչնչացում նրանց անկման փուլում).
- Ծովային հենակետային SM-2 ավելի քան 100 հակահրթիռ (բալիստիկ հրթիռների ոչնչացում՝ վերջիններիս հետագծի միջնամասում).

Հնարավոր (ներկա) և հանկարծահաս սպառնալիքների խոցման՝

- Ծովային հենակետային SBX 1 ռադիոտեղորոշիչ կայան՝ Խաղաղ օվկիանոս.
- Առաջնային մարտական FDR (Forward-Deployable Radar) 2 ռադիոտեղորոշիչ կայան՝ Ճապոնիա և Կասպյան/Կովկասյան տարածաշրջան.





Ծովային հենակետային SBX ռադիոտեղորոշիչ կայանի ինտերիերը





Առաջնային մարտական FDR (ձախից) և առաջնային հենակետային FBX-T շարժական (աջից) ռադիոտեղորոշիչ կայաններ

Աղբյուրը US Department of Defense. Missile Defense Agency

• Հավելյալ առաջնային հենակետային FBX-T 2 ռադիոտեղորոշիչ կայան:

Հավելված 2

Վրաստան-ՆԱՏՕ համագործակցությունը. պատմական ակնարկ

Խորհրդային վարչակարգի փլուզումը համագործակցության նոր հեռանկարներ և հորիզոններ բացեց Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմաքաղաքական, աշխարհագրական ընդլայնման համար: 1991 թ. ի վեր ՆԱՏՕ-ի և կազմակերպությանը չանդամակցող երկրների (առաջին հերթին Եվրոպա, Կենտրոնական Ասիա և Հարավային Կովկաս) միջև հարաբերությունները զարգանում են «գործընկերական համագործակցության» ձևաչափով[12], որոնք ուղղված են նորանկախ հանրապետությունների անվտանգության ապահովման, ժողովրդավարական կառավարման ամրապնդման, զինված ուժերի արդիականացման և այլ ոլորտների հիմնախնդիրներին:

Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունները սկսել են 1992 թ., երբ Վրաստանն ընդգրկվեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդ (1997 թ. այն վերանվանվեց «Եվրաատլանտյան գործընկերության խորհուրդ»), իսկ երկու տարի անց՝ 1994 թվականին, Վրաստանը, ինչպես և իր երկու հարևան հանրապետությունները, միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրին: 2002 թ. Վրաստանը հայտարարեց Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության և «Անհատական գործընկերության գործողության ծրագրում» (ԱԳԳԾ) ընդգրկվելու երկրի մտադրության մասին: Վրաստանում նոյեմբերյան իշխանափոխությամբ նոր հորիզոններ բացվեցին Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության խորացման ուղղությամբ: Արդյունքում՝ 2004 թ. (հոկտեմբերի 29) Վրաստանը դառնում է ՆԱՏՕ-ի հետ ԱԳԳԾ իրականացման շուրջ համաձայնության եկած առաջին պետությունը[13]: Թերևս նաև այս հանգամանքով էր պայմա-

նավորված 2004 թ. կայացած ՆԱՏՕ-ի ստամբուլյան գագաթնաժողովում կազմակերպության ուշադրության բևեռումը Հարավային Կովկասի վրա, որի արդյունքում շատ չանցած, տարածաշրջանում նշանակվեց ՆԱՏՕ-ի հատուկ ներկայացուցիչ: Միայն վերջերս՝ 2006 թ. սեպտեմբերին ՆԱՏՕ-ի ղեկավարությունն առաջարկեց Վրաստանին սկսել «Ինտենսիվ երկխոսություն» (խորացված երկխոսություն) եվրաատլանտյան կազմակերպությանն անդամակցելու՝ երկրի մտադրության հարցի շուրջ[14]: Ինչ խոսք, թեև Վրաստան-ՆԱՏՕ համագործակցությունում այս նոր, ավելի բարձր մակարդակը չի երաշխավորում կազմակերպությանը Վրաստանի անդամակցության հարցը, այնուհանդերձ, համաձայնենք, որ սա լուրջ հայտ էր Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության գործընթացի համատեքստում:

ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի համագործակցության խորացման հաջորդ ձևաչափը կամ փուլը վերաբերում է «Անդամակցության գործողությունների ծրագրին» (ԱԳԾ), որից հետո երկիրը կարող է դառնալ կազմակերպության լիիրավ անդամ[15]: Կազմակերպության հաջորդ գագաթնաժողովում, որը նախատեսվում է գալիք՝ 2008 թվականին, ըստ ամենայնի, նոր հեռանկարներ կբացվեն ՆԱՏՕ-ին անդամակցել ձգտող կամ այդ ճանապարհով ընթացող երկրների, այդ թվում Վրաստանի համար:

---

[1] Ոչ պաշտոնական տվյալների համաձայն, ս.թ. հուլիսին մասնավորապես Չեխիայի անվտանգության խորհուրդը որոշում ընդունեց երկրի տարածքում ԱՄՆ ՀՀՊ ռադիոտեղորոշիչ կայանի շահագործման համար տեղանք տրամադրել Բրդիի ռազմական հրածգարանի շրջանում՝ Պրահայից շուրջ 90 կմ դեպի հարավ-արևմուտք:

[2] Թեև ՆԱՏՕ-ն, ինչպես կազմակերպության ղեկավարությունն է բազմիցս հայտարարել, հարավկովկասյան վեկտորն ընկալում է ոչ այնքան մասնակի, որքան մեկ ամբողջական միավոր:

[3] Սակայն դա ամենևին էլ չի հիմնավորում կազմակերպությանը Ադրբեջանի կամ Հայաստանի հետագա անդամակցության հավանականության հարցը:

[4] 2005 թ. ՆԱՏՕ-ի պաշտպանական ընդհանուր ծախսերը հաշվվել են $736,5 մլրդ., որից շուրջ 64,1%-ը ($472,2 մլրդ.) կազմել է ԱՄՆ մասնաբաժինը:

[5] Ի տարբերություն Լեհաստանում կամ Չեխիայում ամերիկյան ՀՀՊ համակարգերի տեղակայմանը, որի իրականացումը ուղղակիորեն առնչվում է եվրոպական մայրցամաքի միասնական անվտանգության համակարգի կայացման՝ Եվրամիության տեսլականներին:

[6] Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանը հիմնվել է դեռևս 1985 թ. և վերահսկում է 6 հազ. կմ շառավղով տարածք՝ ընդհուպ մինչև Աֆրիկայի հյուսիսային և Հարավարևմտյան Ասիայի շրջանները: Կայանի ուղղակի տեսանելիության գոտում ընդգրկվում են Թուրքիան, Պակիստանը, Հնդկաստանը, Իրանն ու Իրաքը, Ավստրալիան, Աֆրիկայի երկրների մեծ մասը, Հնդկական օվկիանոսի կղզիները: Կայանի տեխնիկական պոտենցիալը թույլ է տալիս այն շահագործել մինչև 2012 թ.: Ռադիոտեղորոշիչ կայանի համատեղ շահագործման մասին առաջարկությունը հնչեցվել էր ՌԴ նախագահ Պուտինի կողմից՝ Արևելյան Եվրոպայում ամերիկյան ռադար և ՀՀՊ համակարգ չտեղակայելու դիմաց, սակայն ամերիկյան կողմը չընդունեց այդ առաջարկը:

[7] Ներկայումս Վրաստանի տարածքում գոյություն ունեն մի քանի ռադիոտեղորոշիչ կայաններ, որոնք շահագործման են դրվել դեռևս նախորդ դարի 80-90-ականներին և չեն համապատասխանում ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին:

[8] Կայանը, որի շահագործման համար հատուկ պատրաստողական աշխատանքներ են անցել հենց վրացի մասնագետները, գործում է 450 կմ շառավղով:

[9] Ս.թ. հուլիսի վերջին ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոն հիմնվեց նաև Կոդորի կիրճում (Վերին Աբխազիա): Պաշտոնական տվյալների համաձայն, առաջիկայում նախատեսվում է հերթական կենտրոնները բացել նաև Սամցխե-Ջավախքում:

[10] Վրաստանի, ինչպես և Ալբանիայի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի և Մակեդոնիայի հետ «Օդային տարածքում իրադրության մասին ինֆորմացիայի փոխանակման» ՆԱՏՕ-ի ծրագիրը մշակվել էր դեռևս 2003 թ., սակայն տեխնիկական խնդիրները վերջնականապես չէին կարգավորվել:

[11] Նշենք նաև, որ դեռևս ս.թ. մարտի վերջերին հնչեց Աբխազիայի չճանաչված հանրապետության նախագահ Ս. Բագապշի առաջարկը ՌԴ-ին՝ Աբխազիայի տարածքում ռադիոտեղորոշիչ կայան տեղադրելու մասին: Նրա հավաստիացմամբ, Աբխազիայում գոյություն ունի պահեստավորված կայան, որը կարող է համապատասխան վերանորոգումից հետո դրվել շահագործման՝ վերահսկելով Հարավային Կովկասի և միջերկրածովյան տարածաշրջանները:

[12] Հյուսիսատլանտյան դաշինքի նոր Ռազմավարական հայեցակարգի (1999 թ., Վաշինգտոն) համաձայն, գործընկերական հարաբերությունների հաստատումը համարվում է ՆԱՏՕ-ի առջև ծառացած անվտանգության ապահովման կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

[13] Ադրբեջանը համաձայնեցրել է ԱԳԳԾ-ն 2005 թ. մայիսի 27-ին, Հայաստանը՝ 2005 թ. դեկտեմբերի 16-ին:

[14] «Ինտենսիվ երկխոսություն» (խորացված երկխոսություն) ձևաչափը ստեղծվել է դեռևս 1997 թ. ՆԱՏՕ-ի մադրիդյան գագաթնաժողովում:

[15] Ներկայումս երեք երկրներ՝ Ալբանիան, Խորվաթիան և Մակեդոնիան, որոնք հանդիսանում են ՆԱՏՕ-ի «Անդամակցության գործողությունների ծրագրի» անդամ, նույնպես հայտ են ներկայացրել անդամակցելու կազմակերպությանը:

Մաթյու Թրամբլեյ

Միջազգային հարաբերությունների գիտությունների թեկնածու է, Քվեբեկի միջազգային ուսումնասիրությունների բարձրագույն ինստիտուտի «Միջազգային խաղաղության եւ ապահովության ծրագրի» ղեկավար եւ Լավալ համալսարանի «Քննադատական հայացք» պարբերականի գլխավոր խմբագիր:

Այս խաղը մոնոպոլիա խաղն է հիշեցնում, մի տարբերությամբ, սակայն, որ մոնոպոլիայի յուրաքանչյուր խաղացող աշխատում է առավել շատ հարստություն կուտակել, իսկ այս խաղում խաղացողը, որպեսզի շարունակի գոյություն ունենալ, ջանում է առավել քիչ պարտք վերցնել Արժույթի միջազգային հիմնադրամից՝ ԱՄՀ-ից: Խաղատախտակը բաղկացած է երկու մասից՝ հյուսիսային և հարավային: Հարավում բազմաթիվ տներ կան, և յուրաքանչյուրում հումքերի անուններ են գրված՝ բամբակ, շաքար, նավթ և այլն: Այս տների արանքում կան նաև այլ տներ, օրինակ՝ երկրից դեպի դուրս կապիտալի հոսք, պետական հեղաշրջում և այլն: Եթե այս տներից որևէ մեկը վիճակվի մի անբախտ խաղացողի եւս, իր ունեցվածքի ու դրամագլխի մի մասը կկորցնի:

Տախտակի հյուսիսում տեղադրված են այն արտադրությունները, որոնք առնչություն ունեն հումքերի հետ: Խաղը սկսելու համար յուրաքանչյուր խաղացող պետք է իր պարտքի մի մասը տա ԱՄՀ-ին, իսկ եթե ի վիճակի չէ վճարելու, կարող է պարտք վերցնել: Սակայն կան խաղաքարտեր, ինչպես եւ մոնոպոլիայում, որոնց միջոցով խաղացողը դիմելով բախտախաղին՝ պարտավորվում է

իր ունեցվածքի մի մասը շտապ վաճառել, թեև հնարավոր է՝ բախտը ժպտա, և նա, ասենք, 10.000 դոլար վարկ ստանա: Խորհրդատվական իրավունքից օգտվելու, նաև հազար ու մի այլ ծախսեր հաշվարկելով՝ վերջնահաշվում խաղացողին 10.000 դոլար վարկից հասանելիքը դառնում է 50 դոլար կանխիկ դրամ: Այս խաղի ավարտը միշտ նույնն է. բոլոր խաղացողները, բացառությամբ մեկի, առաջադրված պայմաններից պարտքերի տակ խեղդված՝ ճգնաժամի մեջ են ընկնում և սնանկանում: Խաղի ավարտին Արժույթի միջազգային հիմնադրամը վերցնում է իր տված գումարը, տոկոսադրույքը և վարկառու երկրի ունեցվածքի մի մասը:



«Հավիտենական պարտքը» ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքական, տնտեսական և հասարակական ճգնաժամի մեջ ընկած Արգենտինայի պարագան: Հայր Բուշի աշխատանքի անցնելուց հետո, ԱՄՀ-ի ճնշումների ներքո, խոշոր, պայմանական վարկեր տրամադրվեցին Արգենտինային: Սեփականաշնորհման ծրագիրը, ինչպես որ այլ զարգացող երկրներում, զուգակցվում էր աննախադեպ կոռուպցիայով: Մեծացավ պետության շրջանառու գումարի չափը, էժան ապրանքատեսակները հոսեցին ջրի նման, այնինչ գործազրկության ծավալն աննախադեպ մեծ չափերի հասավ: Պեսսոյի արժեքն արհեստականորեն ցածր էր պահվում, ինչի արդյունքում կանաչ ճանապարհ էր բացվում արտահանման համար: Ամեն ինչ հրաշալի և, ըստ Արևմուտքի, վարդի նման գեղեցիկ էր: Մեծ կորպորացիաներն սկսեցին ծավալուն հարձակում գործել Արգենտինայի շուկայի վրա: Նյու Յորքում հրատարակվող «Ուոլ սթրիթ ջորնալ» հանդեսը հպարտությամբ, ոգևորված ազդարարում էր «նոր լիբերալիզմի հաղթարշավը Արգենտինայում»: ԱՄՀ-ի ուղղորդմամբ՝ Արգենտինայի տնտեսության ազատականացումն առաջ էր շարժվում դեպի զենիթի բարձունքները: 2001-ին բանկերի 90 %-ը, արտադրամասերի 40 %-ը պատկանում էին արտաքին կապիտալին: Այդ ընթացքում, որոշ իրադարձությունների բերումով, իրավիճակը փոխվեց: Մեքսիկայի պեսսոյի ճգնաժամը, դրանից հետո ֆինանսական ճգնաժամը Ասիայի վագրի երկրներում՝ Բրազիլիայում, Ռուսաստանում և Թուրքիայում ահազանգ դարձան Արգենտինայում ներդրողների համար: Համաձայն «Կորալիտո» (corralito) կանոնակարգի՝ յուրաքանչյուր արգենտինացի իրավունք ուներ իր բանկային հաշվից շաբաթական միայն 250 դոլար հանել, իսկ այդ ընթացքում միանգամից, կայծակնային արագությամբ, խորհրդավոր կերպով 10 միլիարդ դոլար անհետացավ բանկերից: Արգենտինայի արժույթը որպես առ որպես արժեզրկվում էր: 2001-ի դեկտեմբերին Արգենտինան դիմեց ԱՄՀ-ին 1,3 միլիարդ դոլարի վարկ ստանալու խնդրով, սակայն մերժվեց: Այդ պայմաններում, երբ երկրի ունեցվածքը վաճառվել էր արտերկրի մասնավոր ընկերություններին, պետությունը որևէ ելք չէր գտնում իրավիճակից դուրս գալու համար: Ամեն ինչ՝ օդանավակայանները, փոստը, երկաթուղին, ապահովագրությունը, նավթը, էլեկտրականությունը, ջուրը և կոյուղին, վաճառվել էին: ԱՄՆ-ի Փրինսթոնի համալսարանի դասախոս և «Նյու Յորք թայմզի» հոդվածագիր Պաուլ Քրուգմանը (Paul Krugman), երբ ճգնաժամն հասավ գագաթնակետին, գրեց. «ԱՄՀ-ի պատասխանատուները, միջնադարյան բժիշկների նման, նվաղող ու տկարացող հիվանդից անընդհատ արյուն էին վերցնում: Արգենտինայի պարագայում նրանք նաև այնքան ցավ ու դժբախտություն սրսկեցին, որ երկիրը տապալվեց»:

Պետության ծախսերի պակասեցման պատճառով գործազրկությունը հասավ 20 %-ի: Բանկերի առջև հերթերը, որ գոյանում էին գումար վերցնելու նպատակով, օրեցօր երկարում էին, միևնույն ժամանակ սպառվում էր

հասարակության համբերությունը: Կրակի բռնկման առաջին նշաններն ի հայտ եկան 2001-ի դեկտեմբերի 12-ին: Մի փոքրիկ արհմիության կողմից կազմակերպված բողոքի ցույցը, որի մասնակիցներն իրենց բողոքն արտահայտում էին դատարկ կաթսաներին հարվածելով, շատ արագ ծավալվեց՝ Բուենոս Այրեսի փողոցները խլացնելով դատարկ կաթսաներին զարկող հարվածների ձայնից: Դեկտեմբերի 18-ին սկսվեց մթերային խանութների թալանը: Ամբողջ աշխարհում, հեռուստատեսությունների կողմից հեռարձակվող եթերի միջոցով, զարմանքի հզոր ալիք բարձրացավ: «Վաշինգտոն պոստը» «Արգենտինան հենց այնպես, ինքն իրեն չտապալվեց» հոդվածում գրեց. «Այն ուժը, որը վալաֆեն (Hi-Tech) ընկերությունների մասնաբաժինների շուկայի խառնաշփոթի պատճառ դարձավ և ճգնաժամային իրավիճակ ստեղծեց (խոսքը 2000-2001 թթ. բորսայական շուկայում գների անկման մասին է), Արգենտինայում ևս ձեռնամուխ եղավ, որ համաշխարհայնացումը վերջապես իր անխիղճ ու ողբալի դերը կատարի»:

Ժոզեֆ Սթիգլիցը (Համաշխարհային բանկի նախագահի նախկին ավագ օգնական, 2001 թ. Նոբելյան մրցանակակիր տնտեսագիտության գծով) 2000-ին հրաժարվելով ՀԲ-ում աշխատանքից, անդադար քննադատել է հատկապես ամերիկյան խոշոր կորպորացիաներին, ՀԲ-ին և ԱՄՀ-ին՝ հայտարարելով, որ սրանք իրենց հիմնական լծակներն օգտագործում են զարգացող երկրներին թալանելու նպատակով: Նա «Լոնդոնի Օբզերվերի» (Observer of London) հետ հարցազրույցում ՀԲ-ի և ԱՄՀ-ի ճնշումը վարկառու երկրների վրա՝ սեփականաշնորհման (Privatization) նպատակով, կաշառակերություն (Briberizetion) էր անվանում, քանի որ զարգացող երկրների պատասխանատուները տվյալ գործընթացից մեծ եկամուտներ էին կորզում: Ըստ Սթիգլիցի՝ յուրաքանչյուր գործարքից 10 %, որպես կոմիսիոն տոկոսագումար, դրվում էր Շվեյցարիայի նրանց բանկային հաշիվներում, և այսպիսով երկրի ունեցվածքը ամերիկյան ու եվրոպական մասնավոր ընկերություններին էր հանձնվում:

Ըստ ԱՄՀ-ի և ՀԲ-ի հրահանգի՝ սեփականաշնորհումից հետո հաջորդ պարտադիր քայլն այն էր, որ կապիտալի ելքն ու մուտքը երկրից՝ ցանկացած քանակով, ազատորեն հայտարարվի: Ըստ Սթիգլիցի՝ կանխիկ գումարը տվյալ փուլում, սպեկուլյատորների (Speculators) միջոցով, ներմուծվում է երկիր և ներդրվում արտարժույթի և կալվածքների ոլորտում: Տնտեսությունում առաջին տատանումների ի հայտ գալուն պես սպեկուլյատորների կողմից մի այնպիսի հարձակման է ենթարկվում տվյալ երկրի արտարժութային ֆոնդը, որ մի քանի օրվա կամ նույնիսկ մի քանի ժամվա ընթացքում դատարկություն է գոյանում:

Այս փուլում, կրկին ԱՄՀ-ի դիմումի հիման վրա, հիմնադրամը Արգենտինայից պահանջում է բարձրացնել տոկոսադրույքը մինչև 30, 50 %-ի, երբեմն նույնիսկ մինչև 80 %-ի, որպեսզի թալանված ունեցվածքը վերադառնա երկիր: Այս մոտեցումը բազմաթիվ անգամներ կրկնվել է, օրինակ, Լատինական Ամերիկայում, Ասիայի վագրերի՝ Ինդոնեզիայի, Կորեայի և Թաիլանդի պարագաներում (1997-ի ճգնաժամի ժամանակահատվածում): Տոկոսադրույքների բարձրացումով անշարժ գույքի և բորսայի շուկայի գինն անկում է ապրում, և պետության գանձարանը արագորեն դատարկվում է: Այս փուլում է, որ աղքա-

Ժոզեֆ Սթիգլից

տությունը համատարած է դառնում, և սկսվում են փողոցային ցույցերը: Նման երևույթը ոչ միայն Արգենտինայում, այլ նաև բոլոր այն երկրներում, որտեղ իրականացվել է ՀԲ-ի և ԱՄՀ-ի քաղաքականությունը, սովորական է և բազմիցս կրկնված:

Համաշխարհայնացման ընթացքը, որ սկսվել է հինգ հարյուր տարի առաջ Քրիստափոր Կոլումբոսի կողմից Ամերիկա մայրցամաքի հայտնաբերմամբ, վայրիվերումներով ճանապարհ է հարթել իր համար և 1990-ականների սկզբում միանգամից մեծ ուշադրություն ու տեղ գրավել «ազատ առևտրի» և ազատական շուկայի համախոհների ծրագրերում:

Ըստ ՀԲ-ի վիճակագրության՝ 2005-ին աշխարհի 155 հզորագույն տնտեսություններից 95-ը պատկանում են կորպորացիաներին և ոչ թե երկրներին: Որպես օրինակ՝ Ուոլ մարթի (wal-mart) տարեկան վաճառքը 2005-ին շուրջ 288 միլիարդ դոլար է եղել, որը գերազանցում է շատ երկրների համախառն ներքին արդյունքը՝ ՀՆԱ-ն: Տնտեսության ոլորտում երևակայությունից դուրս այս հզորագույններն էին, որ պայմանները նպաստավոր համարելով, համաշխարհայնացման ընթացքը արագացրին: Տվյալ ոլորտի փոփոխությունները համընկան տեխնոլոգիայի աներևակայելի վերելքի և տեղեկատվական տեխնոլոգիայի (SS, IT–Information Technology) անպատկերացնելի աճի հետ: ԱՄՆ-ի աննախընթաց թռիչքը SS ոլորտում պատճառ դարձավ, որ աշխարհի մնացած մասից շատ հեռանա, ինչը, իհարկե, իր հետ բերեց 1990–ի պղպջականման և պատրանքային տնտեսությունը: Երեք ազդակ՝ ա) ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհում որևէ այլ հակամարտող ուժի բացակայությունը, բ) տեխնոլոգիական ոլորտում փոփոխությունները, գ) տնտեսության ոլորտում աննախընթաց աճը 1990-ականներին՝ հարմարագույն հող պատրաստեցին համաշխարհայնացման ընդարձակման համար: Տվյալ գործընթացներում ԱՄՆ-ի մշակույթը, բախվելով մյուս մշակույթներին, իր գովազդային աննախադեպ հնարավորություններով, ներդրումային կարողականությամբ և տեխնոլոգիական առաջընթացով, հնարավորություն ունեցավ հենց սաղմում խեղդել այլ մշակույթների ճիչը: Որպես օրինակ՝ Մադոննայի, Թոմ Կրուզի և Ջենիֆեր Ինեստոնի, Գապի (Gap) և Դիզելի (Diesel), նաև պոպ երաժշտության խմբերը՝ իրենց հետևանքներով (թմրամոլություն, ագրեսիվություն): Ահա այս բոլոր երևույթները, «համաշխարհային նորարարություն» (Global modernity) անվան տակ, ասպատակում են ավանդական հասարակությունների մշակութային և այլ կառույցները: Այն իրողությունը, որ Բրեդ Փիթի և Անջելինա Ջոլիի զավակը Նամիբիայում է ծնվում, իսկ Բրիթնի Սփիրը իր մազերն է տակից սափրում, ոչ միայն պարտվող մշակույթի երիտասարդության ուշադրությունն է գրավում, այլև «նոր համաշխարհային» և «համաշխարհային նորարարության» մշակույթների միաձուլման գործընթացն է հավաստում: Նախօրինակը չունեցող պայքարը, միատարր և միանման մշակույթ ստեղծելու համաշխարհայնացման ղեկավարների մոլուցքը ԱՄՆ-ի գլխավորությամբ ի՞նչ նպատակ են հետապնդում:

Նախ՝ չեզոքացնել մշակութային ազդակի կարևորությունը այդ համակարգի դեմ դիմադրության առումով, նաև, որ առավել կարևոր է, ամերիկյան սպառողական

մշակույթի (American Consumerism) տարածումն ու գերակայությունը՝ նպատակ ունենալով առավել դյուրությամբ վաճառել կորպորատիվ համակարգն ընդհանրապես:

Այսուհանդերձ, ամերիկյան այս ընդարձակման գործընթացում զարգացող երկրների հասարակություններում ուժեղ դիմադրություն է ցուցաբերվում: Ամերիկյան կենտրոնական հետախուզական վարչության՝ ԿՀՎ-ի (CIA) «Համաշխարհային գործընթացը մինչև 2015 թ.» զեկույցում կարդում ենք. «Գլոբալացման ուղին շատ բարդ է, հղի է ֆինանսական քրոնիկ խնդիրներով և տնտեսական ոլորտում օրեցօր գոյացող նոր ճաքերով»:

Երկրների, տարածաշրջանների և մարդկային բազմությունների մեջ ձևավորվում է գնացքից հետ մնալու զգացումը, կանգ է առնում տնտեսությունը, քաղաքական ապակայունացած վիճակ է ստեղծվում, և հասարակությունները մշակութային օտարացման են դատապարտվում: Այս ամբողջ համալիրում աճում ու զարգանում են բռնությունները, ի հայտ են գալիս կրոնական, գաղափարաբանական, ցեղային բնույթի ծայրահեղություններ:

Միայն ԿՀՎ-ն և տեղեկատվական կազմակերպությունները չէ, որ այդպես են վերլուծում. նմանատիպ վերլուծություն կատարվել է նաև ՀԲ-ում: ՀԲ-ի զեկույցում ասվում է. «Համաշխարհայնացումն ապացուցեց, որ աղքատությունն ու անհավասարությունը օրեցօր աճում են: Ազատականացմանը և բաց տնտեսական միջավայրին համապատասխանեցվելու գինը միայն և բացառապես աղքատներն են վճարելու՝ անկախ այն հանգամանքից, թե դա որքան կտևի»:

Նրանք, ովքեր պնդում են, թե համաշխարհայնացման գործընթացը ժամանակավոր երևույթ է և անցումային շրջանից հետո իրավիճակը կարգավորվելու է, պետք է որ վերը նշված զեկույցի այդ բաժնին ուշադրություն դարձնեն:

Ամենացնցող զեկույցը ՄԱԿ-ն է ներկայացրել: Նրանք, ովքեր մտահղացել են սցենարը և գրել համաշխարհայնացման նոր օրենքները, նպատակ են դրել միավորել համաշխարհային շուկաները, և այս հանգամանքն ինքնաբերաբար անտեսում է մարդկանց ցանկությունները: Մի բան ակնհայտ է. այս գործընթացն ավարտվելու է ուժի կենտրոնացումով և աղքատ երկրներին լուսանցք մղելով: Այս փոփոխությունների ընթացքում կիսազարգացած արտադրամասերը, որոնք ավանդական ձևերով մի քանի ընտանիքի ապրուստն էին հայթայթում, ի զորու չեն լինի մրցակցել արտասահմանում որակով և զանգվածաբար արտադրված ու երկիր ներմուծված ապրանքատեսակների հետ և մեկը մյուսի հետևից կսնանկանան ու կփակվեն:

ԱՄՆ-ի ու Եվրոպայի գյուղմթերքը, արտադրվելով ժամանակակից մեթոդներով, նաև իրենց պետության կողմից տրամադրված բարձր սուբսիդավորումներով գրավում են գյուղմթերքի ներքին շուկան: Գյուտարարների ու հայտնագործողների՝ հեղինակային իրավունքի մասին օրենքի բացակայության պայմաններում, տեղական ընկերությունները, որոնք մինչև երեկ արտասահմանյան ապրանքատեսակներն ընդօրինակելու իրավունք ունեին, միանգամից մեծ արգելքի առջև են կանգնում: Այդ իրավունքը, որը հայտնի է որպես «Մտավոր սեփականության իրավունք» (Intellectuel Property Right), առաջին հերթին դեղ արտադրողներին է թիրախ դարձրել: Նմանատիպ և գեներիկ դեղերը, որոնք երբեմն արտասահմանյան նույնանման դեղերի գների մեկ տասներորդ գնով էին արտադրվում, վերը նշված պատճառով այլևս չեն արտադրվում, անշուշտ ոչ այն նպատակադրմամբ, որ ընդունեն ԱՄՆ-ի ու Եվրոպայի «գյուտարարների և հայտնագործողների» իրավունքները... Իսկ այս պայմաններում դեղերի գները մի քանի անգամ աճելու են:

Զարգացող երկրները, որոնք կորպորացիաների համար կանաչ ճանապարհ էին բացել, անընդհատ գովազդում են հարստության ավելացման, արտադրության բարձրացման և ՀՆԱ-ի աճի մասին: Ընդհանրապես, կորպորացիաները գովազդելով անընդհատ կրկնում են՝ «Մեծ առևտուրը մեծ հարստություն է բերում, հարստությունն էլ մարդկանց ինքնըստինքյան երջանկություն է պարգևում»: Սա մի ընդունված գաղափար է լիբերալների տնտեսության համակարգում, որը որևէ կասկած չի հա-

րուցում, բայց կարող է արտառոց թվալ, երբ ուսումնասիրություններն այլ բան են ասում: Լատինական Ամերիկայում 60-70-ականներին, այլ խոսքով՝ համաշխարհայնացման թնդյունից շուրջ տասը տարի առաջ, մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտը 73 % աճ ուներ, իսկ վերջին քսան տարիների ընթացքում, որը համաշխարհայնացման վերելքի ժամանակաշրջան է, մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտը Լատինական Ամերիկայում 6 %-ից պակաս է: Նույնն էր իրավիճակը ԱՄՆ-ում: 1947–1973 թթ. ժամանակահատվածում միջին շերտի (որում ընդգրկված է ամերիկացիների 80 %-ը) պաշտոնյաների աշխատավարձը 80 %-ի աճ է ունեցել (այս աճը, ինֆլյացիան զեղչելուց հետո, ըստ տնտեսական տերմինաբանության, իրական դոլարի (Real Dollars) վրա է հաշվարկված): 1973-ից, համաշխարհայնացման աննախընթաց ծավալմանը զուգահեռ, աշխատավարձերի աճը, իրական դոլարի կարողականության գնից հանած 4 % է եղել, անշուշտ, զեղչելով ինֆլյացիան: Այլ խոսքով՝ ամերիկացի բանվորի աշխատավարձը ոչ միայն չի բարձրացել, այլև նույնիսկ պակասել է: 34,6 միլիոն ամերիկացիներ աղքատության եզրից ցածր կենսապայմաններում են գոյատևում, քաղցածներն ու անտունները «Մաք Դոնալդի» ճաշարանների աղբից են սնվում: Սրանց թիվը 2001-2002-ի ժամանակահատվածում ավելացել է 1,7 միլիոնով:

Ո՞ւր են գնում առևտրից և արտադրությունից գոյացած՝ աստղաբաշխական թվերի հասնող եկամուտները: Բիլ Գեյթսի հարստությունը հավասար է ամերիկյան հասարակության՝ 12 միլիոնի հասնող ստորին շերտի կարողությանը, իսկ Ամերիկայի բնակչությունը 2000-ին 283 միլիոն էր: Ամերիկայի՝ 1 % կազմող վերին շերտի հասարակության հարստությունը 95 % կազմող ցածր խավի հարստությունից շատ է: Առաջին 400 մեծահարուստների ունեցվածքը 1999-ին յուրաքանչյուր աշխատանքային ժամի դիմաց 225.000 դոլար է եղել, այնինչ Ամերիկայում նվազագույն աշխատավարձը եղել է 15,5 դոլար: Ամերիկացի բանվորի միջին եկամուտը 1980-ին 28,9 դոլար է եղել, 2000-ին՝ 28,59 դոլար՝ ինֆլյացիայի զեղչից հետո: Այլ խոսքով՝ 20 տարի տնտեսական աճի մասին գովազդելուց հետո միջին բանվորի աշխատավարձը ոչ թե ավելացել, այլ նվազել է: Նույն ժամանակահատվածում, ինֆլյացիան զեղչելուց հետո, բարձր պաշտոնի տնօրենների եկամուտը 1000 % աճ է արձանագրել՝ տարեկան 1,3 միլիոն դոլարից հասնելով 13 միլիոնի:

Զարգացող երկրներում ո՛չ համաշխարհայնացումը և տնտեսական ազատականացումը հրաշք կատարեցին և ոչ էլ առևտրի, արտահանումների և ներմուծումների փոխանակումների ծավալները, ինչպես որ ՀՆԱ-ն: Նաև անհրաժեշտաբար պայմաններ չստեղծեցին Ամերիկայի բնակչության կենսապահովման բարձրացման կամ արդար հասարակարգի կայացման համար: Հիմնական գաղափարաբանությունը այդ փոփոխությունների վարագույրի հետևում թաքուն իր գործն է առաջ տանում՝ մոռանալով կամ մոռացության տալով ճնշվածների և աղքատների տառապանքը:

Ամեն տարի աշխարհում 25 միլիոն մարդ մահանում է սովից, 842 միլիոնը տառապում է քրոնիկ սովից, և տարեկան այդ թվին ավելանում է ևս հինգ միլիոն:

«Ազատ շուկայի» հետևորդները օգտվում են Ադամ Սմիթի՝ 1776-ին Լոնդոնում հրատարակած «Ազգերի կարողությունը» (Wealth of Nations) գրքից, որը «ազատ շուկայի» տնտեսության հիմքը դարձավ: Ըստ Սմիթի՝ անհատական շահը (Self-Interest) ազատ շուկայի համակարգը դարձնում է մրցակցային: Ըստ Սմիթի՝ այս համակարգում մի անհայտ ձեռք մշտապես հավասարակշռում է շուկան, և, ուրեմն, «ազատ շուկայում» պիտի նվազի պետության դերը: Սմիթը խոսում է մանր գյուղացիների և արհեստավորների աշխատանքի մասին, ովքեր իրենց և իրենց ընտանիքի գոյապրուստը ապահովելու նպատակով պայքարում են, որպեսզի թանկ գներով վաճառեն իրենց արտադրությունը:

Ադամ Սմիթի և ազատ շուկայի գաղափարաբանության հիմքն ու էությունն այն է, որ մի մեծ շուկայում գնորդները և վաճառողները, յուրաքանչյուրը առանձին վերցրած, այնքան փոքր են, որ չեն կարող շուկայի ճակատագրի վրա ազդեցություն գործել: Ըստ նրա՝ շուկայի ամենահիմնական սկզբունքը մրցակցության տարածվա-

ծությունն է մատակարարողների միջև, և նա իսկապես հավատացած էր, որ նման պարագաներում մի գնորդի և կամ վաճառողի որոշումը՝ կապված որևէ ապրանքատեսակի թանկացման կամ էժանացման հետ, ընդհանուր առևտրի ծավալների առումով որևէ բան չի ներկայացնի: Նույնիսկ մեծ ցանկության դեպքում նրանք չեն կարող շուկայի գործընթացների վրա ազդեցություն ունենալ: Ուրեմն՝ սմիթյան մոդելը (որը, բնականաբար, տարբերվում է վերահսկվող և կամ պետական սոցիալիստական տնտեսությունից) շուկան չի վերահսկում, և բոլոր խնդիրներն իրենց բնական հոսքով հասարակության տարբեր ոլորտներում առաջ են ընթանում:

Ամերիկացի տնտեսագետ Դեյվիդ Քորթենը, կապված ազատ շուկայի տնտեսության և Ադամ Սմիթի մոդելի հետ, մի հետաքրքիր հարց է արծարծել «Աշխարհը կորպորացիայից հետո» (The Post-Corporate World) գրքում: Նա գրում է. «Գյուղացու և արհեստավորի, որոնք իրենց և իրենց ընտանիքի գոյապրուստը հայթայթելու համար աշխատում են լավագույն գնով շուկայում վաճառել իրենց ապրանքները, և կորպորացիայի միջև, որ անհագուրդ և անվերջանալի ախորժակով պտտեցնում է մոլորակի տնտեսության անիվը, առկա է հսկայական ու խոր անջրպետ»: Ըստ Քորթենի՝ այդ տնտեսությունը ոչ թե ազատ է, այլ ընդհակառակը՝ շատ փոքր թիվ կազմող կորպորացիաների միջոցով խստագույնս հսկվում և ղեկավարվում է: Այսպիսով, ազատ շուկայի կարևորագույն և հիմնական սկզբունքը շուկայի հսկողության բացակայությունն է, որը նոր լիբերալիզմի տնտեսության մոդելում խախտվել է: Ընդամենը երկու ընկերություն՝ «Մոնսանտոն» (Monsanto) և «Դյուպոնը» (Dupont), աշխարհի եգիպտացորենի 65 %-ի մենաշնորհն ունեն: Մոլորակի բնակչության ապրուստի 75%-ը կազմված է հացահատիկներից (ցորեն, եգիպտացորեն, սոյա և այլն), իսկ դրանց առևտրի 90 %-ը երեք ընկերությունների՝ «Քարգիլի» (Cargill), «Արչեյր Դանիելզ միդլանդի» (Archer Daniels midland) և «Բանջի» (Bunge) մենաշնորհն է: Վերջին քսան տարիների ընթացքում տավարի մսի 82 %-ը, խոզի մսի 75 %-ը և սոյայի առևտրի 80 %-ը չորս ընկերությունների մենաշնորհն է:

Այս իրավիճակներում խոսել ազատ տնտեսությունից, ազատ մրցակցությունից և «ինքնակառավարվող շուկայից»՝ առնվազն միամտություն է: Նման գռեհիկ և վայրի վարքագծի ավարտը լինելու է տիրապետումը հասարակության բոլոր օղակներին՝ սկսած գյուղացուց մինչև գործընթաց իրացնողը:

ԱՄՆ-ի խորհրդարանի պատգամավոր Դեյվիդ Բոնիորը, հանդես գալով համաշխարհայնացման, տնտեսության ազատականացման դեմ, ասում է. «ՆԱՖԹԱ-ի (NAFTA)՝ ԱՄՆ-ի, Մեքսիկայի և Կանադայի միջև պայմանագրի հաստատումից, ընդհանրապես փոխանակումների ազատականացումից հետո, որպես արդյունք, հարյուր հազարավոր ամերիկացիներ, գործարանները Մեքսիկա փոխադրելու բերումով, գործազուրկ դարձան: Ի՞նչ կատարվեց Մեքսիկայում. աշխատավարձերը նվազեցին 10 %-ի չափով: Ահավասիկ մի նոր ցավ աշխատավորների և մի նոր նվեր՝ կորպորացիայի համար»:

Ազատ շուկայի ջատագովների մտածելակերպով՝ տնտեսական աճը նպաստավոր է գործընթացը թեկուզ մեկ րոպե դադարելու դեպքում:



Ռոբերտ Քենեդին 1968-ին շատ դիպուկ կերպով նկատել է. «*Ազգային համախառն արտադրանքը չի ներկայացնում ո՛չ երեխաների առողջության վիճակը, ո՛չ կրթության և գիտության որակը, ոչ էլ երեխաների կյանքում նկատելի են մանկական զվարճանքն ու հաճույքը: Ո՛չ մեր բանաստեղծությունների գեղեցկության հետ առնչություն ունի, ոչ էլ մեր հասարակությունում ամուսնական կյանքի ամրապնդման: Ազգային համախառն արտադրանքը անտարբեր գործոն է...*»:

Ճշմարտությունն այն է, որ արտադրության աճի և մարդկանց երջանկության միջև որևէ իրական կապ չկա, և դա առավելաբար մոտ է լիբերալ գաղափարաբանությանը: Ի դեպ, չի բացառվում, որ արտադրության աճը ոչ միայն կարող է հասարակության բարեկարգման պատճառ դառնալ, այլև ընդհակառակը՝ առաջադեմ գաղափարների և անարդար հասարակության բացակայության պայմաններում, տնտեսության և քաղաքական ասպարեզներում, ժողովրդական ընդվզումների և բռնությունների առիթ կարող է տալ: Այստեղ, իհարկե, մենք չենք թերագնահատում արտադրական աճը՝ որպես դրական երևույթ, այլ կարծում ենք, որ պետք է զանազանել տնտեսական աճն ու արտադրության ավելացումը և հասարակության առողջությունը, բավարարությունն ու երջանկությունը:

Ժոզեֆ Սթինգլիթսը համաշխարհայնացման ավերների մասին գրում է. «Ենթադրեք՝ մի չքավոր գյուղացի եք Աֆրիկայում և մեծ դժվարությամբ եք հայթայթում ձեր օրվա հացը: Նաև համաշխարհայնացման մասին որևէ բան չեք լսել: Բամբակը վաճառում եք Մորիսյան կղզիների մի բանվորի, նա էլ դրանից իտալացիների կողմից նախագծված շապիկ է պատրաստում, և վերջում մի ճաշակավոր փարիզեցի դա գնում ու հագնում է: Բամբակը, որը դուք վաճառում եք, շատ ցածր գին ունի: Ինչո՞ւ: Որովհետև ԱՄՆ-ը տարեկան 4 միլիարդ դոլար սուբսիդավորում է իր 25000 բամբակագործներին: Սուբսիդիայի չափը, որը ԱՄՆ-ի պետությունը տալիս է, ավելին է, քան բամբակի արժեքը: Հիմա դուք կարող եք մտածել, որ ավելի ճիշտ կլինի մի կով առնել և կովի կաթից օգուտ քաղել, բայց սա ևս պատասխան չի տալիս: ԱՄՆ-ը և ԵՄ-ը յուրաքանչյուր կովի համար օրական 2 դոլար սուբսիդիա են տալիս, այսինքն՝ ձեր և ձեր հարևանի օրական եկամտից էլ շատ: Եվ այս պարագայում դուք էլ կգերադասեիք հյուրասիրվել եվրոպական կովերի պես...»:

Արդեն իսկ ակնհայտ դարձավ, թե ինչու Աֆրիկայի գյուղացին ի զորու չէ մրցակցելու եվրոպական կամ ամերիկյան արտադրության հետ: Մոլորակի վրա 2 միլիարդ գյուղացի օրական 2 դոլարից քիչ եկամուտ ունի, իսկ Եվրոպայում և Ամերիկայում յուրաքանչյուր կովի համար սուբսիդիա են տրամադրում օրական 2 դոլար:

Վաշինգտոնի նեոլիբերալ տնտեսական քաղաքականության կիրառման պատճառով աղքատացած ու գործազուրկ դարձած զանգվածներն իրավունք ունեն ընդվզելու: Նրանք բոլորը ոչ միայն կորպորացիաների ստրուկն են դարձել, այլև աղավաղվել է նրանց մշակույթը: Նրանք համեմատում են իրենց աղքատիկ ու դժբախտ կյանքը Արևմուտքի ճոխ ու փայլփլուն կյանքի հետ, նրանք վկա են իրենց տեղական ղեկավարների կոռումպացված ապրելակերպին, ովքեր երկիրը, բնակչությամբ հանդերձ, վաճառել են կորպորացիաներին: Աղքատությունը, դասակարգային անհավասարությունը, համաշխարհայնացման ցնցումների բերումով, խոր անջրպետ են ստեղծել աշխարհի հասարակության մեջ: Այստեղ ո՞ւր են միջազգային կազմակերպությունները և ի՞նչ նպատակներ են հետապնդում:

Սամուել Հանթինգթոնը ասում է. «Արևմուտքը, ԱՄՀ-ի և այլ միջազգային կազմակերպությունների միջոցով, ապահովում է իր հետապնդած շահերը՝ իր ցանկությունները պարտադրելով զարգացող երկրներին: Բերժնիսկին, մի քայլ ևս առաջ գնալով, այդ կազմակերպությունները համարում է ԱՄՆ-ի մի մասը և գրում է. «Համաշխարհային մասնագիտացված կազմակերպությունների ցանցը, հատկապես ֆինանսական և դրամական, պետք է որ Ամերիկայի մի մասնիկը դառնան: Իբրև թե՝ IMF-ը և ՀԲ-ն աշխարհի շահերն են պաշտպանում... Սակայն դրանք հաստատակամորեն ԱՄՆ-ի տիրապետության տակ են գտնվում»: ՄԱԿ-ը բազմիցս ամրագրել է, որ «այն զարգացումը, որն անհավասարությամբ է ավարտվելու, որևէ արժեք իրենից չի ներկայացնի և խախուտ կլինի»:



Անգլ. թարգմանեց՝
Վազրիկ Պետրոսյանը

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ (1918 Թ.)

Մարիամ ՀՈՎՍԵՓՅԱՆ

1918-1924 թթ. Կ. Պոլսում, որպես «Ազատամարտի» իրավահաջորդ, հրատարակվել է «Ճակատամարտ» օրաթերթը՝ գրեթե այլ խմբագրակազմով և Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրումից հետո ՀՅԴ որդեգրած նոր ծրագրին ու մարտավարությանը հարազատ բաժիններով և թեմաներով: Օրաթերթի խմբագիրը Հակոբ Ճոլոյանն է: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ալանյանը և Շավարշ Միսաքյանը, իսկ արտոնատերը՝ Վրթանես Մարտիկյանը:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի հաշտության դաշնագրի ստորագրումից հետո, նոյեմբերի 20-ից, սկսում է լույս տեսնել ՀՅԴ պաշտոնաթերթ «Ճակատամարտը»: Նորաբաց թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918 թ. թիվ 1-12), «Արիամարտ» (1918 թ. թիվ 13-32), «Ճակատամարտ» (1918 թ. թիվ 33-ից մինչև 1924 թ.): Օրաթերթի անվանափոխությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «թուրք իշխանութիւնները երկիցս փակեցին թերթը»[1]: Օրաթերթի աշխատակիցները Մեծ եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ ճանաչված և հայտնի գրողները, հրապարակախոսները և մտավորականներն էին:

1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Ճակատամարտում» հրատարակված նյութերը նվիրված են այդ շրջանում հայությանը հուզող առավել էական խնդիրներին: Թվարկենք մի քանիսը.

* հայոց ցեղասպանությունն ապացուցող վավերագրերի, գաղտնի փաստաթղթերի, ականատեսների վկայությունների հրապարակում,
* Թուրքիայում 1918 թ. ստեղծված՝ Հայկական ջարդերի և տարագրության քննիչ մարմնի գործունեության ներկայացում,
* Հայոց եղեռնի կազմակերպիչների ու պատասխանատուների փնտրտուք,
* Հայ դատի և եղեռնը վերապրածների իրավունքների և շահերի պաշտպանություն,
* հայ համայնքի կամ կոտորածից հետո իրենց բնակավայրերը վերադարձող հայերի հիմնահարցերի և թուրքական կառավարության կողմից դրանց «լուծման» ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծություն.,
* անդրադարձ Թուրքիայի քաղաքական կյանքին.,
* Հայաստանի Առաջին Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական կյանքի լուսաբանում:

Մուդրոսի զինադադարից հետո Կ. Պոլսում համեմատաբար «նպաստավոր» պայմաններ էին ստեղծվել մամուլում եղեռնը վերապրողների խնդիրների արծարծման համար: Այդ տարիները կարծես նմանվում էին 1908 թ. հուլիսյան հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածին: «Գինովութեան նոր շրջան բացուեր էր: Ճիշտ ինչպես որ եղեր էր 1908 յուլիսին: Հիմա ալ ազատութիւնը եկեր էր, բայց ինչ սպանդէ մը յետոյ: Մեր գինովութեան մէջ, անգամ մը ևս կուրցեր էինք մենք: Մեզի այնպէս կը թուէր թէ պիտի կարենանք աղկաղկ մեր ուժերով նոր կեանք մը կառուցանել: Մէկ կողմէ մեզ կ'ոգևորէր Հայաստանը զոր դէպքերը ստեղծեր էին Արարատի շուքին տակ, և միւս կողմէ կը հաւատայինք դեռ Եւրոպայի մեղրածորան խօսքերուն, որոնք լրիւ Հայաստան մը կը խոստանային մեզ՝ ի վարձ մեր


Հ. Սիրունի

այնքան զոհաբերութեանց»,- գրում է Հ. Սիրունին[2]: «Արդարամարտը» 1918 թ. նոյեմբերի 22-ի (թիվ 3) «Ալ կախաղան չկա,

ինչու՞ եք կեցեր» խմբագրականում անդրադառնում է Թուրքիայի քաղաքական կացությանը. «Չորս տարի շարունակ պապանձեցաւ ամէն լեզու: Ինչու՞: Որովհետեւ հալածանք ու բանտ, աքսոր ու կախաղան կար: Անցաւ տառապանքի շրջանը: Համաձայնութեան ջախջախիչ յաղթանակը բացաւ լեզուները, որոնք պապանձած էին. բոլորը սկսան խօսիլ»: Օրաթերթն առաջին համարներից սկսած՝ նույնպես օգտվում է ընձեռված խոսքի ազատության իրավունքից. ոչ միայն ներկայացնում է հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության կողմից մշակված և իրագործված ցեղասպանությունն ապացուցող փաստեր, այլև պատասխանատվության է կանչում մեղավորներին: Թիվ 8-ի «Լուր տվեք մեզ անոնց մասին» խմբագրականում նշվում է, թե 4 տարի է, ինչ լուր չունեն հայ ազգի փառավոր զավակներից. «Ու՞ր տարիք զանոնք, դուք, որ ձեր ցեղին տխուր արգանդէն չկրցաք մէկ հիլէն իսկ ստեղծել այն անմահներուն զորս երամ-երամ իրենց օճախէն և մեր սրտերէն ժողվեցիք ու ղրկեցիք հեռաւոր անապատներուն ու հեռաւոր գեհենները: Ու դուք, որ մեծ ճիւաղներուն յաջորդեցիք ու բազմեցաք անոնց սեւ աթոռներուն վրայ, ձեզի ենք: Հաշիւ տուէք մեզ՝ մեր մեծ եղբայրներուն մասին»: «Արդարամարտը» հաշիվ է պահանջում թուրքական կառավարությունից: Թիվ 3-ում տպագրված Վահան Շահրիմանի «Դժոխային ծրագիրը» վերլուծական հոդվածում այդ մասին գրված է. «1915-ի սեւ եղեռնը անհատական վատութիւն մը չէ: Անիկա կատարելագործեալ շարունակութիւնն է պետական հայահալած ծրագրին: Այդ ծրագրին գոյութիւնը ուրացած են միշտ թուրքերը: Բայց անիկա ծանօթ է ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Օսմանեան դահիճները՝ իբր նուիրական ժառանգութիւն մը՝ իրարու փոխանցած են այդ գաղտնի ծրագիրը, որ հայոց եղերական կործանումը կը պատրաստէր: Հայերը բնաջինջ ընելու ծրագիր մը կայ, առաջուց պատրաստուած: 1915-ին, այդ ծրագրին տէր կեցան դարձեալ թուրք վարիչները իրենց բոլոր շրջապատով հաւաքաբար, մինչեւ 1918, մինչեւ Մեհմետ Թալէաթ դահիճին խայտառակ տապալումը: Եւ ուրեմն, անոնք, անհատաբար թէ հաւաքաբար, պատասխանատու են բոլոր հայասպան չարիքներուն, զորս ի զուր պարտկել կը ջանան»: Ժամանակի հրամայականով է, ասես, թուրքական «Սաբահ» թերթն իր խմբագրականում ընդունում հայոց ցեղասպանությունը: Այն թվարկում է դրա կազմակերպիչների անունները: Այդ խմբագրականը տպագրված է «Արդարամարտի» նոյեմբերի 28-ի «Մամուլը» բաժնում: Մեջբերենք մի հատված. «Այսօր արեւի պէս պարզ իրողութիւն մը կայ մէջտեղ, որ կարելի չէ ուրանալ: Սայիտ Հալիմ և Թալէաթ փաշաներու կառավարութիւնները, իրենց անիծեալ սիրտերէն սոսկալի գաղափար մը ծնած են,- պատերազմը պատրուակ ընելով քրիստոնեաները՝ մանաւանդ հայերը քշել մէկ նահանգէն միւսը, մինչեւ արաբական անապատները, և այդ տարագրութեան ընթացքին գազանաբար եւ մարդկային ըմբռնողութենէն դուրս, միջին և ներկայ դարերու մէջ նմանը չտեսնուած ձեւերով սպաննել, ոչ միայն այրերն ու երիտասարդները, այլ նաեւ ծնծկեր երեխաները, կիները, անկար ծերերը, վերջապէս հայ ազգը իր արմատէն չորցնել և քանդել»: «Արիամարտի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի (թիվ 19) «Ընթացիկ կյանքը» բաժնում տպագրված են վավերագիր 2 փաստաթուղթ: Դրանք գտնվել էին Իթթիհատի կենտրոնական գրասենյակում կատարված խուզարկության ժամանակ: Այդ փաստաթղթերը կամ ծածկագիր հեռագրերը «կապացուցանէին նոյն կուսակցութեան հայկական ջարդերուն մէջ կատարած դէրը: Ցայտնի է թէ ջարդերը կազմակերպելու համար Իթթիհատի կեդրոնէն մարդիկ ղրկուած և չէթաներ կազմակերպած են: Կարգ մը նահանգներու մէջ Իթթիհատի ներկայացուցիչներն ալ մասնակից են այս գործին»: Նշվում է նաև, թե «Թալէաթ փաշա հետեւեալ հեռագիրը քաշած է Մալաթիոյ Իթթիհատի ակումբին. «Ոչնչացուցէք այն բոլոր հայերը որոնք հոդ հաւաքուած են և պիտի հաւաքուին, բոլոր նիւթական եւ բարոյական պատասխանատուութիւնը իմ վրայ ըլլալու պայմանաւ»: Ինչպես յայտնի է, հայկական ջարդերը կազմակերպելու համար, պատերազմի սկիզբէն իսկ, Տօքտ. Պէհաէտտին և Տօքտ. Նազըմ Արեւելեան Նահանգները կը պտըտէին: Տօքտ. Նազըմ՝ Պէհաէտտին Շաքիրի հետեւեալ ծածկագիր հեռագիրը ղրկած է. «Կը պահանջուի հայերը տարագրել և վտանգաւոր նկատուածները ոչնչացնել: Արդեօք այսպէս կ'ըլլա՞յ եղբայրս»:

1918 թ. Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերը հնարավորություն են տալիս ցեղասպանությունը վերապրողներին ստեղծել տարաբնույթ մարմիններ, կազմակերպություններ, հանձնաժողովներ, որոնց միջոցով նրանք փորձում էին նպաստել ոչ միայն եղեռնի կազմակերպիչների հայտնաբերմանը և դատապարտմանը, այլև՝ հայապահպանությանը, հայ տարագիրների վերադարձին ու ազգային ներքին խնդիրների լուծմանը: Այս առումով հասկանալի են ՀՅԴ պաշտոնաթերթի կողմից թեմաների և արծարծվող հարցերի շրջանակի ընտրության չափորոշիչները: Օրինակ՝ «Արդարամարտն» ընթերցողներին տեղեկացնում է հայ մարտիրոսագրության մասին փաստաթղթերի, վավերագրերի, ականատեսների վկայությունների հավաքմամբ զբաղվող հանձնախմբի ստեղծման մասին:

«Արդարամարտը» իր «Հայաջինջ սարսափները» կամ «Վերապրողները» խորագրի ներքո 1918 թ. առաջին համարներից սկսած տպագրում է ականատեսների վկայություններն իրենց բնակավայրերում կատարված ջարդերի մասին: 1919 թ. այդ պատմություններին զուգահեռ ներկայացվում են հայերի հերոսական ինքնապաշտպանության դրվագները և անվանի ֆիդայիների քաջագործությունները: Չկա «Ճակատամարտի» որևէ համար, որտեղ տպագրված չլինեն նշված անձանց կամ հայ կամավորական ջոկատների ու խմբերի լուսանկարները: Այս կերպ օրաթերթը կարծես փորձել է ընթերցողներին և թուրքական կառավարող շրջանակներին հասկացնել,

թե անկարելի է ոչնչացնել կամ կոտրել հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Մեծ է այս կարգի հոդվածների ու լուսանկարների պատմական արժեքը: Դրանք այսօր կարելի է օգտագործել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում: Բերենք օրինակներ. թիվ 10-ում «Ադաբազարի հայերը» թղթակցության մեջ «Ճակատամարտի» սեփական թղթակիցը պատմում է տեղի հայկական համայնքի մասին: Նա գրում է. «Ատափազար՝ Պոլիսի մօտ ամէնէն հոծ հայ բնակչութիւն ունեցող քաղաքն էր: 3500-էն աւելի հայ ընտանիքներ կային հոս, մօտաւորապէս 20.000-ի հասնող հայութիւն մը, տեղահանութենէն քիչ առաջ առաջնորդարանին կողմէ կատարուած վիճակագրութեան մը համաձայն: Այժմ, ամէն կողմէ քաղուած ճշգրիտ տեղեկատուութիւններ կը հաստատեն թէ տարագրուած երեք հազար հինգ հարիւրէ աւելի ատափազարցի հայ ընտանիքներէն հազիւ 800-ի չափ միայն կրցած է ճողոպրիլ, այս հայաջինջ ընդհանուր կոտորածէն, ու մնալ՝ ընդհանրապէս Էսկիշէհիրէն Գոնիա ու շրջակայքը զանազան տեղեր, եթէ ասոնց վրայ աւելցնենք հրաշքով ողջ մնացած ընտանիքի բեկոր անհատները, ընդհանրապէս կիներ ու աղջիկներ՝ արաբներէ գողցուած կամ 10-20 ղրուշի փոխարէն ծախու առնուած, ինչպէս նաև զինուորագրութենէ վերադարձող ու վերադառնալիք երիտասարդները - որոնց շատ շատերուն ընտանիքները՝ հայր, մայր, քոյր, եղբայր, կին ու զաւակներ, անխնայ ջարդուած են կամ Արաբիոյ անապատներուն մէջ սովամահ եղած մեռած - ընդամէնը կ'ունենանք Ատափազարէն տարագրուած 20000 հայութենէն՝ 5000 միայն, այսինքն գրեթէ մէկ չորրորդը»: Թղթակցությունից տեղեկանում ենք Ադաբազարի հայության տեղահանության մանրամասների մասին. «Հրացանի բունեներուն, սօփաներու և խարազաններու հարուածներուն տակ, ասկէ երկուք ու կէս տարի առաջ, Ատափազարէն 3500 տուներ 3 օրուան մէջ պարպեցին ու քշեցին դէպ ի անստուգութիւն, դէպ ի մահ, դէպ ի զոլում»: «Արիամարտի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի համարում (թիվ 19) Պողոս Հաճյանը ականատեսի պատմածի հիման վրա է գրում իր նյութը: Այն վերնագրված է՝ «Մուշի հայությունը տեղահան չեղավ, այլ ամբողջովին ջարդվեցավ»:

Պատերազմի առաջին իսկ տարում Մուշի գրեթե բոլոր երիտասարդները զինվորագրվում են: Կառավարությունը ժողովրդին ճնշում էր ծանր տուրքերով՝ առգրավելով գյուղացիների ուտելիքի և սերմացուի պաշարները: Դեպքերի վկան պատմում է, որ 1915 թ. ամռանը Վարդավառի կիրակի օրը «յանկարծ անօրէն խուժանը, այր ու կին, մեծ ու պզտիկ մինչեւ գլուխնին զինուած մեր գիւղը լեցուեցան, ինչպէս շրջակայ մեր գիւղերը: Գիւղը ալան- թալանի տրուած կ'այրի, գնտակը կարկուտի պէս կը տեղայ: Սպանուած սիրելիներուդ վրայ լալ անգամ չես ուզեր, սոսկումը մեծ է, ամէն մարդ իր հոգին ազատելով կը զբաղի: Գիւղին մէջ գտնուող այրերէն ոչ մէկն այլեւս ողջ չտեսայ»: Նույն ականատեսի վկայությամբ ամբողջ քաղաքի Ձորի թաղը «որ Հայ կեդրոն կրնայ համարուիլ», 3 օր շարունակ ռմբակոծվում է, և «տուն մը անգամ» կանգուն չի մնում: Այս դեպքերից 10 օր հետո թուրքերը նորից հարձակվում են Մուշի վրա: Ոստիկանների հսկողության տակ հավաքում են քաղաքի բոլոր կանանց և աղջիկներին Ստեփան Սարգսյանի տան մեջ: «Հոն կը սկսի տռամին ամէնէն քստմնելին: Շատ փոքրիկ աղջնակներ այս տանջանքին տակ աւանդեցին իրենց մաքուր հոգին. քանի՜ պառաւ կիներ մեռան զարհուրելի չարչարանքի տակ»: Հետո երկու խմբի են բաժանում այս կանանց ու աղջիկներին: Գեղեցիկներին և երիտասարդներին ընտրում են իրենց համար որպես կին, իսկ մնացածներին այրում են Վառուկի Շահնազարի տանը: Ըստ որում նույն մահվանն են արժանանում նաև առաջին խմբից նրանք, ովքեր հրաժարվում են ամուսնանալ թուրքերի հետ: Նրանց այրում են Մուշի մոտ գտնվող Կառնեն գյուղում: Այդտեղ այրում են նաև Մուշ քաղաքի երևելիներից շատերի կանանց ու աղջիկներին՝ թվով 2000-ից ավելի: Սողգոմ և Հունան գյուղերից բերված 100-ավոր կանանց էլ թուրքերը այրում են Կառնեն գյուղում գտնվող Պողոս Խաչատրյանի մարագում: Հոդվածագիրը փաստում է. «Ծառը արմատէն խլելու և աղբիւրը ակէն չորցնելու իթթիհատեան ծրագիրը բառ առ բառ գործադրուեցաւ Մուշի վրայ: Այս մեծ ջարդին ռահվիրան և ոգին կրնայ համարուիլ քաղաքիս փոխկառավարիչ, ժանդարմայի հազարապետ Վասիթ պէյ, Մուսա պէյ, Տէվրիշ պէյ, Ֆալամազ, Հագգը Մուսա եւ այլն»: Վասիթ բեյի հրամանով սոսկալի տանջանքներով նահատակվում են «Վարդան վրդ. Յակոբեան ու Թօփալեան գերապայծառը: Ան էր որ հաւաքեց քաղաքին բարեկեցիկ դասակարգը՝ վեց հարիւրի չափ ու Պիթլիս ղրկելու պատրուակով Հաւատուրիկ ձորին մէջ նահատակեց: Մուշը աւերակ մըն է այլեւս: Բայց Մուշ չի պիտի մեռնի. ժամանակ մը պիտի ապրի իր սգաւոր օրերուն մէջ մինչեւ գան իր ղարիպ տղաքները»:

Բերված օրինակներից բացի նմանաբնույթ բազմաթիվ վավերագրային արժեքով թղթակցություն-հոդվածներ են մշտապես տպագրվել «Ճակատամարտում»: Այստեղ «Դեպի մահ» խորագրի ներքո ականատեսների վկայություններ կան անվանի հայ մտավորականներից շատերի նահատակության մասին: Ասենք՝ 1918 թ. թիվ 21 և թիվ 25 համարներում ներկայացվում են Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերենկյուլյանի ձերբակալությունը, աքսորի և սպանության պատմություններն՝ ըստ օրաթերթի աշխատակցի կողմից հայթայթված վկայությունների: Շարքի պատասխանատուն եղեռնից հրաշքով փրկ-

Գրիգոր Զոհրապ

ված Երվանդ Օտյանն է:

ՀՅԴ պաշտոնաթերթը իր նյութերով փաստում է հայ մարտիրոսագրությունը և թուրքական իշխանություններից ու միջազգային կառույցներից պահանջում է դատապարտել մեղավորներին: «Ճակատամարտի» հրապարակումներից պարզ է դառնում, որ զինադադարից հետո հայ ժողովրդին դեռ շարունակում են սպառնալ ջարդերն ու կոտորածները: Թուրքիայում հայահալած քաղաքականությունը չէր փոխվել:

Թուրքական իշխանություններն անում էին ամեն ինչ, որ եղեռնից մազապուրծ հայերը չվերադառնային իրենց բնակավայրերը: Իսկ եթե վերադառնային, ապա չկարողանային ապրել իրենց նախկին տներում, որոնք բռնազավթվել կամ շատ էժան գներով վաճառվել էին թուրքերին: Հայ տարագրյալներին չէին տալիս օրենքով հասանելիք փոխադրման ծախսի գումարը, նաև՝ նպաստը: Նրանց չէին ապահովում գալիք ձմեռվա համար անհրաժեշտ վառելիքով ու գարնանային սերմացուով: «Վերապրողները» խորագրի ներքո տպագրված «Ադաբազարի հայերը» թղթակցության մեջ (թիվ 10) ներկայացվում են տարագիրներին հուզող խնդիրները: Նշվում է, որ վերջին մեկ ամսում հազիվ 100 հայ ընտանիք է կարողացել վերադառնալ Ադաբազար: Էսկիշեհիր, Քյոթահիա, Պոլովատին, Կոնիա և Էրեյլի երկաթուղային կայարաններում էին գտնվում 400-500 ադաբազարցի հայ տարագրված ընտանիք: Նրանց շոգեկառքեր չէին տրամադրում: 20 օրից ավելի էր, ինչ այդ մարդիկ բաց երկնքի տակ ցուրտ եղանակին, հաճախ մի քանի օր տևող անձրևի տակ, մնացել էին անպատսպար, հացակարոտ վիճակում: «Պատերազմի էն տաք շրջանին էր տեղահանութիւնը, այնպէս որ կառավարութիւնը երկաթուղիի գիծերուն վրայ, ահագին զինուորական առաքումներով ու փոխադրութիւններով զբաղուած էր, բայց այն ատեն հայ ժողովուրդը Սուրիոյ անապատները քշելու չափ իր դահիճներուն ձեռքը ձգելու համար ոչ միայն վակօն չը պակսեցաւ, այլ մէկը միւսին յաջորդող ամբողջ կառաշարներ յատկացուեցան և անոնց վրայ հըսկողութիւն կատարելու, այսինքն զանոնք խոշտանգելու և հալածելու համար ոստիկաններու և ոստիկան-զինուորներու ոհմակներ տրամադրելի եղան: Իսկ այսօր, երբ պատերազմը դադրած է, և ալ զինուորական առաքումներ չկան, ափ մը հայերու վերադարձին համար ոչ փոխադրութեան միջոց կայ, ոչ վակօն, ոչ ալ այդ գործին վրայ մտածող պաշտօնեայ»: Ահա այսպիսի վերլուծական վերջաբանով է ավարտում թղթակցությունը «Ճակատամարտը»: Թիվ 31-ում Ադաբազար վերադարձող հայերի մասին թղթակցություն կա «Ահա եկեր են, բայց ի՞նչ կգտնեն» վերնագրով: Վերադարձող ադաբազարցիները տեսնում են, որ հայկական թաղերը ավերակների են վերածվել, իսկ «թուրք բարեկամներու քով ի պահ ձգուած իրենց գոյքերը, ապրանքները, բոլո՛րը, բոլո՛րը թալանուած, կորսուածէ Հրէշային ծրագիրով մը սպանդանոց քշեցին ամբողջ հայութիւնը, բայց ի՞նչ կուզէին անոնց թողած տուներէն, դպրոցներէն, եկեղեցիներէն, ի՞նչ կուզեին պարտէզներէն, եկեղեցիներէն ու գերեզմանատուններէն որ քանդեր են ու աւերեր անխնայ»: «Ամտափազարի մէջ 3500-է աւելի հայու տուներ կային: Ասոնցմէ կէսէն աւելին հիմնայատակ կործանուեր են և անոնց հետքերն անգամ չկան այսօր, իսկ մնացածին մեծ մասն ալ կիսաքանդ ու անբնակելի վիճակի մէջ ձգեր են»: Տեղահանության օրերին տեղացի թուրքերը 100 ոսկեդրամ արժեցող ապրանքները հայերից 100 փարայով են գնել, հաճախ էլ սպառնալով նրանց՝ ձրի վերցրել: Հայերը դեռ կայարանում էին, երբ թուրքերը մտել են հայկական ամայացած թաղեր և տարել են բոլոր տների պատուհանների ապակիները, դռները, կողպեքները, մի խոսքով՝ այն ամենը, ինչն արժեքավոր էր և «դիւրատար, մինչեւ իսկ քակեր են սանդուղները, տախտակամածները, առաստաղները՝ պահուած կահկարասիներ գտնելու յոյսով»: Թուրք բնակչության կողոպուտից հետո թուրքական կառավարությունը հայերի տներում է տեղավորել «Պալքանեան պատերազմէն եկող իսլամ գաղթականները, ինչպէս նաեւ այս վերջին պատերազմի միջոցին թշնամիէն գրաւուած նահանգներու միլթէճիները, անշուշտ՝ իսլամ»: Իսլամ գաղթականները սկսել են քանդել ու վառել դեռևս անբնակ հայկական տները: Այդ կիսավեր 1500-ից ավելի տները կառավարությունը «փլչելու վտանգին մէջ կը գտնուին» պատրվակով չնչին գներով վաճառել է Իթթիհատի պարագլուխներին: Ասենք՝ 150-200 ոսկի արժեցող տունը վաճառվել է 8-10 ոսկիով: Թուրքերը որպես ձրի վառելափայտ են օգտագործել հայերի պարտեզների ծառերը: Նրանք հիմնահատակ ոչնչացրել են հայկական 4 թաղերի երկսեռ վարժարանների շենքերը՝ առգրավելով դրանցում եղած գրքերը և դրանք հանձնելով թուրքական վարժարաններին: Վարժարաններից միայն «Ս. Հրեշտակապետինները կը մնան կանգուն: Քանդեր են Ս. Ստեփաննոս եկեղեցին, ախոռի վերածեր են Ս. Լուսաւորիչը, իսլամ գաղթականներու խան շիներ Ս. Կարապետը և արմտիքի շտեմարան՝ Ս. Հրեշտակապետը»: Յուրացրել և աճուրդով վաճառել են Ադաբազարի հայկական 4 եկեղեցիների գույքը: Քրքրել են հայկական գերեզմանոցի շիրիմները: Տարել են մարմարե բոլոր կոթողները և մահարձանները: Ըստ հոդվածագրի՝ Ադաբազար վերադարձած տարագիր հայերը կարծես այլևս չէին ուզում սպրել երբեմնի իրենց ծննդավայրում, որն այլևս իրենցը չէր: Ադաբազարցի հայերի ճակատագիրն են կիսում նաև մյուս բնակավայրերի վերապրողները:

Զինադադարից հետո հայրենիք վերադարձող հայերի առջև ծառացած խնդիրները ներկայացնելուն զուգահեռ «Ճակատամարտն» անդրադառնում է դրանց լուծմանը կոչված պետական ու ազգային կառույցների աշխատանքներին՝ հանդես գալով արդյունավետ առաջարկներով:

[1] Յակոբ Սիրունի, «Ինքնակենսագրական նօթեր», Ե., 2006, էջ 204-205:

[2] Նույն:

ՎԱԽԵՆՈՒՄ

Մուկը վախենում է կատվից:

Տերը վախենում է կնոջից:

Կատուն վախենում է շնից:

Կինը վախենում է մկից...

Շունը վախենում է տիրոջից:

Հազար անգամ դիտարկված ժողովրդական այս իմաստությունը հավաստում է, որ վախը հատուկ է կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչներին, անկախ նրանից՝ թույլ են նրանք, թե ուժեղ: Քանզի թույլից թույլը կա և ուժեղից ուժեղը: Բայց եթե վախենային միայն թույլերը, այսինքն՝ մուկը կատվից վախենար, կատուն

շնից, շունը տիրոջից, տերը կնոջից, ամեն ինչ հասկանալի կլիներ, թերևս, նաև, բնական, բայց արի ու տես, որ ժողովրդական այս իմաստության շղթայի ամենաուժեղ օղակը՝ կինը, վախենում է ամենաթույլից՝ մկից: Մկան սոսկ հայտնությունը, նրա տեսքը, խրտխրտոցը, նրա թողած հետքերը մթերք պարունակող տոպրակներում ու պարկերում, մի այնպիսի սարսափ են առաջացնում կնոջ մեջ, որ նա, ամոթ, պարկեշտություն մոռացած, կարող է գիշերանոցով կամ, նույնիսկ, մերկ, փողոց դուրս նետվել: Այնինչ, ընդամենը ավելի մի բամփոցով, կարող էր ճզմել գազանիկին:

Բացատրվող է մկան վախը կատվից, կատվի վախը շնից, շան վախը տիրոջից, տիրոջ վախը կնոջից, բայց ինչպե՞ս բացատրես կնոջ վախը մկից: Ահա, ճիշտ այսկերպ, ինչպե՞ս բացատրես ԱՄՆ-ի նախագահ Բուշի վախը Թուրքիայից: Անշուշտ, Թուրքիան ժողովրդական վերոհիշյալ իմաստության շղթայի ամենաթույլ օղակը չէ, այլ օղակն է մի այլ շղթայի, որտեղ ԱՄՆ-ի և մեկմեկու հետ հարաբերվում են աշխարհի հզորները և կամ նրանց այս կամ այն ձևաչափի միավորումները:

Եվրոպայից և կամ, ասենք, Ճապոնիայից, Բուշը չի վախենում: Ինչո՞ւ պիտի վախենա, երբ հենց Եվրոպայի սրտում, Հռենոսի ափերին և Ճապոնիայի Օկինավա կղզում վաղուց ի վեր ճամբար են խփել ամերիկյան բանակները:

Ռուսաստանից Բուշը չի վախենում. քսան տարի առաջ ԱՄՆ-ում Ռուսաստանով զբաղվող երկու հարյուր հետազոտական կենտրոն էր գործում, այսօր՝ ընդամենը վեցը: Նախագահի վարչախմբում, քսան տարի առաջ, Ռուսաստանի հարցերով աշխատում էին յոթ մասնագետ, այսօր՝ ընդամենը մեկը, նույն ինքը Կոնդոլիզա Ռայսը, որի գերբեռնված աշխատանքային օրացույցում դժվարանում ես գտնել ռուսաստանյան խնդիրներին հատկացված էջը:

Միլիարդանոց Հնդկաստանից ու ավելի քան միլիարդանոց Չինաստանից Բուշը չի վախենում, թեև այս գերտերությունների բնակչությունն աճում է աստղաբաշխական թվերով, առաջիկա հարյուր տարիներին սպառնալով կտրուկ փոխել աշխարհի դեմոգրաֆիական քարտեզը: Եվ տնտեսականը՝ նույնպես: Նա ընդամենը զգուշանում է: Նույն այդ Կոնդոլիզա Ռայսը, որը չգիտես ե՞րբ է հասցնում միայնակ զբաղվել նաև ռուսաստանյան խնդիրներով, անցյալ տարի նկատել է, որ ութսուն միլիոնանոց Գերմանիայում իրենք շատ ավելի դիվանագետներ ունեն, քան միլիարդանոց Հնդկաստանում և ավելի քան միլիարդանոց Չինաստանում: Ուրեմն՝ շտկել է պետք վիճակը: Եվ կշտկեն: Թերևս, արդեն, ամերիկյան դիվանագետներով ողողված են Հնդկաստանն ու Չինաստանը:

Իրանից Բուշը չի վախենում: Ինչո՞ւ պիտի վախենա, երբ ինքն է սպառնում: Եվ սպառնում է վախեցնողի պես և ոչ թե վախեցողի: Որովհետև, երբեմն, վախեցողն էլ է սպառնում, բայց նա սպառնում է վախից և այդ վախը, գրեթե, անհնար է լինում թաքցնել:

Անվախության այս համապատկերում, ահա, ինչպե՞ս բացատրես Բուշի վախը Թուրքիայից:

«Երկիր-մեդիա» հեռուստաընկերության ջանքերով, հայաստանցիներս, երջանիկ պատեհությունն ունեցանք դիտելու ամերիկյան Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի այն նիստը, ուր քննարկվում էր Ադամ Շիֆի ներկայացրած 106-րդ բանաձևը, որի «Եզրահանգումներ» կոչվող երկրորդ մասում թվարկված, Հայոց ցեղասպանությանը վերաբերող և ժամանակագրությամբ դասակարգված ճշգրիտ փաստերի ճկուն շարադրանքի դեմ և ոչ մի կոնգրեսական չարտահայտվեց: Դեմ քվեարկողներ եղան, բայց դեմ արտահայտվող՝ ոչ: Ինչպե՞ս դեմ արտահայտվեին հենց Միացյալ Նահանգների պետական արխիվում և Արձանագրությունների վարչությունում պահվող, Հայոց ցեղասպանությանը վերաբերող հիմնավոր փաստաթղթերի վկայությանը: Ինչպե՞ս դեմ արտահայտվեին այն իրողությանը, որ դեռևս 1915 թվականի մայիսի 24-ին դաշնակից պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը հայտարարությամբ մեղադրել էին Թուրքիային՝ մարդկության դեմ հանցանք գործելու մեջ: Միացյալ այս հայտարարությամբ դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարել են, որ օսմանյան կառավարության բոլոր անդամները, ինչպես նաև ջարդերն իրագործած նրանց կատարածուները, պատասխանատու են այդ կոտորածների համար:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո թուրքական կառավարությունն ինքն է աշխարհին ներկայացրել հայերի դեմ ցեղասպանության «կազմակերպման և իրագործման», «հայերի ջարդերի և կոտորածների» ղեկավարների ցուցակը: Մի շարք ռազմական դատարաններում երիտթուրքերի շատ պարագլուխներ ու պաշտոնյաներ մեղավոր ճանաչվեցին և դատապարտվեցին հայ ժողովրդի նկատմամբ ջարդեր կազմակերպելու և իրականացնելու համար:

Կոնգրեսականներն ինչպե՞ս պիտի դեմ արտահայտվեին իրենց իսկ Կոնգրեսի՝ տարբեր տարիներին ընդունած բանաձևերին, իրենց իսկ երկրի տարբեր նախագահների ապրիլքսանչորսյան ուղերձներին: Հենց իր՝ Ջորջ Բուշի 2004 թվականի ապրիլի 24-ի ձևակերպմանը. «Այս օրը մենք հիշում ենք որպես քսաներորդ դարի ամենասարսափելի ողբերգություններից մեկը՝ ավելի քան մեկ ու կես միլիոն հայերի բնաջնջումը Օսմանյան կայսրությունում՝ բռնագաղթի և սպանությունների միջոցով»:

Ահա թվարկված այս և ավելի շատ չթվարկված փաստերը, արձանագրությունները, վկայություններն էին հմտորեն պարունակվել առաջին հայացքից անվնաս և ոչինչ չպարտադրող 106-րդ բանաձևում, որի ընդունումը, բնական է, պիտի վախեցներ Թուրքիային: Ով ով, բայց Թուրքիան անվրեպ վերծանել էր բանաձևի ենթատեքստը, վախեցել բանաձևում թաքնված ռումբից և, ուրեմն, ուրիշ ճար չուներ, քան սպառնալիքը: Բայց նրա սպառնալիքը վախեցածի սպառնալիք է և նրա վախն անհնար է թաքցնել, որքան էլ փորձի դա անել Պենտագոնի ղեկավարը, հայտարարելով, թե՝ «Թուրքիան բլեֆ չի անում»: Այսինքն՝ Թուրքիայի սպառնալիքը իրակա՞ն է, նա կարող է մտնել Իրա՞ք, կարող է նոր կոտորածնե՞ր սարքել, կարող է վնասել ԱՄՆ-ի, աշխարհի անվտանգությա՞նը, կարող է թո՞ւրք դառնալ: «Չեք թողնում Եվրոպա մտնեմ, ես էլ թուրք կմնամ»: Սա իրենց խոսքն է, իրենց տրամաբանությունը:

Բուշն այս տրամաբանությունի՞ց է վախենում: Քիչ հավանական է: Եթե նման տրամաբանությունը հաղթական լիներ, աշխարհը վաղուց թուրքացած կլիներ: Բուշը, կարծում եմ, Թուրքիայի ուժից չի վախենում: Թուրքիայի սպառնալիքի մեջ, հավանաբար, չասված մի այլ բան կա գաղտնագրված, որ Բուշը կարդում է ճիշտ այնպես, ինչպես Թուրքիան է կարդում 106-րդ բանաձևում գաղտնագրվածը: Բուշը (ԱՄՆ-ը) հավանաբար խոստովանության խնդիր ունի: Մեղքի հոտ է գալիս Բուշի պահվածքից: Եվ այդ հոտի պոչից բռնած եթե առաջանանք, գուցե թե հասնենք չարաբաստիկ նույն այդ 1915 թվականը: Եվ Թուրքիան գիտե այդ մեղքի մասին: Եվ նա սպառնում է բացահայտել այդ մեղքը: Եվ Բուշը վախենում է այդ բացահայտումից և ոչ թե Թուրքիայի հոխորտանքից:

Որտե՞ղ էր ԱՄՆ-ը 1915 թվականին: Ինչո՞վ էր զբաղված: Ինչո՞ւ դաշնակիցների հետ չէր: Ինչո՞ւ չկա իր ստորագրությունը դաշնակից պետությունների այն հայտարարության մեջ, որը տեղ է գտել նաև այս՝ 106-րդ բանաձևում: Եվ ինչո՞ւ մատը մատին չէր խփում, երբ ճիշտ իր դեսպանի աչքի առաջ ցեղասպանություն էր իրագործվում: Նախագահական ընտրություններո՞վ էր զբաղված, թե՞ ապագա բարեգործության համար դրամ էր հանգանակում: Շնորհակալ ենք բարեգործության, հազարավոր որբերին խնամելու համար, սակայն ցեղասպանությունը կանխելու դեպքում ո՛չ բարեգործության հոգս կառաջանար և ոչ էլ հազարավոր որբեր ցրիվ կգային աշխարհով մեկ:

106-րդ բանաձևը մերժող Բուշի, ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների, որոշ կոնգրեսականների խոսքում, մերժումը պայմանավորող «ազգային շահ» արտահայտությունը, կարծում եմ, գործել է նաև 1915 թվականին: Ո՞րն է եղել այդ շահը, ես չգիտեմ, միայն գիտեմ, որ «ազգային շահ» հասկացության շատ ու շատ դրսևորումներ, առհասարակ, իրենց անբարոյականությամբ ավերներ գործելով այլոց երկրներում, ի վերջո, բումերանգի բնույթով, գալիս-զարկվում են սեփական երկրի ազգային շահին:

Չեմ կարծում, թե ԱՄՆ-ի ազգային շահից է բխում 106-րդ բանաձևի մերժումը կամ ընդունման հետաձգումը: Չեմ կարծում, թե հնարավոր մեղքի բացահայտումից տուժելու է ԱՄՆ-ի ազգային շահը և կամ հեղինակությունը: Եթե ոչինչ էլ չփոխվի մեղքի բացահայտումից և բանաձևի ընդունումից հետո, գոնե սովորական վեցնոց կդառնա Թուրքիայի թաքուն հաղթաթուղթը, գոնե կանցնի ԱՄՆ-ի հերթական նախագահի այս անհասկանալի վախը:

Թե չէ ինչի նման է, որ երբ մուկը վախենում է կատվից, կատուն շնից, շունը տիրոջից, տերը կնոջից, կինը հանկարծ վախենում է մկից...

Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 10 (187) XVII ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Ամսալուրեր

* * *

Լոնդոնում հրատարակվող անգլիական սոցիալ-դեմոկրատ կուսակցության ամսահանդեսը՝ «The Social-Democrat» անունով, իր հոկտեմբեր 15-ի համարում քաղվածորեն արտատպել է մեր այն զեկուցումը, որ Հ.Յ.Դ. անունից ներկայացրել էինք Շտուտգարդի միջազգ. սոց. համագումարին:

«Սոցիալիզմը սրով», «Socialism by the Sword», այս վերնագիրն է կրում հանդեսի մեզ վերաբերյալ հոդվածը, որ սկսվում է այսպես. ««Խաղաղ միջոցներով՝ եթե հնարավոր է, բռնի միջոցներով՝ եթե անհրաժեշտ է». այս է սոցիալիստ ընթերցողների պատասխանը հաճախակի դրվող այն հարցումին, թե ինչպես են նրանք ուզում հասնել նպատակին: Այդ նույն եզրակացությանն եք գալիս, կարդալով այն զեկուցումը, որ ներկայացրել է Հայ սոցիալիստ-հեղափոխական կուսակցություն Դաշնակցությունը Շտուտգարդի կոնգրեսին: Կա մի անկյուն երկրագնդի վրա, ուր մեր ընկերները չունին իրենց տրամադրության տակ ավելի ազդու զենք, քան սուրը»:

Համակրական շեշտով է անցնում հոդվածագիրը այն բոլոր արհավրալի կռիվների վրայից, որ մեր կազմակերպությունը մղել է Թյուրքիայում եւ Անդրկովկասում՝ թե բռնակալության եւ թե անգիտակից ու վանդեական խուժանների դեմ:

* * *

Սուլթան Համիդ սկսած է թրքական բանտերուն մեջ եւս մտցնել ջարդի սիստեմը: Տրապիզոնի բանտերուն մեջ թյուրք բանտարկյալները դաշույններով զինված կը խուժեն հայ քաղաքական բանտարկյալների խուցերը եւ կիսամեռ կը վիրավորեն 17 հայ բանտարկյալներ, որոնցմե Գուրգեն Սարգիսյան անհույս վիճակի մեջ է, իսկ Իսրայելյան թունավորված:

Մուշի բանտին մեջ այժմ 350 հայ բանտարկյալներ կան:

* * *

Ռուսաստանում Պետական դումայի երրորդ ընտրությունները նոր վերջացան: Ինչպես եւ սպասելի էր, ձախակողմյան եւ նույնիսկ ազատամիտ-սահմանադրական տարրերը պարտություն կրեցին: Հունիսի 3-ի «պետական հարվածը» եւ ընտրողական սիստեմի հեղաշրջումը դուրս նետեցին ընտրություններից աշխատավոր ազգաբնակչությանը եւ ասպարեզ հանեցին

միապետականներին, աջակողմյաններին եւ հոկտեմբերյաններին, որոնք եւ կը կազմեն երրորդ Դումայի մեջ ստվար մեծամասնություն: Հիշենք եւ այն, որ սոցիալիստ-հեղափոխական տարրերը Ռուսաստանում, Լեհաստանում եւ Կովկասում բոյկոտ են արել: Կադետները մի քանի տասնյակ ձայնով, միացած փոքրաթիվ սոց.-դեմոկրատների ու տրուդովիկների հետ՝ կը կազմեն Դումայի ձախակողմը: Այդպիսով, կատարվեց բռնապետության ցանկությունը, կազմվեց մի նոր այլանդակություն, որ կոչված է հլու գործիք լինելու ցարիզմի ձեռքին: Ազատամիտ մամուլի տոնը ընկճված է: Բայց բոլոր օրգաններն էլ խորապես համոզված են, որ նույնիսկ «աջակողմյան-հոկտեմբերյան» Դումայով՝ ցարի կառավարությունը չի կարող վերադառնալ անցյալին:

Քաղաքական տեսություն

Թյուրք-պարսկական վեճը կը շարունակվի. Պարսկաստանը կրավորական դեր մը ունի, մինչ թյուրք զորքերը առաջ կը խաղան Ուրմիո գավառին մեջ: Արդեն սահմանագլխեն 60 կմ ներս մտած են: Պարսկաստանը ոչ ճար ունի, ոչ փող կասեցնելու այդ արշավանքը, իսկ դիվանագիտական միջոցը անզոր է, որովհետեւ ուժ չունի ետեւը: Ռուսիա եւ Անգլիա չեն կրցած ցարդ խոսք հասկըցնել սուլթանին, որ կը տեղավորվի Պարսկաստանի գավառներուն մեկուն մեջ, կամ նոր բացատրությունով՝ «խաղաղ թափանցումի» սկզբունքը կիրագործե: Կարծես ցույց տալու, հակառակ միջազգային սկզբունքին, թե Թյուրքիան, ի հարկին, կարող է ընդարձակվիլ: Թյուրքիան Ատրպատականին չմոտենար, որովհետեւ Ռուսիա հայտարարած է, որ այդ նահանգը իր «ազդեցության շրջանակին» մեջ կիյնա: Ի զուր, Մեճլիսը (խորհրդարանը) կամբաստանե կառավարությունը, որ չը կրնար պաշտպանել երկիրը: Խաները, միրզաները, անողոք ավատականությունը ծծեր են այդ սիրուն երկրի կենսունակությունը:

Համիդ օգտվելով Պարսկաստանի անիշխանական եւ անպաշտպան դրութենեն, նպատակ ունեցած է այդ արշավանքով վախցնել պարսիկները եւ թույլ չը տալ, որ ազատական ռեժիմը հաստատվի իսլամ երկրի մը մեջ: Կը հավաստեն, որ պարսիկ բարձր դասակարգին մեջ սուլթանը մեղսակիցներ ունի եւ նույնիսկ հազարավոր ոսկիներ շռայլած է վիժեցնելու սահմանադրությունը:

Սուլթանի այդ հանդուգն լրբության ետեւ կեցած է Գերմանիան - ինչպես հայկական ջարդերու ատեն - որ Թյուրքիո ձեռքով կուզե իր շահերը դրստել այդ կողմերը եւ խայթոցներ տալ անգլոռուս համաձայնության:

Սակայն պարսիկ ժողովուրդը այդ տագնապին մեջեն առաջ մղեց Սահմանադրական պայքարը եւ հաղթանակեց: Նոր Շահը, ի վերջո, վավերացուց Սահմանադրությունը իր բոլոր հետեվանքներով:

Մեճլիսը ցարդ ցույց տվավ, Պահարիստանի պալատին մեջ, եռանդ եւ գիտակցություն իր երկրի շահերուն: Ռուսական դեսպանին կոպիտ սպառնալիքին տրված պատասխանը Մեճլիսի նախագահին կողմե՝ ցույց կուտա, որ Իրանը իր իրավունքը եւ շահերը գիտե պաշտպանել:

Այժմ Թեհրանի մեջ 47 լրագիր կը հրատարակվի: Կը սիրենք հուսալ, որ Պարսկաստանի ժողովուրդը պիտի անցնի այս պատմական ալեկոծ հրվանդանը եւ պիտի կրնա դուրս վռնդել արյունարբու սուլթանին պաշըպոզուքները եւ պիտի դնե «Կյուլիստանի» երկիրը պարկեշտ աշխատության եւ անմոլեկրոն հառաջադիմության ճամբուն մեջ:

Իրանի վրեժը այդ պիտի ըլլա Եըլդզի ոճրագործներու կառավարութենեն :



Նոր աշխարհակարգը և Հայաստանը



***Լևոն Շիրինյան**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական ակնարկ), «Լուսակն» հրատ., Երևան, 2006, 206 էջ:*

Վերջին քսան տարիները հիրավի կարելի է համարել մեր մոլորակի վրա նոր աշխարհակարգի հաստատման ժամանակաշրջան: Համեմատաբար ոչ մեծ ժամանակահատվածում տեղի ունեցան աշխարհաքաղաքական խորքային փոփոխություններ, որոնք էլ պայմանավորեցին հետերկբևեռ աշխարհակարգի ձևավորումը: Այս գործընթացը չէր կարող շրջանցել մինչ այդ համաշխարհային թատերաբեմում էական դերակատարություն չունեցող հետխորհրդային հանրապետությունները, այդ թվում նաև Հայաստանը, որ գտնվում է թերևս ամենալարված տարածաշրջաններից մեկում՝ Հարավային Կովկասում: Հայաստանն այս հորձանուտում հայտնվեց կորուստներով հարուստ իր անցյալով ու դրանք վերականգնելու, խնդիրները համաեվրոպական ընտանիքում լուծելու ըմբռնումով:

Այս պայմաններում առավել հրատապ են դառնում աշխարհաքաղաքական նոր զարգացումներին ու կողմնորոշումներին վերաբերող աշխատությունները, որոնցից մեկն է Լևոն Շիրինյանի «Նոր աշխարհակարգը և Հայաստանը» մենագրությունը, ուր, ինչպես նշված է գրքույկի ծանոթագրում, առաջին անգամ հայկական գործոնի պատմական էվոլյուցիան, սկսած 1876 թվականից մինչև մեր օրերը, ներկայացվում է եվրաքաղաքականության իրողությունների և ժամանակակից երկրաքաղաքական տեսությունների լույսի ներքո և նրանց համատեքստում:

Աշխատությունը, որ տպագրվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտխորհրդի որոշումով, նախատեսված է ռազմավարության հարցերով հետաքրքրվողների, քաղաքագետների, պատմաբանների, ուսանողների և, առհասարակ, Հայաստանի ճակատագրով մտահոգ ընթերցողի համար:

Հիշատակի պատը



***Հակոբ Սողոմոնյան**, Հիշատակի պատը, Իրանագիտական կովկասյան կենտրոնի հրատ., Երևան, 2006, 104 էջ:*

Աշխարհի տարբեր ծագերում ծնվող ազնիվ հոգիներն անպայման մի օր հանդիպում են: Նրանցից տասնմեկի հանդիպումը Հայաստանում մեր սերունդների հավերժական հերթափոխի ժամադրավայրում է՝ Ծիծեռնակաբերդում, ուր էլ գտնվում է մարդկության պատմության մեջ երևի թե աննախադեպ ու եզակի մի երևույթ՝ Հիշատակի պատը: Հուշաքարեր են ու մի-մի բուռ հող մեր մեծ բարեկամների շիրիմներից՝ ամփոփված Հուշապատի պահարաններում: Այսպես է իր երախտիքն արտահայտել հայ ժողովուրդն այն մարդկանց հանդեպ, ովքեր համընդհանուր աղմուկի մեջ կարողացան լսել մեր ձայնն ու այն լսելի դարձնել ողջ աշխարհին:

Այդ «հանդիպումը» յուրովի է ներկայացված Հակոբ Սողոմոնյանի «Հիշատակի պատը» գրքույկում, որը հեղինակի՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում համանուն խորագրի տակ հրապարակված հոդվածների լրամշակված ժողովածուն է: Ընթերցողը լավ հնարավորություն ունի ծանոթանալու Յոհաննես Լեփսիուսի, Ֆրանց Վերֆելի, Ջեյմս Բրայսի, Հեդվիգ Բյուլի, Բենեդիկտոս 15-րդի, Հենրի Մորգենթաուի, Արմին Վեգների, Անատոլ Ֆրանսի, Ֆայեզ ալ Ղուսեյնի, Ջակոմո Գորրինի և Ֆրիտյոֆ Նանսենի՝ փաստագրական հարուստ նյութի հիման վրա ստեղծված դիմանկարներին, կյանքին ու հայանպաստ գործունեությանը:

Պարզ ու հասկանալի ոճը, ավելորդ երկարաբանությունների բացակայությունը, ասելիքի ընդգրկուն, բայց սեղմ ու հակիրճ բովանդակությունը գրքույկը դարձնում են հանրամատչելի: Գիրքը լավ նվեր է նաև դպրոցի բարձր դասարանների աշակերտներին:

Հրանտ Թադևոսյան



Տկարչի հոգին դեգերում է իրականի և անիրականի առերևույթ սահմանագծում , որտեղ ժամանակի ինքնաբավ հոսքում խմորվում է հայտնության լուսավոր պահը: Լույսը ստվեր չի ծնում այստեղ, այլ համատարած լռության անրջանքի մեջ, որպես ոգեղեն արթնացում,ջինջ ու մաքուր գույն-ղողանջներով ցողում է մեր էությունը:

Եվ ,ակամա,կանգնում, արձանանում ես Գեղեցիկի դիմաց, Հրանտ Թադևոսյանի Գեղեցիկի,որ իր ոգեղեն զորությամբ մաքրամաքուր իր հետքն է թողել աշխարհի շատ երկրներում՝ Ֆրանսիայում,Իտալիայում,Գերմանիայում,Ճապոնիայում,ԱՄՆ-ում,Հոլանդիայում...

Իսկ մեզ համար այդ գեղեցիկը ինքնահաշտեցման մի լուռ վկայություն է, ինքնահաշտեցման մղող՝ որ չգայթակղվենք մեֆիստոֆելյան գինու բաժակից, որ չխոտորվենք մեր հավատի արահետից, ապրենք մեր կանաչ լանջերին ծիածանվող արարման շնչով և ի հիշատակ խեղված,խոշտանգված ծառերի, մի պահ կանգնենք Արարատի տորոտում ծաղկած դեղձենիների տակ ու աղոթքի պես մրմնջանք ապաշխարանքի տակավին չգրված երգեր...

«ԴՐՕՇԱԿ» -ի պատկերասրահ

Երկխոսություն

Դադար

Քնքշանք



Ծաղկած դեղձենին

Անընդհատ շարժում